

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA

Հ. ԱՃԱԹՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵՂՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМЕНИ Р. АЧАРЯНА
H. ACHARYAN INSTITUTE OF LANGUAGE

ԼԵՂՈՒ

ԵՎ

ԼԵՂՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

•

ЯЗЫК И ЯЗЫКОЗНАНИЕ
LANGUAGE AND LINGUISTICS

2 (29)

2023



ԵՐԵՎԱՆ • ЕРЕВАН • YEREVAN

Հանդեսի հիմնադիրն է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի
ինստիտուտը:
Լոյս է տեսնում 2003 թ., տարին երկու անգամ:

Գլխավոր խմբագիր Համբարձումյան Վ. Գ.

խմբագրական խորհուրդ

Ավետիսյան Յու. Ս., Բրուտյան Լ. Գ., Գալստյան Ա. Ս. (գլխավոր խմբագրի տեղակալ), Գալստյան Ա. Վ., Թրագուտ Յ. (Ավստրիա), Խաչատրյան Գ. Կ., Կատվալյան Վ. Լ., Հովհաննիսյան Գ. Ռ., Հովհաննիսյան Լ. Շ., Մոհամմադի Մ. Մ. (Իրան), Մոլոդիչենկո Ե. (ՌԴ), Սարգսյան Մ. Ա. (պատասխանատու քարտուղար), Սիմոնյան Ն. Մ. (գլխավոր խմբագրի տեղակալ), Տոնապետյան-Դեմոպուլոս Ա. (Ֆրանսիա)

Главный редактор Амбарцумян В. Г.

Редакционная коллегия

Аветисян Ю. С., Брутян Л. Г., Галстян А. С. (заместитель главного редактора), Галстян А. В., Катвалян В. Л., Молодниченко Е. (РФ), Мохаммади М. М. (ИРИ), Оанисян Г. Р., Оганесян Л. Ш., Саргсян М. А. (ответственный секретарь), Симонян Н. М. (заместитель главного редактора), Тонапетян-Демопулус (Франция), Трагут Я. (Австрия), Хачатрян Г. К.

Chief Editor Hambardzumyan V. G.

Editorial Board

Avetisyan Yu. S., Brutyan L. G., Galstyan A. S. (deputy chiefeditor), Galstyan A. V., Katvalyan V. L., Molodychenko E. N. (RF), Mohammadi M. M. (Iran), Hovhannisyanyan G. R., Hovhannisyanyan L. Sh., Sargsyan M. A. (editorial secretary), Simonyan N. M. (deputy chiefeditor), Donabédian-Demopoulos A. (France), Tragut J. (Austria), Khachatryan G. K.

ISSN 1829-0183

© Լեզու և լեզվաբանություն

© ՀՀ ԳԱԱ հրատարակչություն 2023

ՀԱՆԴԵՍԻ ԼՈՒՅՍ ԸՆԾԱՅՄԱՆ 20-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Սույն հատորը մեր այս ամսագրի հերթականն է, մի ամսագիր, որ սկիզբ է առել ուղիղ 20 տարի առաջ, այսինքն՝ հրատարակման առումով այն հորելյանական է:

Այդ ընթացքում եղել են ոչ այնքան դժվարություններ, որքան հոգածություն և հետևողականություն ամսագրի գիտական պատշաճ մակարդակի ապահովման համար, իսկ դա, իհարկե, հաջողվել է:

Տարիների ընթացքում, առավելապես կազմակերպական հարցերում եղել են մտահոգություններ: Գոհունակությամբ նշենք, որ ամսագրի կարճ դադարից հետո վերստին տպագրությանը միջամտեց ՀՀ ԳԱԱ հասարակական գիտությունների բաժանմունքը, և այն այսօր շարունակում է լույս տեսնել Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի պայմաններում:

Հայերենագիտությունը, կարելի է ասել, սույն ամսագրի հիմնական մասն է, իսկ առհասարակ լեզվաբանության առանձին ոլորտների վերաբերյալ գիտական տարբեր հետաքրքրությունների հրապարակումն առնչվում է այդ հիմնականին, մեծապես պայմանավորված է նրանով:

«Լեզու և լեզվաբանություն» ամսագիրն ունի իր յուրահատկությունները:

Ամսագրում լույս են տեսնում միայն այն հոդվածները, որոնց հեղինակները պարտադիր ունենում են մասնագիտական համապատասխան որակավորում (գիտության թեկնածու, դոկտոր և այլն):

Ամսագիրը տպագրվում է տարին երկու անգամ պարբերականությամբ, հիմնականում՝ հայերեն, այլև օտար լեզուներով, որոնք ունենում են ամփոփումներ (անոտացիաներ)՝ ռուսերեն և անգլերեն լեզուներով (այլ լեզվով գրված հոդվածների դեպքում՝ հայերեն): Դրանք տպագրության են վերցվում հեղինակների աշխատանքի վայրի (գիտական հաստատության ամբիոնների, բաժինների և այլն) կողմից քննարկված և երաշխավորված լինելու դեպքում: Խմբագրության նախաձեռնությամբ հոդվածները ուղարկվում են գրախոսության կամ գիտական կարծիքի, դրական եզրակացության դեպքում խմբագրական խորհրդի որոշումով կազմակերպվում է տպագրությունը:

Ամսագիրը, ինչպես շատ այլ պարբերականների դեպքում է լինում, ներառում է տարբեր բաժիններ՝ «Հոդվածներ», «Բանավեճ և քննարկում», «Հաղորդումներ», «Գրախոսություն», «Գրքերի տեսություն», «Գիտական կյանք» և այլն: Այսպիսի բաշխումը հիմնականում ելնում է տպագրվող նյութի բովանդակությունից, այլև հոդվածների բնույթից, նրանում տեղ գտած հարցադրումների, տեղեկությունների, հրապարակային գնահատության կարևորությունից:

Տպագրության ներկայացված հոդվածերը և տեղեկատվական (ինֆորմատիվ) մյուս նյութերը ընդունվում են նախատեսված ծավալի սահմաններում՝ առավելագույնը համակարգչային 15 էջ (11 /1,15 շարվածք), բանավիճային հոդվածերը տրվում են լրացուցիչ գրախոսության կամ հեղինակային կարծիքի, և ըստ այդմ՝ դրվում տպագրության:

«Լեզու և լեզվաբանություն» վերտառությամբ ամսագիր ունենալու մտահղացումը եղել է գլխավոր խմբագրինը, իրականացմանը նախանձախնդիր է եղել «Տաթև գիտակրթական համալիրը», որ 2003-2010 թթ. տպագրել է իր իսկ «Ձանգակ 97» հրատարակչության) կողմից (իր միջոցներով): 2014 թ. վերսկսյալ, ինչպես վերը նշեցինք, այն լույս է ընծայում ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը:

Նկատենք նաև այն, որ ամսագիրը միշտ եղել է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թույլատրելի ամսագրերի ցանկում, որպիսով, նաև ըստ այդմ, բարձրանում է տպագրված գիտական հոդվածների վարկանիշը:

Տարիների ընթացքում փոփոխություններ են եղել խմբագրական խորհրդի կազմում, և դա բնական է: Անվանի լեզվաբան Գ. Զահուկյանի հավանությանն արժանացած մեր այս գիտական տպագրականը եկավ իր հնարավորության սահմաններում լրացնելու Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հեղինակավոր, մեծ ավանդույթ ունեցող գործունեությունը, որ սկիզբ էր առել գիտությունների ակադեմիայի հիմնադրումից և շարունակվում է մինչև մեր օրերը՝ միշտ լինելով հայոց լեզվի և հայերենագիտության բնագավառում առաջինը, ասենք՝ իրենով օրինակ հանդիսացող, գիտական այլ հաստատությունների նման գործունեությունը մշտապես ուղղորդող (կոորդինացնող): Ամսագիրը լույս է տեսնում լեզվի ինստիտուտում, բայց այն գիտական պարբերական է ողջ հայերենագիտության համար՝ մայր հայրենիքի և արտերկրի գիտնականների հրապարակումների համար:

Հանդեսի տարբեր տարիների համարների էջերում կան հոդվածներ ոչ միայն հայերեն, ռուսերեն, անգլերեն և այլ լեզուներով տպագրված, այլև տարբեր տարիքի և գիտական վաստակի գիտնականների հեղինակությամբ. դրանք գրված են մեր լեզվի և նրա տարբեր գործառույթների վերհանման և գնահատության նվիրումով:

Անցած տարիներին լույս տեսած հոդվածների և գրախոսությունների մեկտեղման նպատակով նպատակահարմար համարեցինք կազմել մատենագիտական ցանկ՝ դնելու հետագա ուսումնասիրողների տրամադրության տակ: Առ այսօր լույս է տեսել 28 համար (պրակ), ընդհանուր ծավալը՝ 2200-ից ավելի էջ (մոտավորապես 100-102 մամուլ), որ լեզվաբանական գիտության տարածման առումով ոչ պակաս խոսուն իրողություն է, մանավանդ հայերենագիտության բնագավառում: Ամսագիրը տարբեր համարներում պարբերաբար ունեցել է նաև այլ բաժիններ՝ «Գիտական կյանք», «Լրատու», որոնք դուրս են կազմված ցանկից:

Ամսագիրն ունի առանձին խմբագրական խորհուրդ, որում ընդգրկված են ոչ միայն մեր հանրապետությունում, այլև արտերկրում ճանաչված մասնագետներ:

Ինչպես ամեն մի ձեռնարկում, այնպես և սույն ամսագիրը իր ներդրումն է ունեցել և շարունակում է յուրովի նպաստել արդի հայերենագիտության և լայն առումով՝ լեզվաբանական գիտության զարգացման գործին:

Հարկ ենք համարում մեջբերել հանդեսի լույս ընծայման 20-րդ համարի առիթով 2019 թ. ՀՀ ԳԱԱ նախագահ Ռ. Մարտիրոսյանի ուղերձի հետևյալ միտքը. «Վստահ կարող ենք ասել, որ ամսագիրը կայացել է և մինչև օրս էլ շարունակում է բարձր դիրք գրավել գիտական աշխարհում: Ներկայումս հանդեսը մեծ հեղինակություն է վայելում գիտական հանրության շրջանում և շարունակում է տարբերվել լեզվաբանության բնագավառում յուրահատուկ հոդվածներով: Նրա ներդրումը Հայաստանի այսօրվա գիտության զարգացման գործում բավական լուրջ է: Այն բարձր վարկանիշ ունի և Հայաստանում լավագույններից մեկն է: Դա նշանակում է, որ խմբագիրը տիրապետում է գիտական բոլոր չափանիշներին և կարողանում է իրականացնել իր վրա դրված առաքելությունը:

Մենք բարձր ենք գնահատում «Լեզու և լեզվաբանություն» գիտական հանդեսի գլխավոր խմբագրի և խմբագրական կոլեգիայի ազգանվեր գործունեությունը: Մաղթում ենք նորանոր ձեռքբերումներ և հաջո-

դրություններ: Վստահ ենք, որ ապագայում հանդեսը կշարունակի գիտական հանրությանը ներկայացնել Հայաստանի գիտության և կրթության զարգացմանը նպաստող նորանոր հետաքրքիր հոդվածներ» (տես «Լեզու և լեզվաբանություն», 2019, 1[20], 15-3):

Հանդեսը շարունակում է իրականացնել իր վրա դրված առաքելությունը:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

«Լեզու և լեզվաբանություն» հանդեսի

(2003-2023 թթ)¹

Աբաջյան Ա. Հ., Միջին հայերենի ձայնավորական հոլովումը ըստ Յոզեֆ Կարստի, 2005, 1(4), էջ 17-27:

Աբաջյան Ա. Հ., Մանուկ Աբեղյանը բառարանագիր, 2018, 1(20), էջ 22-30:

Աբաջյան Ա. Հ., Յուզբաջյան Ա. Լ., Դարձվածային միավորների գործածությունը Թադևոս Առաքյալի «Վկայաբանություն» և «Գյուտ նըը-խարաց» երկերում, 2020, 1 (22), էջ 49-57:

Աբրահամյան Կ. Շ., Անգլերենի նախածանցավոր բայերը միջկարգային բայական ածանցման համակարգում (ռուսերենի և հայերենի զուգադրությամբ), 2005, 1(4), էջ 69-72:

Աբրահամյան Կ. Շ, Վեյյան Կ. Ա., Անգլերեն և հայերեն հանպատրաստից խոսքի ընդհատումների մի քանի պատճառների մասին, 2020, 1(22), էջ 5-13:

Ադամյան Վ. Ա., Խնդրանքի խոսքային ակտը Լ. Ն. Տոլստոյի «Աննա Կարենինա» վեպում, 2023, 1 (28), էջ 49-54:

Առաքելյան Ս., Բանաձևային խոսքը երկրորդ լեզվում. խոսքային բանաձևերի կարևորությունը երկրորդ լեզվում, 2005, 1(4), էջ 58-68:

Ասիրբեկյան Շ. Հ., Ժամանակակից հայերենի ստորոգյալի բաղադրիչների շարադասությունը, 2009, 2(11), էջ 29-35:

Ասոյան Թ. Ա., (Գրախոս.), Հին հարցադրման նոր լուծում, 2006, 1-2 (6-7), էջ 85-86:

Ասոյան Թ. Ա., (Գրախոս.), Հայ բառարանագրության պատմությանը նվիրված նոր գիրք, 2016, 1 (14), էջ 78-83:

Ասոյան Թ. Ա., (Գրախոս.), Հայերենի բարբառներին նվիրված ուշագրավ ուսումնասիրություն, 2021, 1 (24), էջ 75-78:

Ասրվաձադրյան Մ. Գ., Պեպրոսյան Շ. Բ., Բառածանցումը որպես ածանցավոր մոդելների ընտրության և դասակարգման հիմք ժամանակակից գերմաներենում, 2023, 1 (28), էջ 18-24:

¹ Ներառված են միայն *հոդվածներ, բանավեճ և քննարկում, հաղորդումներ և գրախոսություններ* բաժինների նյութերը:

Ավագիմյան Ա., Իրանշուրթամբ օժտված չեզոք սեռի բայեր, 2005, 1 (4), էջ 50-57:

Ավերիսյան Լ. Ն., Գրաբարի անվանական կայուն կապակցությունների տարբերակները, 2014, 1-2 (12), էջ 35-43:

Ավերիսյան Լ. Ն., Հաղորդակցական կայուն կապակցությունների իմաստային խմբերը գրաբարում, 2017, 1 (16), էջ 49-56:

Ավերիսյան Լ. Ն., Քրիստոնեական վարդապետությանն առնչվող հատկանշային կայուն կապակցությունների իմաստաբանությունը գրաբարում, 2018, 1 (18), էջ 36-47:

Ավերիսյան Լ. Ն., Քրիստոնեական վարդապետությանն առնչվող բայական կայուն կապակցությունների իմաստային առանձնահատկությունները գրաբարում, 2020, 1 (22), էջ 58-69:

Ավերիսյան Կ., Նախադասության հաղորդակցական-հնչերանգային տիպերի կառուցվածքային և իմաստային առանձնահատկությունները ժամանակակից հայերենում, 2009, 1 (10), էջ 14-21:

Ավերիսյան Յու. Ա., Գրական արևելահայերենի և արևմտահայերենի շարահյուսական գուգաբանությունները, 2006, 1-2 (6), էջ 25-36:

Ավերիսյան Յու. Ա., Դերանվան ուսուցման հիմնախնդիրները գրական արևելահայերենում, 2021, 1 (24), էջ 23-32:

Ավերիսյան Տ. Մ., Հայկական ազգանունների կառուցվածքը, 2004, 1-2 (3), էջ 19-26:

Ավերյան Ա. Ռ., Հին հայերենի *իւն/եան* հերթագայության ծագմանաբանական քննության նոր փորձ, 2003, 1 (1), էջ 51-58:

Ավերյան Ա. Ռ., Նշույթավորվածության և կիրառահաճախականության փոխհարաբերության ըմբռնումը արդի լեզվաբանության մեջ, 2019, 1 (20), էջ 38-48:

Ավերյան Ա. Ռ., Լեզվաբանական տիպաբանության զարգացման հիմնական փուլերը, 2019, 2 (21), էջ 50-61:

Արաբյան Ա., Անդրադարձ և միջին կրավորականի իմաստային և շարահյուսական առանձնահատկությունները ժամանակակից գերմաներենում, 2009, 1 (10), էջ 51-57:

Բաղդադյան Մ. Ռ., Անձի հատկանիշ արտահայտող ածականական դարձվածքների կառուցվածքային տիպերը և քերականական առանձնահատկությունները հայերենում, ռուսերենում և անգլերենում, 2019, 1 (20), էջ 72-83:

Քաղաղյան Մ Ռ., Անձի հատկանիշ արտահայտող բայական դարձվածային միավորների կառուցվածքային տիպերը հայերենում, ռուսերենում և անգլերենում, 2020, 1 (22), էջ 70-77:

Քարլեզիզյան Ա. Կ., Իմաստային պատճենման էությունը և նրա տարբերությունը իմաստային փոխառությունից, 2004, 1-2 (3), էջ 3-8:

Քարլեզիզյան Ա. Կ., Բառափմաստային պատճենումների յուրացումը լեզվամշակութային նոր միջավայրում, 2009, 1 (10), էջ 10-13:

Քարլեզիզյան Ա. Կ., Ֆրանսերեն դարձվածքների հայերեն թարգմանության մասին, 2018, 2 (19), էջ 17-24:

Քարխուդարյան Հ. Վ., Զբաղմունքի անվանումից սերված ազգանվանակերտ հիմքեր, 2008, 2 (9), էջ 66-75:

Քարսեղյան Ա. Գ., Վերաբերմունք արտահայտող բառերի կապակցական դերը տեքստում, 2017, 1(16), էջ 65-71:

Քարսեղյան Ա. Գ., Ոչ նյութական իմաստ ունեցող խոսքի մասի կապակցական դերը տեքստում, 2018, 1 (18), էջ 68-73:

Քարսեղյան Ա. Գ., Խոսքի տրամաբանական կապը Թումանյանի քառյակներում, 2019, 2 (21), էջ 62-69:

Քարսեղյան Ա. Գ., Տեքստի կապակցման միջոցների գործածությունը հուշագրության մեջ, 2021, 1(24), էջ 33-43:

Քիչակջյան Բ. Հ., Կրկնությունները և ձևաբանության զարգացումը, 2003, 1 (1), էջ 59-74:

Քոլոնիեզի Ջ., Հայերեն մի բնագրի մեկնաբանման և բնագրային վերլուծության մի խնդրի մասին, 2009, 1 (10), էջ 3-9:

Քրուդյան Լ. Գ., Հաճոյախոսության խոսքային ակտի վերլուծություն, 2016, 2, (15), էջ 3-9:

Քրուդյան Լ. Գ., Դավիթ Անհաղթը լեզվաբան, 2017, 2 (17), էջ 3-9:

Քրուդյան Լ. Գ., «Ինչպե՞ս եք (ես)». որպիսության մասին խոսողական ակտը միջմշակութային հաղորդակցման համատեքստում, 2018, 2 (19), էջ 25-33:

Քրուդյան Լ. Գ., Հաճոյախոսությունները միջմշակութային հաղորդակցման համատեքստում, 2022, 2 (27), էջ 32-41:

Քազինյան Ա. Ռ., Հայերեն-շումերերեն առնչություններն ըստ Յոզեֆ Կարստի «ալարոդյան» տեսության, 2003, 1 (1), էջ 44-50:

Գագինյան Ա. Ռ., Հին հայերենի սեռական հոլովով անցյալ դերբայի կառուցի ծագման խնդիրը լեզվաբանության մեջ, 2006, 1-2 (6), էջ 37-45:

Գագինյան Ա. Ռ., Անցյալ և անորոշ դերբայների քերականացման ուղիները հին հայերենում, 2007, 1-2 (7), էջ 25-32:

Գագինյան Ա. Ռ., Ինֆինիտիվի զարգացման մի քանի միտումներ գերմաներենում և հայերենում, 2009, 2 (11), էջ 3-9:

Գալոյան Թ., Անգլերեն ցուցային բառերի գործածության առանձնահատկությունները անուղղակի խոսքում, 2009, 1 (10), էջ 70-74:

Գալստյան Ա. Ս., (Գրախոս.), Թատերագիտական տերմինների ուշագրավ ուսումնասիրություն, 2008, 1 (8), էջ 83:

Գալստյան Ա. Ս., Նորակազմ բառերը արդի հայերենի բառապաշարում, 2021, 1 (24), էջ 44-51:

Գալստյան Ա. Ս., Նորակազմ բառերի իմաստաբանական քննության հարցեր, 2021, 2 (25), էջ 3-11:

Գալստյան Ա. Ս., Արդի հայերենի նորակազմ բառերի իմաստային-կառուցվածքային վերլուծության հարցեր, 2022, 1 (26), էջ 48-55:

Գալստյան Ա. Վ., Հայ գեղարվեստական վավերագրության ժանրը և նրա բնութագրման փորձերը գիտական գրականության մեջ, 2016, 2 (15), էջ 32-39:

Գալստյան Ա. Վ., Թատերական հուշերի լեզվակառուցվածքային հիմքերը, 2018, 1, (18), էջ 18-30:

Գալստյան Ա. Վ., Երկխոսության դրսևորումները գեղարվեստական վավերագրության լեզվում, 2019, 1 (20), էջ 16-21:

Գալստյան Ա. Վ., Գեղարվեստավավերագրական բնագրերի բառապաշարի բառակազմական կաղապարները, 2020, 2 (23), էջ 46-61:

Գալստյան Ա. Վ., (Գրախոս.), Գիտական հոդվածների ժողովածու՝ նվիրված Ս. Գ. Աբրահամյանի ծննդյան 100-ամյակին, 2020, 2 (23), էջ 87-89:

Գալստյան Ա. Վ., Ակսել Բակունցի «Խաչատուր Աբովյան» վեպի լեզվաոճական մի քանի հարցեր, 2021, 2 (25), էջ 12-18:

Գալստյան Ա. Վ., Նոր շրջանի նամականու լեզվաբանական առանձնահատկությունների մասին, 2022, 2 (27), էջ 8-16:

Գալստյան Ա. Վ., Մալխասյան Է., Սիլվա Կապուտիկյանի հրապարակախոսության լեզուն, 2023, 1 (28), էջ 25-33:

Գալստյան Հ. Ա., Սի քանի նկատառում -ավեր ածանցի վերաբերյալ, 2008, 1 (8), էջ 18-22:

Գասպարյան Ն. Հ., Անդրադարձ բայերով ռուսերեն նախադասությունները և նրանց արտահայտման ձևերը անգլերենում, 2008, 1 (8), էջ 30-36:

Գյուլզարյան Դ. Վ., Եղանակայնության և բայի եղանակի կարգերի հարաբերակցությունը (տիպաբանության ուրվագիծ), 2017, 1 (16), էջ 26-36:

Գյուլզարյան Դ. Վ., Հայացք առ լեզվական հորինվածքների կառուցատիպեր (փոփոխակային հարաժամանակյա համայնալեզվաբանության հարցեր), 2020, 2 (23), էջ 8-21:

Գյուրջինյան Դ. Ս., (Գրախոս.), Ուշագրավ ստուգաբանություն, 2003, 1 (1), էջ 85-86:

Գրիգորյան Գ. Գ., Գրաբարից ավանդված հնչյունափոխությունները արդի գրական արևելահայերենում (Մաս Ա. հոլովումից չկախված հնչյունափոխությունները), 2008, 1 (8), էջ 60 – 66:

Գրիգորյան Գ. Գ., «Արմաթ» ինժեներական լաբորատորիաները որպես հայկական գիտակրթական ապրանքանիշ և հաղորդակցության նոր հարթակ, 2019, 1 (20), էջ 57-64:

Գրիգորյան Գ. Գ., Հնչերանգը չորս բնույթի նախադասություններում հայերենի, ռուսերենի, անգլերենի համեմատությամբ (փորձառական հետազոտություն), 2019, 2 (21), էջ 78-85:

Գրիգորյան Գ. Գ., Խոսակցական լեզվում գալ, փալ, լալ բայերի ձևերի ս-ի անկման պատճառների մասին, 2021, 2 (25), էջ 77-84:

Գրիգորյան Գ. Գ., Բաղաձայնի ազդեցությունը ձայնավորի վրա բաղաձայն-ձայնավոր կապակցություններում (փորձառական հետազոտություն), 2022, 1 (26), էջ 56-62:

Գրիգորյան Գ. Գ., Հայերենի ուժգնության և տևողության փոփոխությունները խոսքի տարբեր ոճերում, 2023, 1 (28), էջ 71-79:

Գրիգորյան Գ. Ս., Ջաքարյան Օ., Անգլերենի բառապաշարի դասավանդումը նպատակային-թեմատիկ միջոցներով (իրավաբանական ոլորտի օրինակով), 2020, 2 (23), էջ 62-73:

Գրիգորյան Ս. Ս., Թարգմանչական հնարների կիրառությունը Արթուր Ռեմբոյի «Սի եղանակ դժոխքում» ժողովածուի հայերեն թարգմանության մեջ, 2007, 1-2 (7), էջ 52-58:

Գրիգորյան Ս. Մ., Ջգայական ընկալման բառերի ոճական արժեքը Պարույր Սևակի չափաճոյում, 2009, 2 (11), էջ 10-18:

Գրիգորյան Ս., Գոյականի լրացումները որպես նախադասության երկրորդական անդամներ հայերենում և ֆրանսերենում, 2008, 1 (8), էջ 67-76:

Գևորգյան Շ. Ս., Ժամանակակից հայերենի անցյալ կատարյալի և վաղակատարի իմաստային տարբերությունները, 2016, 1 (14), էջ 50-56:

Գևորգյան Ռ., Կրկնությունը որպես կարճ դետեկտիվ պատմվածքի միջտեքստային կապի ստեղծման միջոց, 2008, 1 (8), էջ 42-46:

Դոխոյան Ռ. Յ., (Գրախոս.). Լ. Շ. Հովհաննիսյանի «Բառերի մեկնությունները հինգերորդ դարի հայ մատենագրության մեջ» գիրքը (Ե., 2016), 2016, 2 (15), էջ 81-84:

Դոխոյան Ռ. Յ., Հոմանշության դրսևորումները արդի հայերենի խոսքային գործունեության իմաստային ենթադաշտում, 2018, 1 (18), էջ 48-57:

Զաքարյան Հ. Լ., Քմայնացումը արդի գրական հայերենում. պատճառներ և հետևանքներ, 2006, 1-2 (6), էջ 69-74:

Զաքյան Հ. Ս., Արդի հայերենի կրկնասեռ բայերը, 2017, 1 (16), էջ 72-79:

Զաքյան Հ. Ս., Արդի հայերենի կրկնասեռ բայական նորաբանությունները, 2018, 1 (18), էջ 82-93:

Թադևոսյան Հ. Մ., Պարսկական փոխառություններ «Գիրք Վաստակոց» երկում, 2007, 1-2 (7), էջ 74-77:

Թամրազյան Հ., Լեզվի յուրացման տեսությունները, 2007, 1-2 (7), էջ 59-66:

Թեյլան Լ. Գ., «Հայերենի թևավոր խոսքեր» բառարանը, 2008, 2 (9), էջ 86-87:

Թեյլան Լ. Գ., Որ. շաղկա՛ս, թե՛ դերանուն, 2016, 2 (15), էջ 23-31:

Թեյլան Լ. Գ., Դիտարկումներ արդի հայերենի լեզվական նորմի վերաբերյալ. շարահյուսական նորմ, 2019, 1 (20), էջ 9-15:

Թեյլան Լ. Գ., Շարահյուսագիտական մի քանի դիտարկում, 2020, 1 (22), էջ 39-48:

Թեյլան Լ. Գ., Արդի հայերենի նորմը և հեռուստատեսության լեզուն, 2021, 1 (24), էջ 52-61:

Թեյյան Լ. Գ., Շարահյուսական միավորների և կապակցության եղանակների հարաբերակցության շուրջ, 2022, 1 (26), էջ 63-76:

Թոխմահյան Ռ. Մ., Թվի քերականական կարգի հոգնակիության դրսևորումը հայերենում. հավաքական գոյականներ, 2019, 2 (21), էջ 3-8:

Թոսունյան Գ. Բ., Նորայր Բյուզանդացին բառարանագիր, 2005, 1 (4), էջ 9-16:

Թովմասյան Հ. Գ., Տեքստի ներկապակցումը և ամբողջականությունը կանխենթադրույթային հենքի միջոցով, 2016, 2 (15), էջ 61-67:

Թորգոմյան Ա., Պերֆեկտը ժամանակակից հայերենում և անգլերենում, 2008, 1 (8), էջ 56-59:

Խանոյան Ն. Ս., Անգլերենի one's way և գերմաներենի անդրադարձ դերանունով կառույցների առանձնահատկությունները, 2009, 1 (10), էջ 37-44:

Խաչատրյան Ա. Ս., ժամանակակից հայերենի բաղադրական հիմքերի տարբերակային ձևերը, 2009, 1 (10), էջ 75-81:

Խաչատրյան Ա. Ս., Բայահիմքերի բառակազմական արժեքը արևմտահայերենում, 2016, 2 (15), էջ 68-73:

Խաչատրյան Ա. Ս., Արևմտահայերենի նորակազմությունների բառակազմական որոշ առանձնահատկությունների մասին, 2021, 2 (25), էջ 44-53:

Խաչատրյան Գ. Կ., Գրաբարի կրկնասեռ բայերը, 2004, 1-2 (3), էջ 34-44:

Խաչատրյան Գ. Կ., Կոչականը ժամանակակից հայերենում, 2006, 1-2 (6), էջ 3-24:

Խաչատրյան Գ. Կ., Կոչականառությունը որպես բայի արժույթի արտահայտություն ժամանակակից հայերենում, 2016, 1 (14), էջ 5-17:

Խաչատրյան Գ. Կ., Միջին հայերենի մեջբերվող անորոշ դիմավոր և ընդհանրական դիմավոր միակազմ նախադասությունների քննություն, 2023, 1 (28), էջ 34-48:

Խաչատրյան Հ. Ռ., Համշենի բարբառին նվիրված ուշագրավ ուսումնասիրություն, 2023, 1 (28), էջ 97-101:

Խաչատրյան Ն., Տեղական լեզուների և սոցիոմշակույթի ազդեցության մասին Հնդկաստանում անգլերենի լեզվական առանձնահատկությունների ձևավորման վրա, 2008, 1 (8), էջ 37-41:

Խաչատրյան Վ. Մ., Բառերի հնչյունական տարբերակներ Ղազար Փարպեցու երկերում, 2006, 1-2 (6), էջ 75-84:

Խաչատրյան Վ. Մ., (Գրախոս.), Հայոց լեզվի պատմության հարցեր, 2021, 2 (25), էջ 108-111:

Խաչատրյան Վ. Մ., (Գրախոս.), Մ. Սարգսյան, Լեզվաբանության տեսության հարցեր (Ե., 2021, 166 էջ), 2022, 1 (26), էջ 97-101:

Կարվալյան Վ. Լ., Բայազետի բարբառի հնչյունաբանական առընչությունները պատմաաշխարհագրական առումով մերձավոր բարբառների հետ, 2003, 1 (1), էջ 33-38:

Կարվալյան Վ. Լ., Մի քանի նկատառում արդի հայերենի որոշյալ դերանունների վերաբերյալ, 2004, 1-2 (3), էջ 75-83:

Կարվալյան Վ. Լ., (Գրախոս.), Նոր մեթոդիկայով գրված ձեռնարկ, 2005, 1 (5), էջ 89-90:

Կարվալյան Վ. Լ., Գոյականի հոգնակի թվի կազմությունը Բայազետի բարբառում, 2007, 1-2 (7), էջ 3-14:

Կարվալյան Վ. Լ., Հայ բարբառների ուսումնասիրության մի քանի հարցերի շուրջ, 2008, 2 (9), էջ 7-14:

Կարվալյան Վ. Լ., Արևմտահայերենի արդի վիճակը Սիրիայի հայ համայնքում, 2014, 1-2 (12), էջ 22-27:

Կարվալյան Վ. Լ., Բայազետի և պատմաաշխարհագրորեն մերձավոր բարբառների բառային հիմնական տարբերությունները և ընդհանրությունները, 2016, 1 (14), էջ 18-30:

Կարվալյան Վ. Լ., Բարբառի աբեղյանական ըմբռնման մասին, 2017, 2 (17), էջ 10-14:

Կարաբեկյան Ս. Բ., (Գրախոս.), Ս. Ա. Միքայելյան, Անտիոքի հայերեն բարբառախմբի արաբական փոխառությունները (Ե., 2018, 284 էջ), 2018, 2 (19), էջ 86-87:

Կարապետյան Ս. Հ., Հայերենի և անգլերենի բարդ բառերի բաղադրիչների խոսքիմասային պատկանելության որոշման դժվարությունները, 2018, 1 (8), էջ 74-81:

Կիրակոսյան Հ. Յ., Մարդու մարմնի մաս նշանակող բառանվանումներով կազմված տեղանունները իրանական լեզուներում, 2017, 2 (17), էջ 15-26:

Կորյուանդար Ֆ., Հայերեն ձայնածերպայնացումը վերանայված է (Հոդված 1): Նախահնդեվրոպական ձայնածերպային բաղաձայններ. վերանայված ապացույցներ (Հոդված 2), 2016, 1 (14), էջ 66-77:

Հախվերդյան Ս. Գ., Գորիս տեղանվան ստուգաբանության հարցի շուրջ, 2008, 1 (8), էջ 47-51:

Հախվերդյան Ս. Գ., Քումունց Մ. Ս., Ստ. Օրբելյանի հիշատակած մի քանի տեղանունների ստուգաբանության և տեղադրության հարցեր, 2006, 1-2 (6), էջ 63-68:

Հակոբյան Ա., Թարգմանչական արվեստի գնահատման օբյեկտիվ չափանիշները, 2014, 1-2 (12), էջ 44-50:

Հակոբյան Ֆ. Ա., Հայատառ հաղորդակցման խնդիրները համացանցում, 2017, 2 (17), էջ 61-67:

Համբարձումյան Ս. Վ., Մի քանի նկատառում գրողի լեզվի բառապաշարի և հեղինակային բառերի վերաբերյալ, 2007, 1-2 (7), էջ 48-51:

Համբարձումյան Ս. Վ., Ս. Կապուտիկյանի «Երկխոսություն իմ և իմ միջև» պոեմում գործածված նոր բառերի մասին, 2017, 2 (17), էջ 49-54:

Համբարձումյան Վ. Գ., Հնդեվրոպական ծագման հայերեն արմատի տարբերակային վերականգնման և տիպաբանական վերլուծության խնդիրները, 2003, 1 (1), էջ 39-43:

Համբարձումյան Վ. Գ., Հայերեն *աղջիկ* բառի ստուգաբանությունը, 2005, 1 (4), էջ 5-8:

Համբարձումյան Վ. Գ., Հայ. կայթ և հիեր. լուվ. gati, 2006, 1-2 (6), էջ 46-47:

Համբարձումյան Վ. Գ., Կիլիկիայի բարբառի ուսումնասիրության ձեռքբերումները և արդի խնդիրները, 2008, 1 (8), էջ 23-29:

Համբարձումյան Վ. Գ., (Գրախոս.), Ա. Ս. Գալստյան Փոխաբերացման հոգելեզ-վաբանական վերլուծություն, ԵՊՀ հրա, 2008, 116 էջ. – 2008, 2 (9), էջ 83-85:

Համբարձումյան Վ. Գ., (Գրախոս.), Արդի հայ բառարանագրության մի նոր ձեռքբերում, 2009, 2 (11), էջ 91-93:

Համբարձումյան Վ. Գ., Լատինաբան ձևերի գործածություն Երեմիա Մեղրեցու «Բառգիրք հայոց»-ում, 2014, 1-2 (12), էջ 15-21:

Համբարձումյան Վ. Գ., (Գրախոս.), Լ. Շ. Հովհաննիսյան, Հատուկ անունների մեկնությունները Մովսես Խորենացու «Հայոց պատմության»

մեջ, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, 48 էջ: - 2014, 1-2 (12), էջ 51-53:

Համբարձումյան Վ. Գ., Հայ-կելտական բառային զուգաբանությունների հարցի շուրջ, 2015, 1-2 (13), էջ 15-22:

Համբարձումյան Վ. Գ., (Գրախոս.). «Արևմտահայերենի արդի վիճակը Սիրիայի հայ համայնքում», Ե., 2015, 78 էջ: - 2015, 1-2 (13), էջ 79-84:

Համբարձումյան Վ. Գ., (Գրախոս.), Բարբառագիտական նոր տիպի ուսումնասիրություն՝ նույն հիմքով գրական լեզվի և նույն ճյուղի բարբառների առնչությամբ, 2016, 1 (14), էջ 83-85:

Համբարձումյան Վ. Գ., Հայերեն *եղեռն* բառի ծագումը և տիպաբանությունը, 2016, 1 (14), էջ 40-49:

Համբարձումյան Վ. Գ., Հայերենագիտության Մխիթարյան դըպրոցը և հայերենի համեմատական ուսումնասիրության սկզբնավորումը, 2017, 1 (16), էջ 3-13:

Համբարձումյան Վ. Գ., Ստուգաբանություններ. *արտորալ* «շտապել. փութալ», *արտոյտ* «արտույտ (թռչուն)», 2018, 1 (18), էջ 3-10:

Համբարձումյան Վ. Գ., Ստուգաբանական դիտարկումներ, 2018, 2 (19), էջ 41-46:

Համբարձումյան Վ. Գ., Ստուգաբանական դիտարկումներ, 2020, 1 (22), էջ 78-91:

Համբարձումյան Վ. Գ., Հայերենի ուսումնասիրության հարցեր «Բազմավեպ» հանդեսի էջերում (1843-1893 թթ.), 2020, 2 (23), էջ 74-86:

Համբարձումյան Վ. Գ., Բառաքնական և ստուգաբանական դիտարկումներ, 2021, 1 (24), էջ 4-14:

Համբարձումյան Վ. Գ., Ստուգաբանական դիտարկումներ, 2021, 2, (25), էջ 27-43:

Համբարձումյան Վ. Գ., Հայերեն ստուգաբանություններ, 2022, 2 (27), էջ 3-7:

Համբարձումյան Վ. Գ., Բաղդամյան Ս. Ե., Խաչիբաբյան Ն. Պ., Սեռանիշ ածանցների արտահայտությունը հայերենում, 2021, 2 (25), էջ 68-76:

Հայրապետյան Լ., Բարդ ստորադասական նախադասությունների և նրանց խնդրային կապակցությունների ուսումնասիրությունը հայ քերականագիտության մեջ, 2009, 2 (11), էջ 67-75:

Հարությունյան Կ., Լեզվական երևույթների համակարգային կառուցվածքի դաշտային սկզբունքի հայեցակարգի որոշ առանձնահատկությունների շուրջ, 2005, 1(4), էջ 37-43:

Հարությունյան Ք., Գունանունները և լեզվական իրականությունը, 2006, 1-2 (6), էջ 53-57:

Հովհաննիսյան Գ. Ռ., ճանաչողական լեզվաբանության զարգացման գիտական նախադրյալները Հայաստանում, 2003, 1 (1), էջ 27-32:

Հովհաննիսյան Գ. Ռ., Ղազարյան, Է. Հ., Բառ. իմաստ և նշանակություն, 2004, 1-2 (3), էջ 27-33:

Հովհաննիսյան Լ. Շ., Տարի հասկացության արտահայտությունը հին հայերենում, 2003, 1 (1), էջ 20-26:

Հովհաննիսյան Լ. Շ., Մարդու տարիքային անվանումները գրաբարում, 2004, 1-2 (3), էջ 9-18:

Հովհաննիսյան Լ. Շ., (Գրախոս.), Հայերենի բարբառներին նվիրված նոր ուսումնասիրություն, 2009, 2 (11), էջ 94-95:

Հովհաննիսյան Լ. Շ., Գրաբարի «խաղող» և «գինի» բառերի շուրջ, 2014, 1-2 (12), էջ 4-9:

Հովհաննիսյան Լ. Շ., Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց»-ի լեզվի մի քանի առանձնահատկությունների շուրջ (բնագիր և թարգմանություն), 2015, 1-2 (13), էջ 5-14:

Հովհաննիսյան Ս. Գ., Անհատական լեզվաշխարհի շերտային դրսևորումները (ըստ Էդ.Աթայանի՝ մարդկության կյանքի մակրոփուլերի տեսության), 2022, 1 (26), էջ 11-20:

Հովհաննիսյան Օ., Փոխակերպական կաղապարների սահմանման և դասակարգման խնդիրները, 2006, 1-2 (6), էջ 48-52:

Հովհաննիսյան Օ., Փոխակերպական քերականությունը որպես թարգմանաբանության մեջ փոխակերպական կաղապարի ձևավորման հիմք, 2008, 1 (8), էջ 52-55:

Հովհաննիսյան Ֆ. Մ., Անհոգնականներն իտալերենում, հայերենում և անգլերենում, 2006, 1-2 (6), էջ 58-62:

Հովհաննիսյան Ֆ. Մ., Միջուկային և եզրային քերականական կարգերը իտալերենում և անգլերենում, 2009, 2 (11), էջ 76-81:

Ղազարյան Հ. Զ., Նկատառումներ *զլուխ, սիրտ* և *աչք* բաղադրիչներով զայրույթ, դժգոհություն և հանդիմանություն արտահայտող

դարձվածային միավորների իմաստային դաշտի վերաբերյալ, 2007, 1-2 (7), էջ 15-24:

Ղազարյան Հ. Ջ., *Գլուխ, աչք և սիրտ* բաղադրիչներով դարձվածային միավորների իմաստային առանձնահատկությունները հայերենում, ռուսերենում և անգլերենում, 2009, 1 (10), էջ 58-65:

Ղազարյան Հ. Ջ., Հայերենի, ռուսերենի և անգլերենի «աչք» բաղադրիչով զգայություն արտահայտող դարձվածքների իմաստային դաշտը, 2017, 2 (17), էջ 27-42:

Ղազարյան Հ. Ջ., Շրջասության ոճական հնարով ձևավորված դարձվածքները հայերենում, ռուսերենում և անգլերենում, 2018, 2 (19), էջ 62-70:

Ղազարյան Հ. Ջ., «Ընկալում, կարծիք, վերաբերմունք» արտահայտող դարձվածքները հայերենում, ռուսերենում և անգլերենում, 2022, 2 (27), էջ 17-31:

Ղազարյան Մ. Ս., Հունարեն և ֆրանսերեն փոխառությունները միջին հայերենում, 2008, 1 (8), էջ 10-17:

Ղամոյան Լ. Ա., Բառաբարդմամբ կազմված նորաբանությունները Ռազմիկ Դավոյանի չափաձոյում, 2005 1(4), էջ 44-49:

Ղամոյան Լ. Ա., Հագուստ իմաստային խմբի դրսևորումը արդի հայերենի դարձվածային միավորներում, 2016, 2 (15), էջ 74-80:

Ղամոյան Լ. Ա., «Ոտնաման» հասկացությունը արդի գրական հայերենում և բարբառներում, 2019, 1 (20), էջ 49-56:

Ղամոյան Լ. Ա., Բազմիմաստությունը «հագուստ» իմաստային (թեմատիկ) խմբում, 2021, 2 (25), էջ 85-92:

Ղարսյան Ա. Ռ., Արդի հայերենի տնտեսագիտական փոխառյալ տերմինների գործառական բնութագիրը, 2022, 2 (27), էջ 54-69:

Մաթևոսյան Ն., Կրավորակերպ բայական կառույցներ, 2009, 2 (11), էջ 82-90:

Մանուկյան Ն. Հ., «Առասպելական ես-ի» իմաստաստեղծ գործառույթը (հայ ժողովրդական բանահյուսական նյութի հիման վրա), 2004, 1-2 (3), էջ 69-74:

Մանուկյան Ն. Հ., Նշանակցումային շեղումները բանաստեղծական թարգմանության մեջ, 2008, 2(9), էջ 15-20:

Մանուչարյան Ս. Ս., Հարակատար դերբայը հայերենի բարբառներում, 2009, 2 (11), էջ 36-46:

Մանուչարյան Ս. Ս., Գուսան Աշոտի տաղերի բարբառային նյութի քննություն, 2018, 2 (19), էջ 71-82:

Մարտիրոսյան Ա. Ռ., (Գրախոս.), Հայերենի երկու նոր բառարանի մասին, 2003, 1 (1), էջ 81-84:

Մարտիրոսյան Ա. Ռ., Բառափմաստային համակարգի զարգացման ըմբռնումը լեզվաբանական ուսմունքներում, 2020, 1 (22), էջ 25-38:

Մեղրոնյան Հ. Ա., «Հեղինակային հատկանունը» Եղիշե Չարենցի չափաձոյում, 2019, 2 (21), էջ 70-77:

Մեսրոպյան Հ. Հ., Հայերենի բարբառների բառապաշարի կրոնատեղեղեցական բառաշերտի առանձնացման մի քանի սկզբունքների մասին, 2016, 1 (14), էջ 31-39:

Մեսրոպյան Հ. Հ., *Խունկ* հասկացության անվանումները հայերենի բարբառներում, 2020, 1 (22), էջ 14-24:

Մեսրոպյան Հ. Հ., Սյունիքի մարզի բարբառային ընդհանուր պատկերը, 2020, 2 (23), էջ 29-38:

Մեսրոպյան Հ. Հ., «Մահ» հասկացության բարբառային բառաշերտի ընդհանուր բնութագիրը, 2022, 1 (26), էջ 21-32:

Միրզոյան Է. Զ., Արևմտահայերենի և թուրքերենի լեզվական առնչությունների շուրջ, 2022, 1 (26), էջ 33-47:

Միրջայեղյան Ս. Մ., Միջին հայերենի շրջանում կատարված արաբական փոխառությունների բաղաձայնական համակարգը, 2017, 1 (16), էջ 37-48:

Միրջայեղյան Ս. Ա., Ձևաբանական և բառակազմական դիտարկումներ միջին հայերենի արաբական փոխառությունների վերաբերյալ, 2018, 2 (19), էջ 34-40:

Միրջայեղյան Ս. Ա., Արդի գրական հայերենի՝ արաբերեն ծագման մի քանի փոխառությունների մասին, 2019, 2 (21), էջ 38-42:

Միրջայեղյան Ս. Ա., Արաբական փոխառությունները Ստ. Մալխասյանցի «Հայերէն բացատրական բառարան»-ում, 2020, 2 (23), էջ 22-28:

Միրջայեղյան Ս. Ա., Հայերենի՝ պարսկերենի միջնորդությամբ կատարված փոխառությունների հնչյունական առանձնահատկություններ, 2023, 1 (28), էջ 55-70:

Մխիթարյան Գ. Մ., Երաժշտական և գրական ոլորտի մի քանի տերմինների շուրջ, 2008, 2 (9), էջ 21-27:

Մխիթարյան Գ. Մ., (Գրախոս.). Հայոց լեզվի պատմության նոր դասագիրք, 2017, 2 (17), էջ 82-84:

Մխիթարյան Գ. Մ., Հրաչյա Աճառյան. կյանքը և գիտական գործունեությունը, 2018, 2 (19), էջ 3-16:

Մխիթարյան Գ. Մ., (Գրախոս.), Լ. Շ. Հովհաննիսյան, Գրաբարի բառապաշարի իմաստային խմբերի քննություն. (III մաս) խաղողագործություն-գինեգործություն (Ե., 2018, 67 էջ), 2019, 1 (20), էջ 84-86:

Մկրտչյան Գ. Գ., (Գրախոս.). Վ. Լ. Կատվայան, Հայ բարբառագիտության հարցեր, Ե., «Հայաստան» հրատ., 2014, 232 էջ; - 2014, 1-2 ((12)), էջ 54-58:

Մկրտչյան Գ. Գ., Գեղարքունիքի մարզի խոսվածքների բաղաձայնների տարածքային բնութագիրը, 2015, 1-2 (13), էջ 53-63:

Մկրտչյան Ն. Ա., (Գրախոս.), Գրաբարի նոր դասագիրք, 2005, 1 (5), էջ 91-93:

Մովսեսյան Լ. Յ., Անգլերենի և իսպաներենի *տուն, օջախ* հասկացությունների լեզվաճանաչողական առանձնահատկությունների վերհանումը էլեկտրոնային նախագծի միջոցով, 2017, 2 (17), էջ 68-78:

Մովսիսյան Ի., Բառի սահմանումն ըստ էդուարդ Աղայանի, 2008, 2 (9), էջ 48-54:

Մոհամմադի Մ. Մ. Կարստի «Միջին հայերենի բառարան»-ը հայիրանական լեզվական ուսումնասիրության սկզբնաղբյուր, 2015, 1-2 (13), էջ 23-34:

Մուշեղյան Ա. Հ., Հայկական Դատաստանագրքերի բառապաշարը միջնադարում, 2015, 1-2 (13), էջ 45-52:

Մուրադյան Ա. ժ., Գոյականի կապային կառույցներով հատկանշային իմաստի լրացումներն արևելահայերենում, 2008, 2 (9), էջ 76-82:

Մուրադյան Վ. Ռ., Օտար լեզուների ազդեցության դրսևորումը ժամանակակից հայերենում, 2007, 1-2 (7), էջ 42-47:

Յուզբաշյան Ա. Լ., Հրամայական եղանակի ոճական արժեքը հայերենում, 2016, 2 (15), էջ 54-60:

Յուզբաշյան Ա. Լ., Աղոթքի բանաձևումները Գրիգոր Նարեկացու «Մատենան ողբերգութեան» երկում, 2019, 1 (20), էջ 31-37:

Ներսիսյան Վ. Ա., Կրոնակեղեցական և իմաստասիրական տերմինների կիրառությունը Հովհաննես Օձնեցու երկերում, 2005, 1 (4), էջ 82-88:

Ներսիսյան Վ. Ա., Գրական արևելահայերենի մերոնք // ձերոնք բառերի խոսքիմասային արժեքի հարցը, 2018, 1 (18), էջ 58-67:

Ներսիսյան Շ., Հատկացուցիչ-հատկացյալ կապակցության շարահասությունը հայերենում և գերմաներենում, 2009, 2 (11), էջ 54-60:

Նիկողոսյան Գ. Վ., Հայերենը և ֆիննաուգրական լեզուները, 2008, 2 (9), էջ 55-65:

Շահվերդյան Թ. Ս., Պարզ նախադասության կազմության ոճական վերիմաստավորումը գրաբարում, 2005, 1 (4), էջ 28-36:

Շաշիվյան Ն. Ս., Ժխտման կարգի ըմբռնման հիմնական հայեցակետերը, 2008, 1 (8), էջ 77-82:

Պապիկյան Ս. Վ., Իրանական ծագման հատկական փոխառությունների քննություն, 2022, 1 (26), էջ 77-84:

Պարոնյան Ն., (Գրախոս.), Նոր գիրք հայ բառարանագրության պատմության վերաբերյալ, 2017, 1 (16), էջ 80-85:

Պեգրոսյան Ա. Ե., Մազերի առասպելային առնչվող ծիսական բառեր և անուններ, 2004, 1-2 (3), էջ 45-61:

Պեգրոսյան Ա. Ե., Ստուգաբանություններ. սաւս «սեգ, պերճ», սաւսի «չինար, բարդի», 2018, 1 (18), էջ 11-17:

Պեգրոսյան Ա. Ե., Ստուգաբանություններ., 2022, 1 (26), էջ 85-96:

Պեգրոսյան Հ Յ., Հայերեն գիտատեխնիկական փոխառյալ տերմինների թարգմանության (տերմինակերտման) մի քանի խնդիրների մասին, 2007, 1-2 (7), էջ 33-41:

Պեգրոսյան Լ. Ի., Դերանվան ըմբռնումը հայ քերականագիտության մեջ, 2008, 2 (9), էջ 39-47:

Պեգրոսյան Վ. Ջ., Ռ. Յակոբսոնը պատմական հնչյունաբանության հիմնադիր, 2016, 2 (15), էջ 16-22:

Պեգրոսյան Վ. Ջ., (Գրախոս.), Մ. Ա. Սարգսյան, Գ. Ջահուկյանի ընդհանուր լեզվաբանական հայացքները (Ե., 2007), 2017, 2 (17), էջ 79-81:

Պեգրոսյան Վ. Ջ., Հնչյոթի հասկացական արժեքայնությունը գործառական հնչյոթաբանության մեջ, 2019, 2 (21), էջ 27-37:

Ջահուկյան Գ. Բ., Արդյոք հայերն ապրե՞լ են Առաջավոր Ասիայում մ. թ. ա. 12-րդ դարից առաջ, 2003, 1 (1), էջ 5-12:

Ռաֆայելովա Ք. Ս., Ֆիտոնիմների փորձառական ուսումնասիրությունը համեմատական դարձվածքներում (հայոց և ռուսաց լեզուների հիման վրա), 2009, 2 (11), էջ 47-53:

Ռաֆայելովա Ք. Ս., Համեմատության և փոխաբերության հարաբերակցությունը (ռուսերեն, հայերեն և արաբերեն նյութերի հիման վրա), 2019, 2 (21), էջ 43-49:

Սանդուխյան Ռ. Հ., Դարձվածքային միավորների բառիմաստային առանձնահատկությունները անգլերենում, 2009, 1 (10), էջ 66-69:

Սանթրյան Ա. Մ., Դիտարկումներ *ով* դերանվամբ կապակցվող որոշիչ երկրորդական նախադասությունների վերաբերյալ. 2017, 1 (16), էջ 14-25:

Սանթրյան Ա. Մ., Լրացումներ հայերենի երկհնչյունների և վանկի լիակաղապարներում, 2021, 2 (25), էջ 19-26:

Սանթրյան Լ. Ս., Բայի ժխտական ձևերը հայերենում, 2009, 1 (10), էջ 22-36:

Սանթրյան Լ. Ս., (Գրախոս.), Հատուկ անունների ուղղագրական նոր բառարան, 2017, 1 (16), էջ 86-88:

Սարգսյան Ա. Ե., Լեզվական մշակույթի տիպաբանական բնութագիրը, 2014, 1-2 (12), էջ 28-34:

Սարգսյան Ա. Լ., Ժամանակակից հայերենի շարահյուսական կապակցման մի եղանակի մասին, 2015, 1-2 (13), էջ 35-44:

Սարգսյան Ա. Լ., Ժխտման կարգով պայմանավորված համաձայնությունը հայերենում, 2016, 2 (15), էջ 40-53:

Սարգսյան Ա. Լ., (Գրախոս.), Արդի հայերենի քերականության հարցերի նոր քննություն, 2016, 2 (15), էջ 85-87:

Սարգսյան Ա. Լ., (Գրախոս.), Ա. Վ. Գալստյան, Արևելահայ գեղարվեստական վավերագրության լեզուն (19-րդ դ. 60-ական – 21-րդ դ. 10-ական թթ.), գիրք Ա (Ե., 2020, 264 էջ), 2020, 1 (22), էջ 95-97:

Սարգսյան Բ., Տեքստի թարգմանության վերլուծության մեթոդական առանձնահատկությունները, 2009, 1 (10), էջ 45-50:

Սարգսյան Մ. Ա., Լեզվական խնդիրները դպրոցական դասագրքերում, 2017, 1 (16), էջ 57-64:

Սարգսյան Մ. Ա., Էկոլեզվաբանությունը լեզվաբանության զարգացման նորագույն ուղղություն, 2017 2(17), էջ 55-60:

Սարգսյան Մ. Ա., Համացանցային լեզու. լեզվական տարբերակ, թե՛ խոսքի դրսևորում, 2018, 1 (18), էջ 31-35:

Սարգսյան Մ. Ա., Կիրառական լեզվաբանության բնագավառի զարգացումը և խնդիրները Հայաստանում, 2019, 2 (21), էջ 9-14:

Սարգսյան Մ. Ա., (Գրախոս.), Հայերենի կանոնարկմանը նվիրված կարևոր աշխատություն, 2019, 2 (21), էջ 86-88:

Սարգսյան Մ. Ա., Հայալեզու տեքստերի էլեկտրոնային նոր սրբագրիչի սկզբունքները, 2020, 2 (23), էջ 3-7:

Սարգսյան Մ. Ա., Խաչիբաբյան Ն. Պ., «Կորոնա» բաղադրիչով նորակազմ բառերի քննություն, 2021, 1 (24), էջ 69-74:

Սարգսյան Մ. Ա., Հայ լեզվափոխության անվանի ներկայացուցիչը, 2022, 1 (26), էջ 3-10:

Սարգսյան Մ. Ա., էդուարդ Աղայանը արդի հայագիտության նվիրյալ, 2023, 1 (28), էջ 4-12:

Սարգսյան Մ. Ա., Համբարձումյան Վ. Գ., Միքայելյան Ս. Ա., Բաղդասարյան Ս. Ե., Հայոց լեզվի ուսուցման առանձնահատկությունները Լեհաստանի հայ համայնքում, 2023, 1 (28), էջ 80-89:

Սարգսյան Ն. Ժ., (Գրախոս.), Գոյապահպանության նոր բացատրական բառարան, 2008, 1 (8), էջ 84-86:

Սարգսյան Ն. Ժ., Խոսակցական լեզվի նորմերի խնդիրը, 2016, 2 (15), էջ 10-15:

Սարգսյան Ս., Ենթակայի և ստորոգյալի շարադասության ոճական առանձնահատկություններն անգլերենում և հայերենում, 2007, 1-2 (7), էջ 67-73:

Սարգսյան Վ., Իսպաներեն տահր «խաղամոլ» բառի ստուգաբանական տարբերակները, 2004, 1-2 (3), էջ 84-88:

Սարուխանյան Ռ., Անգլերեն և հայերեն ֆինանսաբանական տերմինաբանության իմաստակառուցվածքային վերլուծության հարցեր, 2009, 2 (11), էջ 61-66:

Սաֆարյան Տ. Վ., Սոցանցերում լատինատառ հայերեն գրության սխալ ձևերի մասին, 2020, 2 (23), էջ 39-45:

Սաֆարյան Տ. Վ., Բառիմաստի հետ կապված շեղումները արդի հայերենում, 2021, 2 (25), էջ 93-101:

Սիմոնյան Ն. Մ., Ստուգաբանական դիտողություններ, 2008, 1 (8), էջ 7-9:

Սիմոնյան Ն. Մ., Ստուգաբանական դիտողություններ, 2008, 2 (9), էջ 3-6:

Սիմոնյան Ն. Մ., Ստուգաբանական դիտարկումներ, 2014, 1-2 (12), էջ 10-14:

Սիմոնյան Ն. Մ., Էդուարդ Աղայանը բառագետ, ստուգաբան, 2023, 1 (28), էջ 13-17:

Սիրունյան Տ. Ղ., Սեպագրությունների ուսումնասիրությունը տերմինային նորակազմությունների պատճառ (ըստ «Հանդես ամսօրեայի» 1887-1900 թթ. տվյալների), 2007, 1-2 (7), էջ 78-86:

Սիրունյան Տ. Ղ., Լատինաբանություններ Բարդուղիմեոս Մարաղացու «Դիալեկտիկայում», 2018, 2 (19), էջ 53-61:

Սիրունյան Տ. Ղ., Լատիներենի քերականության ազդեցության նմուշներ Հովհաննես Ծործորեցու «Համառօտ տեսութիւն քերականի» աշխատության մեջ, 2021, 1 (24), էջ 62-68:

Սիրունյան Տ. Ղ., Ձեռագիր քերականության մի «Լուծմունքի» ուսումնասիրություն (ԺԵ դար), 2022, 2 (27), էջ 42-53:

Սողոմոնյան Մ. Ռ., Մամուլի դերը հայոց լեզվի բառապաշարի հարստացման գործում, 2008, 2 (9), էջ 28-31:

Սուվարյան Ա. Ս., Անորոշ դերբայի կիրառությունը ժամանակակից հայերենում և գերմաներենում, 2016, 1 (14), էջ 57-65:

Սուվարյան Ա. Ս., Ժամանակակից գրական արևելահայերենի և գերմաներենի թվականի բառագիտական և ձևաբանական տիպաբանություն, 2019, 2 (21), էջ 15-26:

Սուքիասյան Հ. Վ., Թոռունյան Ն. Ա., Ճյուղային տերմինարան կազմելու փորձ ուրուլոգիայի բնագավառում, 2018, 2 (19), էջ 47-52:

Սուքիասյան Ք. Ա., Բառերի իմաստափոխության մի քանի հիմունքներ, 2009, 2 (11), էջ 19-22:

Ստեփանյան Ա., Նորաբանության խնդիրը ֆրանսիական լեզվաբանական գրականության մեջ, 2009, 2 (11), էջ 23-28:

Վայտենբերգ Յ., Հայ բարբառները և Օտունի լատիներեն-հայերեն բառարանը, 2015, 1-2 (13), էջ 64-78:

Վարդանյան Ա., (Գրախոս.), Բարբառագիտական ուշագրավ մատենաշարի առաջին գիրքը, 2018, 2 (18), էջ 83-85:

Տեր-Գրիգորյան Լ. Ա., Արև բառի փոխաբերական իմաստների դրսևորումները հայերենի դարձվածքներում, 2017, 2 (17), էջ 43-48:

Տերմերկերյան Ռ. Ե., Ազգային ինքնություն և լեզու, 2003, 1 (1), էջ 13-19:

Տիրյան Ս. Կ., Նորամուտ օտար բառերի սխալ գործածությունների մասին (*ինտերգրացիա, ասոցիացիա, մոտիվացիա*), 2021, 2 (25), էջ 54-62:

Փարսադանյան Վ. Խ., Ժամանակակից Աֆղանստանի դարին որպես ինքնուրույն ազգային լեզու, 2004, 1-2 (3), էջ 62-68:

Փարսադանյան Վ. Խ., Դարիի դերը Աֆղանստանի հասարակական-քաղաքական կյանքում և նրա առնչությունները փուշտուփ հետ, 2008, 2 (9), էջ 32-38:

Քումունց Մ. Ս., Զուգաբայերի և բայական բաղադրիչների լեզվաճական մի քանի հարցերի շուրջ (ըստ Հ. Մաթևոսյանի երկերի), 2005, 1 (4), էջ 73-81:

Քումունց Մ. Ս., Բառաքննական-ստուգաբանական մի դիտարկում. *գերմաստ-գիլիմաստրի - գերնախնձոր*, 2019, 1 (20), էջ 65-71:

Քումունց Մ. Ս., Հնդեվրոպական «ուռչել» հասկացությունը Սյունիք-Արցախի բարբառային բառապաշարում, 2021, 1 (24), էջ 15-22:

Ֆիշինկեան Ա. Ա., Թեք վերջնաբաղադրիչով բառեր հայերէնի մէջ, 2021, 2 (25), էջ 63-67:

ՀԱՅԵՐԵՆ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

ՎԱԶԳԵՆ ՀԱՄԲԱՐԶՈՒՄՅԱՆ

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ
Գլխավոր գիտաշխատող, ք. գ. դ., պրոֆ.
vazgengurgeni@mail.ru
vazgenhambardzumyan@aspu.

DOI: 10.57236/1829-0183-2023.2(29)-26

Համառոտագիր

Աշխատանքում բառիմաստային և ստուգաբանական լրացումների և ճըշգրտումների առարկա են հետևյալ բառերը. հայ. (h)անդ «դաշտ», (h)աստ «նըստել. օջախ // կրակ. կին առնել՝ ուզել», (h)արաւս «չմշակված, հանգստանալու թողած հող՝ դաշտ», աք- «ոտք», դեհ «կրակ. (կրակի) բռնկում», Հայկ (< այգ) «արև. աստված», հագ- // հեգ- «շունչ. վանկ», ոգորիլ «կռվել, մարտնչել, դիմակայել»:

Բանալի բառեր և բառակապակցություններ՝ բառ, արմատ, բառաքննություն, ստուգաբանություն, ստուգաբանական ճշգրտում, լրացում, ստուգաբանական հավաստիություն, այլ լեզուների նոր տվյալների ընդգրկում, նոր ստուգաբանություն:

ARMENIAN ETYMOLOGIES

VAZGEN HAMBARDZUMYAN

Researcher, Doctor of Philology, Prof.
vazgengurgeni@mail.ru
vazgenhambardzumyan@aspu

Abstract

The article gives a lexical-semasiological and etymological analysis of the following root words; (h)անդ [hand] "field" < i. - e. *Hand^[h]- "plants used for food", (h)աստ- [hast] "wife; spouse" < i. e. - e. *Hast-, (h)արաւս [haraws] "virgin land" < i. e. - e. *Har- "to plow", աք- [ak^c] "foot" < i. e. - e. *k^{[h]o}e- (?) , դեհ [deh] "fire" < i. e. *k[h]oe- " < i. e. - *d^{[h]e}g^{[h]o}- (*d^{[h]g}^{[h]o}-) "to burn, incinerate".

Key words and phrases: word, root, lexicology, etymology, etymological clarification, etymological verification, coverage of new data from other languages, new etymologies.

АРМЯНСКИЕ ЭТИМОЛОГИИ

ВАЗГЕН АМБАРЦУМЯН

Институт языка НАН РА

Главный научный сотрудник, д. ф. н. проф.

vazgengurgeni@mail.ru

vazgenhambardzumyan@aspu.

Аннотация

В статье дается лексико-семасиологический и этимологический анализ следующих корнеслов; (h)անդ [hand] “поле” < и. - е. *Hand^[h]- “растения, употребляемые в пищу”, (h)աւար- [hast] “жена; супруга” < и. - е. *Hast-, աք- [ak^c] “нога” < и. - е. *k^{[h]o}e- (?) , հանդէպ [handēp] “против ; напроив” < и.-е. *Hant-, հարթ [hart^c] “ровный ; гладкий” < и.- е. *p(h)rt(h)-H-(u)-, հաւ(ք) [hawk^c] “птица” < и.- е. *Hucc(ɫ)-, հեկեկալ [hekekal] “всхлипывать” < и.- е. *ɫek^(h), տեղմ [setm] “сжатый; тесный” < и.- е. *seḡ^(h)-, սքանչ [sk^canč^c] “восторг ; очарование” < и.- е. *k’uōko- (*k’eu-):

Ключевые слова и словосочетания: слово и корень, лексикология, этимология, этимологические уточнения, этимологическая верификация, новые данные других языков, новые этимологии.

Ներածություն

Հայերենի բառապաշարի բառաքնական և ստուգաբանական ուսումնասիրությունների շրջանակը դեռևս մնում է, այսպես կոչված, չամբողջացած: Դեռևս կան զգալի թվով անհայտ ծագման բառեր, ինչպես նաև ստուգաբանական ճշգրտումների և լրացումների կարիք ունեցող միավորներ:

Ստորև անդրադառնում ենք նման միավորներից մի քանիսին :

1. (Հ)անդ «դաշտ» < հե. *Hand^(h)-

Այս բառն ունի հնդեվրոպական ծագում, նախահունչ *h* միավորով հայտնի է նաև *հանդ* ձևով, որ Ջահուկյանը համարում է բարբառային՝ ի համեմատություն նախորդի, և գրում է հետևյալը. «*Դաշտ* բառի փոխառեն, որ իրանական ծագում ունի, վաղնջահայերենում, ամենայն հավանականությամբ, գործածվել է *անդ* (թ. [= բարբառային] *հանդ*) բառը.

(հմմտ. թոխ. Ա *ānt*, Բ *ānte* «հարթավայր»), որ ավելի ուշ ստացել է «մշակված դաշտ՝ արտ» իմաստը» [12, 259]: Միաժամանակ նշենք, որ բառի ծագումը բխեցվում է հե. *andho- (*andh-) արմատից, որ զուգահեռներ ունի միայն թոխարական լեզուներում («հայ-թոխարական զուգաբանություն») [12, 112. 33, 40-41]: Ըստ այսմ՝ մեծանում է հայերենի և թոխարական լեզուների առանձին քննության անհրաժեշտությունը:

Իսկ մինչ այդ Աճառյանը կարծիք էր հայտնել բառի՝ մեկ այլ *անդ* «սեամ, շեմք» բառի հետ կապի մասին՝ հետևյալ բացատրությամբ. «Նույն է հաջորդ *անդ* բառի հետ, որի վերջին իմաստն է «տուն». հին նահապետական կյանքում տունն ու արտը իրարից անբաժան բաներ էին. այսօր էլ «տուն-տեղ» ձևը նման մի երևույթ է ցույց տալիս գավառականներում» [2, 186]: Տեղին է նման բացատրության վերաբերյալ Գ. Զահուկյանի հետևյալ առարկությունը. «Ավելի քիչ հավանական է կապել *անդ* «շեմք» բառի հետ: - Աճ. ՀԱԲ I, 186» [13, 54]:

Ի լրացումն ասվածի՝ թոխարական ձևերից բացի կարելի է բերել ցեղակից և ոչ ցեղակից լեզուներից զուգահեռներ՝ նշված հետագա ուսումնասիրողների կողմից. հմմտ. հինդկ. *ándha* «սոմա պատրաստելու բույս», հուն. *ἄνθος* «ծաղիկ», ավելին՝ գտնում են, որ արմատն ունի առնչություն սեմական լեզուների հետ (այսպես կոչված՝ նոստրատիկ հարաբերությունների մեջ). հմմտ. սեմ. *hīnt-(at-) «ցորեն». ակկադ. (բաբել.) *uttetu* «գարու հատիկ», ուգար. *hīt* «ցորեն», արաբ. *hīnta* «ցորեն» և այլն [17, 873. 20, 14 և հջ.]:

Համեմատվող ձևերը թույլ են տալիս ենթադրելու, թե հայ. *հանդ* ձևը (*h*-ով) ավելի հին է, քան *անդ* (առանց *h*-ի), որքանով որ ցեղակից և այլ լեզուների տվյալների հիման վրա հնդեվրոպականի համար վերականգնվում է նախահունչ կոկորդայինով նախածև՝ *Hand^[h]- «ուտելի բույս»: Այս վերջին իմաստը, թերևս ամենանախնականն է և համեմատական-տիպաբանական առնչությունների մեջ ունի իր կարևորությունը: Նշվում է նաև հետևյալը. «Հնդեվրոպական բառը սահմանափակված է հուն-հայ-արիական բարբառային տարածքով և վկայում է սեմական լեզվական աշխարհի հետ Մերձավոր Արևելքի որոշակի տարածքում հնդեվրոպական բարբառային այս խմբի առնչության մասին» [17, 873]: Եվ ի հավելումն այս՝ տարածքային ընդգրկման վերաբերյալ ասվածի, թոխարական լեզուների տվյալները նույնպես անբասիր են:

Իսկ ինչ վերաբերում է միջընտանիքային համեմատական անցմանը՝ մեկից մյուսին, իբրև վարկած՝ չի բացառվում շփման մեջ հակառակ ուղղություն, ոչ այն, որ բերվում է՝ սեմականից հնդեվրոպականին, և որը բացատրելի է թե՛ հնչյունական մակարդակում, թե՛ իմաստային զարգացման մեջ՝ «ուտելի բույս» - «ցորեն/գարի (հատիկ)» - «դաշտ»։ *(h)անդ* արմատի իմաստի նման քննությունը նույնպես օրինակ է լեզուների ավելի նախնական առնչությունների:

2. (<)աս-(տ-) < հե. *Has- (?)

ՆՀԲ-ում չենք գտնում *աստ*, *աստել* (*աստիլ*), ինչպես նաև *հաստել* (*հաստիլ*) կազմությամբ բառ, իսկ «Առձեռն բառարանում» (Վենետիկ, 1865) առկա «*հաստիլ* – նշանուիլ աղջկան» ձևը Գ. Ղափանցյանը համարում է «սխալ ձև» [8, 105. 13, 25-50. 22, 219. 23, 279]:

Գ. Ղափանցյանն այդ արմատը, որից կազմված է համարում նաև հայ. *աստեմ* «ամուսնանալ», *աստող* «ամուսին» ձևերը, առնչում է խուռ. *ašt-* «կին. (ինչ-որ մեկի) կինը» ձևին՝ տարբերակային *ašta-*, *aštu-* // *ašda-* հիմքով, որ վերջին հաշվով կապվում է ակկադ. *aššātu* «ամուսին» բառի հետ [22, 219]:

Մ. Լ. Խաչիկյանի աշխատության մեջ բերվում են խուռ. *ašt-* և մյուս՝ մեկուկես տասնյակից ավելի տարբերակները՝ բառակազմական և ձևակազմական տարբեր՝ խուռ. *-i*, *-e* մասնիկներով (նաև հոլովական թեքությամբ), որոնցից տվյալ դեպքում ավելի ուշագրավ են էրգատիվ հոլովի *aš-ti-iš* և սեռ. հոլովի *aš-ti-i-we* ձևերը՝ *aš-* հիմքով (*-ti-* մասնիկն առանձնացված) [27, 57, 152]:

Այս արմատն առանձին չունի Աճառյանի բառարանը, սրանից են կազմված *աստել* «ամուսնության համար նշանած ընտրել. աղջիկ ուզել», *աստող* «աղջիկ ուզող, նշանած, փեսացու», *հաստիլ* «աղջկա նշանվելը»: Առանձին բերվում է նաև *հաստիլ*, որ հղվում է *աստել* բառին [3, 50]: Այդ ձևերը եզակի գործածություններ են՝ նույն հեղինակի բնագրում [5, 367-368. 1, 277]: Աճառյանը չի տալիս *(h)աստ-* արմատի ծագումը:

Հետագայում Գ. Զահուկյանն իր «Հայոց լեզվի պատմություն» աշխատության մեջ անդրադառնում է *աստել* բային ավելի լայն մեկնաբանությամբ, ընդ որում երկու՝ խուռերենի և սեմական լեզուների հետ առնչությունների համատեքստում:

ա) Նախ՝ անդրադառնալով հայերենի և խուռերենի առնչության հարցին, մասնավորապես Գ. Ղափանցյանի դիտարկումներին *աստել*-ի

վերաբերյալ, գրում է հետևյալը. «Քիչ թե շատ հավանական է *աստել* բայի բխեցումը խուռ. *ast* «կին. կին ամուսին» բառից», իսկ նույն էջի շարադրանքում ունի հետևյալ առարկությունը. «Չի ճշտում (իմա՝ Ղափանցյանը – Վ. Հ.) խուռական բառերի բնիկ, թե փոխառյալ լինելը և տալիս է այնպիսի զուգահեռներ, որոնց դեպքում հայերենի աղբյուրը կարող է լինել նաև ուրիշ լեզվի բառ՝ *աստել* «ամուսնության համար նշանած ընտրել, աղջիկ ուզել» - խուռ. *ast* «կին. կին ամուսին» (ավելի վաղ նշել է, որ խուռերենի աղբյուրն էլ ակկադերենն է)» [12, 424]:

բ) Այնուհետև՝ նույն աշխատության հայերենի ասորական փոխառություններին վերաբերող բաժնում, որում նման փոխառությունների մի քանի դեպքեր են առանձնացվում, «երբ դժվար է ընտրություն կատարել սեմական և ոչ սեմական հին ու նոր աղբյուրների (խուռերեն, ուրարտերեն և այլն) միջև»՝ իբրև օրինակ բերվող մի քանի բառերից (*անագ, բուրգն, նուռն սա, եղ*), բերվում է նաև *աստել* «աղջիկ ուզել», *աստաղ* «փեսացու». հմմտ. ակկադ. *aššatu(m)* «կին, կին ամուսին», *aššutum* «ամուսնություն» - խուռ. *ast* «կին. կին ամուսին» (< ակկադ.) [12, 466]:

գ) Այնինչ հեղինակի բառարանում *աստել* բառի ծագման վերաբերյալ նշվում է հետևյալը. «Թերևս նույն *հաստել* (*հաստաղ*) բայի հետ իմաստային նրբերանգով, որ վկայված է նաև *հաստաղ* բայի համար: -Lamberterie, REA 23, 91-113: Այս ստուգաբանությամբ կասկածելի է դառնում խուռերենի *ast* «կին» բառի հետ համեմատությունը (Ղափանցյան)» [13, 80]: Իսկ *հաստել* (*հաստաղ*) բայը Ջահուկյանը, ինչպես որ ժամանակին Հյուբշմանը և Աճառյանը, առնչում է *հաստ* «հաստատուն, հաստ, հաստատություն, ամրություն» արմատին՝ ծագած «բնիկ հնդեվրոպական **pasto-* «հաստատուն, ամուր» հիմքից» [13, 449]:

Բառի ստուգաբանության, նաև մեկ լեզվի կամ լեզուների հետ առնչության քննության մեջ մոտեցման տարբերությունը ակնհայտ է, ուստի հարցի վերջնական լուծումը ենթադրում է շարունակություն, որովհետև Լամբերտրիի անդրադարձն այս հարցին բանասիրական-բնագրաին բնույթի է, քան ստուգաբանության փորձ, իսկ Գրեպինի մոտեցումը, որին, ի դեպ, չի անդրադառնում Ջահուկյանը, հազիվ թե ստուգաբանական վերջնական լուծում համարվի [տե՛ս 30, 91-119. 27, 17-21]:

Ելնելով արմատի խուռ. *ast-* «կին. (ինչ-որ մեկի) կինը» (նաև ակկադ. *aššātu* «ամուսին») ձևերի իմաստային ենթադրելի տևական փո-

փոխության պատմության նկատառումից՝ թերևս կարելի է առնչություն տեսնել հնդեվրոպական *Has- «կրակ. օջախ» արմատի հետ՝ նախնական «կինը որպես տան պահապան. կրակի՝ օջախի խորհրդանիշ» իմաստի՝ հետագա զարգացման մեջ, և ըստ այդմ հայ. (h)աս(տ) բառը (արմատը) ծագած համարել հնդեվրոպական հիշյալ արմատից, որ լեզուների միջընտանիքային հարաբերակցություն է ենթադրում նաև խուեթենի (ավելի հին՝ ակկադերենի) հետ:

3. Աք- «ոտք» < հե. *k^{hjo}e- (?)

Հայ. աք- «ոտք». հմմտ. աք ածել «ոտքով հարվածել», աքացի «ոտքի հարված» և այլն. բառն ունի Եր. Մեղրեցին՝ «աք – ոտք. հմմտ. աքեացք – ոտաց թաթք» [7, 43]: Ըստ Աճառյանի՝ «անստույգ արմատ», թեականով նշելով կովկասյան լեզուների հետ կապ ունենալը, որն, ի դեպ, ընդունում է Ջահուկյանը [2, 367-368. 13, 106]: Բառը քննվում է նաև վերջինիս «Հայոց լեզվի պատմություն» գրքում՝ իբրև հայերենի և արևելակովկասյան (նախյան-դաղստանյան) լեզուների առնչության մի օրինակ. ոտք «ոտք» – հիր. (համառոտագրության ցանկում չի նշվում.- Վ. Հ.) ak, թաբ. akъ, arъ «ոտք» [12, 609]: Նկատենք, որ թե՛ մեկ և թե՛ մյուս նշումներում այդ լեզուների ձևերը միմյանցից տարբեր են, որն իր հերթին տարակուսելի է:

Այս աք- արմատի հետ, հավանաբար, կապ ունի բարձրաքեաց բառը, որն ըստ Է. Բ. Աղայանի (ոչ անկախ Աճառյանից)՝ հանդիպում է Բարսեղ Կեսարացու հայտնի երկում՝ բարձրաքեաց (բարձրաքի) ձևով, որն էլ ներկայացվում է բառաքննական, ոչ ստուգաբանական վերլուծությամբ [1, 42-44. 8, 27]:

Այս արմատի ծագման բանալին, հավանաբար, աքցան բառն է. ուստի պատահական չէ, որ ՆՀԲ-ի հեղինակներն այն բխեցնում են աք արմատից (աքցան // աքժան): Այլև մասամբ ճիշտ է Տերվիշյանի կոահումը, որ, ինչպես Աճառյանն է գրում, «դնում է ագ «ոտք» բառի հետ՝ սանս. ač, anč «ծռել» արմատից» [6, 398. 19, 74. 1, 371] :

Իսկ եթե ոտք բառի գործառույթը քայլ (քայլել, քայլք) (նխն.) «բացվածք, բացվել», (ուշ՝ «շարժվել, առաջ գնալ և այլն») երևույթին է առընչվում, ապա աք-ը, թերևս, կարելի լինի դիտարկել քա- արմատի առնչությամբ (իբրև տարբերակներ՝ աք- //քա-):

Եվ եթե այդ առնչությունը հնարավոր է, ապա կարելի է կարծել, որ հայ. քայլ բառը նույնպես, ինչպես սայլ և իմաստային այդ դաշտին պատ-

կանող այլ բառեր, ծագում են հե. *k^{[h]o}el- «շարժվել», «պտույտ գործել» արմատից. հմմտ. հինդկ. *cáratī* «շարժվել, թափառել, գնալ», ավեստ. *čaraiti* «շրջվել. շուռ գալ», հուն. (հոմ.) *πέλω*, (միջ. կր.) *πέλομαι* «շարժվում եմ», այբ. *siéll* «շրջվել», «բերել. բերել հասցնել» [17, 718] :

Նկատելի է նաև այն, որ ««շարժում» իմաստի կապը «պտտվելու» հետ հասկանալի է «շարժում» ընդհանուր իմաստ՝ «շարժում անիվների վրա» ենթադրության դեպքում» [17, 718] :

Իմաստային նման տարբերակումը, բնականաբար, տևական ժամանակի մեջ, ենթադրելի է, պիտի տեղի ունեցած լինի. որպիսով ստացվում է, որ պատմականորեն կապ ունեն *քայլ // սայլ* (<*k^{[h]o}el-), այլև *աք- / քա* - (*սա-*) (< *k^{[h]o}e-) (?) միավորները. ենթադրության շեմը բավականին մեծ է, ուստի հետագա ավելի լայն քննությունը պիտի լինի լրացում կամ ճշգրտում ասվածի:

4. Հանդէպ < հե. *Hant-

Բառի բուն իմաստն է՝ «դեմուդեմ, դիմաց». առանձին չունի Զահուկյանի բառարանը, այլ կա հեղինակի «Հայոց լեզվի պատմություն» գրքում. «Իրանական և այլ կարգի փոխառությունների ու անհայտ ծագման բառերի հիման վրա են ձևավորվել *աղագաւ* (և *յաղագս*), *զարէն.հանդէպ*, *հանդերծ*. և այլն» [12, 351]:

Աճառյանը «Արմատական»-ում *հանդէպ*-ի համար տալիս է հղում *դէպ* «պատահմունք դիպված» արմատին, որ և համարվում է «անստույգ բառ» [2, 660-661, 3, էջ 39]: Զահուկյանը նույնպես, մեկ այլ աշխատության մեջ, *հանդէպ*-ը դնում է *դէպ* արմատի տակ՝ վերջինս քննելով հետևյալ կերպ. «Հավանաբար փոխառություն իրանական աղբյուրից, բայց բուն աղբյուրը չի հավաստված. այն թերևս հանգում է հնդեվրոպական *dheya- «տեսնել, նայել» արմատին, որտեղից իրանական ճանապարհով ծագում են հայ. *դէմ*, *դէտ* ձևերը: - Զահ.» [13, 196]:

Այս վերջին երկու ձևերը, թերևս, իրանականից են (որ առանձին քննության հարց է), իսկ *հանդէպ*-ի բխեցումը հնդեվրոպական հիշյալ ձևից, կարծում ենք, հավաստի չէ:

Այնուհետև, կարելի է մտածել, որ հայ. *հանդէպ* բառը (արմատ՝ **հանդ-էպ*) բնիկ է, ծագում է հե. *Hant- «երես. դեմք. գլխի առջևի մաս» արմատից. հմմտ. խեթ. *hant-* «ճակատ», «առջևի մաս», լատ. *antiae* «ճակատին թափվող մազափունջ», հուն. (հոմ.) *ἀντί* «առջև, դեմառդեմ», լատ. *ante* «առջև», գոթ. *anda-* «հակառակ. դիմաց» և այլն [17, 814]: Ի

դեպ՝ Ժ. Օդրին հե. *Hent- արմատ է բերում խեթ. hant- «դեմք» արմատի նշումով, որ կոկորդայինը «գունավորում է» ծայնավոր, որ, ինչպես նկատում է, որ «մյուս լեզուներում կորչում է» (իմա՝ հայերենում մնում է. հմմտ. բրբռ. *հանդա* «հիմա, այժմ. ահա». Վ. Հ.) [25, 32]: Իսկ բառի –*էպ* բաղադրիչը առանձին քննության է վերաբերում:

Այս առումով Վյաչ. Իվանովն ունի մի կարևոր դիտարկում. «*H->h- զարգացումը ծայնավորից առաջ հայտնի է նաև հին գրական հայերենում, ինչպես որ անատոլիականում. հին հայ. *հովի* «հովիվ. ոչխար պահող՝ արածեցնող» < *Howi-paH- «հովիվ (ոչխարի)». լուվ. Hawi- «ոչխար», հինդկ. avi-pā «հովիվ (ոչխարի)», ռուս. овца «ոչխար» [20, 533]: Անհրաժեշտ ենք համարում ավելացնել, որ հե. *t > հայ. *դ* անցումը, նոր տվյալների համաձայն, պիտի բացատրվի նախագրային ծայնածերպային («խոչակային») բաղաձայնի՝ հին գրականում (գրավոր շրջանում) ծայնեղ համարվելու հանգամանքով. որն առանձին ուսումնասիրման խնդիր է:

5. Հարթ < հե. *p^(h)t^(h)-H-(u)-

Բառի բուն իմաստն է «հավասար փռված. հարթ», որից՝ *հարթել* «հավասարեցնել», *անհարթ* «անհավասար» և այլն: Մեղրեցին ունի «Հարթ -հաւասար», այլև «Հարթել - արիանալ, կտրել, հաւասարել». այս վերջինի՝ «արիանալ» իմաստի համար Ամալյանը ծանուցում է, որ որոշ ձեռագրեր չունեն այն [7, 182, 395]:

Աճառյանը բերում է իբրև «անստույգ բառ»՝ մերժելով նախկինում եղած փորձերը: Այնինչ Ջահուկյանը այն համարում է փոխառյալ իրանականից՝ նշելով հետևյալը. «Թերևս փոխառություն իրանական աղբյուրից, բայց բուն աղբյուրը չի հավաստված. հմմտ. ավ. *pəθəθu- «լայն» և հինդկ. pṛtu- «լայն, ընդարձակ» բառերը, որոնք ծագում են հնդեվրոպական *plat- (*plet-) արմատից, որտեղից հայ. *լայն* (< *pləteno)» [13, 451]:

Այնուհետև, Ջահուկյանը «Հայոց լեզվի պատմություն» գրքում ևս անդրադառնում է հարթ բառին՝ իբրև փոխառություն իրանականից. «Հարթ և *տափարակ* բառերն ակնհայտորեն փոխառություններ պիտի լինեն հնդեվրոպական այլ (իրանակա՞ն) լեզուներից. *հարթ* բառը զուգահեռ ունի հինդկ. pṛthu-, ավեստ. pəθəθu- (ուղղելի՝ pəθəθu-. Վ. Հ.) «լայն, ընդարձակ» բառերի մեջ, բայց սրանք ծագում են հ.-ե. *p̥t(h)u- ձևից, որ հայերենում պիտի տար *հաղթ, սպասված *դ*-ի փոխարեն *ր*-ի առկայությունը արիզմ է, որ առկա է նաև *մարմին* բառում. այս դեպքում էլ պետք

է ենթադրել շատ հին փոխառություն. նշենք, որ իրանական բառը փոխառված է քարթվելական լեզուներում (հմմտ. վրաց. *parto* «լայն, ընդարձակ»)» [13, 268. վերջինս ասվում է ըստ Ֆոգտի դիտարկման. տես նաև 13, 599, տողատակի ծանոթ.]:

Դրանից բացի, միաժամանակ «դժվար բացատրելի դեպք» է համարվում այն, որ «իրանական աղբյուրից պետք է փոխառված լինի վրաց. *parto* «լայն» բառը (հմմտ. ավեստ. *pərəθu-* «լայն» < հ.-ե. *p[ʰ]u-* «լայն և հարթ»), բայց պարզ չէ *հարթ* բառի հարաբերությունը համապատասխան հ.-ե. արմատի և իրանական ձևերի հետ. անմիջական հ.-ե. ծագում ունենալու դեպքում պետք է բացառվեր **l* > *r* փոփոխությունը...» [13, 599]:

Եվ, իրոք, երևույթը բավականին հին (արխաիկ) է, սակայն ոչ փոխառության, այլ բնիկ լինելու (ծագումնային առնչության) տեսանկյունից, իսկ բացառումը կապվում է այն բանի հետ, որ այս դեպքում վերականգնվում է հե. բոլորովին այլ (տարբերակային) արմատ:

Նկատենք նաև, որ սկզբնապես Ջահուկյանը մերժում է բառի իրանական փոխառություն լինելը՝ հայ-փոյուզական հետևյալ զուգահեռի առնչությամբ. «Παρθε (**p[ʰ]t̥u-ei*) (Դի երկրի դիցուհու մականունը) (հ.-ե. *pelə-*, *plā-*, *plāt-*, *plēt-* «լայն և հարթ», որտեղից հայ. *հող*, *լայն*) - *հարթ*՝ տողատակի ծանոթագրությամբ. «Իրանական փոխառություն չի կարող լինել, որովհետև իրան. փոխառությունները հաջորդել են հ.-ե. *p* > հայ. *h* անցմանը» [14, 116]:

Հնչյունական այս օրենքի հիշեցումը միանգամայն տեղին է, հայտնի է բազմաթիվ օրինակներով. բերվածը դրանցից մեկն է. ըստ այդմ էլ ժամանակագրական առումով կարելի է նոր տվյալներով անդրադառնալ *հարթ* բառի ծագմանը: Այն հնչյունական և իմաստային տարբերություններ ունի հայ. մի շարք ձևերի հետ. ըստ այսմ՝ կարելի է բերել հետևյալը:

ա) Հմմտ. *հարթ* (*հարթել*, բրբռ.՝ *հորթել*), *յարթ* (*յարթանակ*) (?), *հող*, *փարթամ* (?), *պարթե* (?), նաև *լայն*, (բրբռ.) *լատան* (?), որոնք ներկայացնում են ընդհանուր արմատի տարբեր ձևացումներ՝ ոչ միայն ձայնավորման, այլև նրան հարող բաղաձայնների միջոցով [հմմտ. 17, 55, 781 և այլն]:

բ) Հե. *p^(h)t^(h)-H-(u)- արմատի համար. հմմտ. հինդկ. pṛthú «լայն», pṛthiví «հող» («լայն»), որ և հուն. πλατός, լիտվ. platus «լայն», «հարթ», խեթ. palt-ana- «ուս» [17, 55]:

գ) Հե. *p^(h)(e)l-H-/-t^(h)- արմատի արտացոլման օրինակ բերվում են հիմնավոր տվյալներ. հմմտ. խեթ. palh-i «լայն», լատ. plānus «հարթ», լատվ. plāns «հարթ», «հավասար». նաև՝ խեթ. paltana- «ուս», հինդկ. pṛthú «լայն», ավեստ. pərəθu- «լայն». հուն. πλατός «լայն», հւլավ. plešte «ուս», և այս շարքում՝ հայ. լայն [17, 781].

դ) Հե. *p^(h)t^(h)- արմատից են ծագած համարվում խեթ. paltana- «ուս», հուն. πλατανός, «սուի (ծառ)», πλάτη «թիակ», ὠμο-πλάτη «բահ. թիակ», հինդկ. pṛthú-«լայն», հիբլ. lethan «լայն», հւլավ. plešte «ուս» / հե. *p^(h)t^(h)- արմատից՝ խեթ. palh-i «հարթ».«լայն», լատ. plānus «լայն» [17, 200]:

Ինչպես երևում է, հիմք-լեզվի համար վերականգնվում են տարբերակային արմատներ՝ *p^(h)t^(h)-H-(u)- // *p^(h)(e)l-H-/-t^(h)-, որոնք ցեղակից լեզուներում ունեն իմաստի (բովանդակության պլանի) լայն արտացոլում. և ինչպես խեթերենում, հայերենում ևս հե. վանկային (ոչ վանկային՝ պարզ) ձայնորդներ *t/*l կարող են լծորդային արտացոլում ունենալ՝ r(η)//l տեսքով (հմմտ. լի//յ-րի և այլն) [17, 200-201]:

6. Հաւ(ք) < *Hաе(ǵ)-

Հայ. հաւ(ք) «թռչուն» բառը ՆՀԲ-ն, վերջինիս հետևությամբ նաև Պետերմանը համեմատում են լատ. avis բառի հետ, իսկ Լագարդը նախ՝ բխեցնում է հե. *pā- արմատից՝ ի համեմատություն հւլավ. pieti, piewati «երգել», pictlñ «աքլոր» ձևերի, իսկ ավելի ուշ՝ դիտում է լատ. pāvus «սիրամարգ» բառին ցեղակից [6. էջ 1. հմմտ. 32, 26. 3, 65-66]: Տերվիշյանը «վերինների հետ դնում է հնիս. vi, avi «թռչուն» բառից» [16, 108]:

Հյուբշմանն ընդունում է համեմատությունը լատ. pāvus, pavo ձևերի հետ, սակայն վերապահությամբ, այն է՝ եթե սրանք նախապես ունեցած լինեն «թռչուն» իմաստը: Ածառյանը, ոչ անկախ Հյուբշմանից, գտնում է, որ այն ծագում է հե. *auei- «թռչուն» արմատից. հմմտ. լատ. avis «թռչուն», avicula «թռչնիկ», հինդկ. vi-, vñ, vayas- «թռչուն», ավեստ. vīs, vay- «թռչուն», հուն. ὄωνός (<* α"ίωνός ?) «գիշատիչ թռչուն», α"ετός (<*α"ί-

ετός) «արծիվ», իռլ. ai, aoi «կարապ», կիմր. hwyad (< *auietos ?) «բադ» և այլն [30, 465]:

Աճառյանը բերում է նաև այն, որ ըստ Պետերսոնի [KZ (= “Kuhn’s Zeitschrift”), 47, էջ 249-250]՝ հայ. հաւ-ը ծագում է հնիւ. *pōu, pou, pau «փոքր», «ծագուկ» արմատից. հմմտ. հուն. πῶλος «ծագ, քուռակ», πα"ς «տղա, երեխա», հինդկ. potas «ծագ», լատ. puer «տղա, երեխա», լիտվ. putytis «թռչնի ծագ», լատվ. putns «թռչուն», հւլավ. pŭta, pŭtica «թռչուն», ընդ որում Պոկոնին «այս մեկնութիւնը յիշում է նախորդի հետ (հնիւ. *auei-)» [3, 66]:

Ջահուկյանը գտնում է, որ հայ. հաւ «(էգ) թռչուն» բառը ծագում է հե. *Hau- (*auei-) «թռչուն» արմատից, միաժամանակ նշում, որ «Պոկոնին հնարավոր է համարում դուրս բերել հե. *pəu- (*pōu-) «ծագ» արմատից՝ հ-ի նկատառումով, և որն ունի զուգահեռներ ցեղակից լեզուներում. հմմտ. լատ. avis «թռչուն» [19, 226, ծանոթ. 25, այլև 242. 12, 114, 208, այլև 13, 453]:

Հետագայում, ոչ անկախ Հ. Հյուբշմանից և Հ. Աճառյանից, բառը ստուգաբանվում է հետևյալ կերպ. «Բնիկ հնդեվրոպական՝ *hauei «թռչուն» արմատից. հմմտ. հինդկ. vi, ավեստ. vay, լատ. avis «թռչուն», հուն. ο"ωνός «արծիվ» [12, 453]: Նկատենք, որ հունարենում ο"ωνός բառն ունի ոչ միայն «գիշատիչ (թռչուն)», այլև «գուշակող, լուր բերող (թռչուն)», «նախանշան, նախանշանակ» իմաստները, որը հետաքրքիր է հնդեվրոպական արմատի բուն՝ սկզբնական իմաստի վերականգնման առումով [18, 1162]:

Ըստ Գամկրեյիժեի և Իվանովի՝ հնդեվրոպական «եռաբաղաձայն» (Schwebeablaut-ով՝ «շարժուն ձայնդարձով») արմատի առաջին տիպից՝ *Hau- արմատից ունենք հայ. հաւ «թռչուն». հմմտ. լատ. auis «թռչուն», հուն. α"ετός «արծիվ», բրետ. houd «բադ», իսկ երկրորդից՝ *Hue- «փչել» արմատից՝ հինդկ. véḥ (հոգն. թ.) váyah «թռչուն», vāyasá- «թռչուն», «ագռավ» [17, 233]:

Այնուհետև, հայ. հաւ «թռչուն», «հավ» արմատը հեղինակները բխեցնում են նաև հե. *Hue(ɫ)- (նախնական իմաստով) «փչել» (որից՝ «օդ», «քամի», այլև «Վերին ոլորտի՝ աշխարհի» անվանումը) արմատից. հմմտ. հինդկ. ví-/vé- «թռչուն» (Ռիզվեդայում նաև «ծի», «աստվածներ», «նետ»), ավեստ. viš «թռչուն», պահլ. way, wāyendag «թռչուն», հուն.

α"ετός «արծիվ», լատ. aus «թռչուն», ումբր. (հոգն. հայց. հոլ.) avif «թռչուններին», վալլ. hwyad «բադ» [17, 537]: Ընդ որում գտնում են, որ հե. *Hau- /*Hue- ը- տարբերակներում, նայած արմատի ծայնդարծի այս կամ այն աստիճանի, զանազանվում են տարբեր՝ *Hau(ɫ)-/*Hu(eɫ)-, այլև *Hue(ɫ)- հիմքեր [17, 233, 489 և այլն]:

Ըստ այդմ՝ որոշակի առնչություն կա «փչել» «քամի», «թռչուն» (այլև՝ «արծիվ», «նետ», «օդ, ոլորտ՝ մթնոլորտ») իմաստների միջև, որ հայերենում կարելի է հանգեցնել ոչ միայն *հաւ(ք)*, այլև *հով*, *զով*, *հովեմ*, *հեալ* և այլ արմատներին՝ իմաստաբանական ստուգաբանության հիմքով:

7. Հեկեկալ < հե. *jek^(h)-

Բառի բուն իմաստն է՝ «կտրված ձայնով լաց լինել». ըստ Աճառյանի՝ «կրկնված է **հեկ* պարզ արմատից, որ առանձին չի գործածված». որից են՝ *հեկեկել*, *հեկեկանք* և այլն, որ միաժամանակ համարվում է «անստույգ բառ» [3, 74, 76]: Հայերենում, առհասարակ, լծորդ են *հեծ-* և *հեկ-* արմատները, ունեն իմաստային ինչ-ինչ երանգներ. Մալխասյանցը լծորդ ձևեր է համարում *հեծեծալ* // *հեծեծել* և *հեկեկալ* // *հեկեկել* [10, 89-90], որ հիմք է ասելու, թե դրանք տարբերակներ են ոչ միայն ձայնավորական *ե / ա*, այլև բաղաձայնական (հետնալեզվային պայթական և առաջնալեզվային կիսաշփական) *կ / ծ* մակարդակում (հմմտ. *կին / ծին*, *հակ-* / *հած-* և այլն):

Եվ ըստ այսմ *հեկ-* արմատի տարբերակ է *հեծ-* «հառաչանք, ախ քաշելը» արմատը, որից՝ *հեծել*, *հեծեծել*, *հեծութիւն*, *հեծկլկալ* և այլն. այստեղ նկատենք, որ Ջահուկյանը այդ երկուսը կապում է միմյանց՝ նշելով «հմմտ. նաև հեկեկալ», «հմմտ. նաև *հեծեծալ (հեծել)*» [13, 455-456]:

Աճառյանը թե՛ մեկ և թե՛ մյուս արմատը համարում է «անստույգ», ըստ Ջահուկյանի՝ «ծագումն անհայտ է: Արդյոք բնածայն կազմություն չէ՞» [տե՛ս 3, 74, 76. 13, 456]: Մեղրեցին ունի միայն *հեծ-* արմատից կազմված բառեր՝ «*Հեծել* - վշտանալ, հառաչել». «*Հեծութիւն* - նեղութիւն» [7, 183]:

Հավանական է բառի ծագումը հե. *jek^(h)- «ասել, հարցում անել. հանդիսավոր արտահայտել» արմատից. հմմտ. թոխ. Բ *yāsk-* «խնդրել. թախանձել», թոխ Ա. *yāssuce*, Բ *yāssuca* «աղքատ. աղերսող», հինդկ.

yācati «խնդրել. թախանձել», լատ. iocus «հեզնանք. զավեշտ», ումբր. iuka «աղոթք. աղաչանք», հվգերմ. jehan «ասել. արտահայտել» և այլն. երևույթն առնչվում է մարմնի նեղությունների («բուժման կարիք ունենալու». «գրկանքի»), դրանց ապաքինման ծիսական միջոցների դիմելու և այլն իմաստային (թեմատիկ) ոլորտին. հայերենում հնչյունական անցումների բացատրությունը, կարծում ենք, պատճառաբանելի է [հմմտ. 17, 216, 818]:

8. Սեղմ < հե. *seġ(h)-

Սեղմ «հոծ, խիտ» (< սեղ-մ-ել) ձևից Մեղրեցին ունի միայն սեղմել «վեր ածել, ծածկել, ամրացնել» կազմությունը [7, 286], ըստ Աճառյանի՝ «անստույգ բառ» [4, 199]: Զահուկյանը «Հայոց լեզվի պատմություն» գրքում գրում է հետևյալը. «կարճ, հակիրճ, համառուտ, ամփոփ, սեղմ բառերից ոչ մեկի բնիկ հնդեվրոպական ծագումը չի հաստատվում» [4, 268]: Ի միջի այլոց, նկատենք, որ բերվածներից առանձին քննություն են ենթադրում կարճ// (հա)կիրճ, ամփոփ (ամ-փոփ. հմմտ. ս-փոփ) արմատներ (որոնց կարելի է անդրադառնալ առանձին՝ իրենց տեղում): Իսկ հեղինակի «Ստուգաբանական բառարան»-ում խոսք չկա բառի՝ իր կողմից կատարվող ստուգաբանության վերաբերյալ, այլ նշվում է հետևյալը.

Հետագա ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բառի ծագումն առնչվում է հնդեվրոպականին. Լեմանը իր հոդվածում նշում է, որ հայ. սեղմ բառը ծագում է հե. *skw- «հետևել, հետևից գնալ» (կամ՝ հե. *segh- «բռնել») արմատից (31, 54): Ավելի ուշ գտնում են նաև, որ բառի ծագումն առնչվում է հե. *seġ(h)- // sġ(h)- արմատին. հմմտ. հինդկ. śāhate «հաղթում՝ հաղթահարում եմ», ավեստ. (ըղծ. հոգն. 1-ին դ.) zaēma «հաղթենք», հուն. ἔχω (աոր. ἔσχο) «ունենալ. բռնել», (ըղծ. հոգն. 1-ին դ.) σχοῦμεν «հաղթենք», գոթ. sigis «հաղթանակ» և այլն [հմմտ. 17, 155]: Ըստ այսմ՝ հավանական ենք համարում հայ. սեղ-մ արմատի ծագումը հե. *seġ(h)- արմատից:

Այս դեպքում բառի -մ տարրը կարելի կլինի դիտել մասնիկ-հավելում (ածանց), որը հնարավորություն է ընձեռում այն համեմատելու հայ. շեղջ // շիղջ (< շեղ- // շիղ-ջ) բառին՝ ըստ իմաստով մոտ լինելու, այլև հնչյունապես հնարավոր բացատրության հիման վրա. ընդ որում Զահուկյանը նշում է շեղջ > սեղջ «կույտ, շեղջ» անցում՝ այն համարելով «ամենայն հավանականությամբ՝ տարնմանական փոփոխություն», ա-

ռանց ծագմանն անդրադառնալու [19, 309]: Հմմտ. *սեղ-մ* «հեզ, հանդարտ. մեղմ, կամաց» (< հե.*sel- «մանրել, փշրել» [13, 522]:

Այս վերջինին նա անդրադառնում է իր «Հայոց լեզվի պատմություն» գրքում՝ (հարցականով) համարելով փոխառություն խեթ. šeli- «հացահատիկի շեղ» ձևից, ըստ այդմ՝ շեղ-//շիղ- արմատը, որ ըստ Աճառյանի՝ ծագումն անհայտ է, Ջահուկյանի կողմից քննությունը առաջ է տարվում ծագման առումով, սակայն իբրև փոխառություն: Ավելի հավանական ենք համարում բառի կապը սեղմ արմատի հետ, ըստ որում իբրև բնիկ հնդեվրոպական, ոչ փոխառյալ:

9. *Սքանչ* < *k'ǵōko- (*k'eu-)

Բառի բուն իմաստն է «հրաշք, հրաշալի բան», նման ձև է բերում Հ. Աճառյանն իր «Արմատական բառարան»-ում, իբրև արմատ, որն, իրոք, այդպիսին չէ, այլ ածանցական բառ է՝ բաղադրված հնչյունափոխված *սք-* բուն արմատից և *-անչ* ածանցական մասից (հմմտ. *մեղանչ-*, որից *մեղանչել*, նաև *մեղք. մեղսադիր* և այլն):

Հայ հին մատենագրության մեջ, ինչպես Աճառյանն է տալիս, կիրառված են ոչ միայն *սքանչ* ածանցական «արմատ», այլև նրանից բաղադրված *սքանչանալ* («հիացած՝ զարմացած մնալ»), *սքանչանք* («սքանչանալը»), *մեծասքանչ* («մեծապես սքանչանալի»), *սքանչելի* («շքեղ. տպավորիչ») և այլն, այսինքն՝ այն հայերենում բավականին գործածելի և բառակազմորեն սերող հիմք-արմատ է եղել, և որն այս դեպքում վճռապես կարևոր է, այնուամենայնիվ հիշյալ բառարանում բերվում է իբրև «անստույգ բառ» [4, 288]:

Եր. Մեղրեցու բառարանն ունի *սքանչանալ*, որ նշանակում է «զարմանալ. հիանալ» [7, 296]. սա նշում ենք, որովհետև նկատելի է իմաստային տարբերություն (այն է՝ «զարմանալ» իմաստը):

Չենք հանդիպում բառի (բառարմատի) հետագա ստուգաբանության մեկ այլ փորձ, քան որ Ջահուկյանի բառարանում, թերևս ոչ անկախ Աճառյանի բառարանից, *սքանչ*-ի համար նշվում է ընդամենը մեկ իմաստ «սքանչելիք», այլև բավականին զգալի թվով կազմված բառեր, իսկ վերջում նշվում է՝ «ծագումն անհայտ է» [13, 698]:

Բառ(արմատ)ի ավելի մանրամասն համեմատական քննությամբ, այն է՝ նոր կամ այլ տվյալների ընդգրկումով կարելի է վերստին անդրադառնալ նրա ծագմանը:

Նախնայի ձևի բուն արմատն է **սըք* (< *սուք*), որ, ի դեպ, հանդիպում է հայերենի բարբառներում, հմմտ. «Քու տուն սուքվի» (Մուշ, Ալշ.), այսինքն՝ «քո տունը (տունդ) շեն՝ բարվոք, շքեղ լինի» (հմմտ. բրբռ. *տնաշէն*). Խրախուսական բացականչություն). այս արտահայտության մեջ բառը չփոխվել համանուն *սուգ* «վիշտ և այլն» բառի հետ. բերված օրինակում (բրբռ.) *սուքվել*-ը «լիություն, շեն լինել. կամեցողություն» է նշանակում, ոչ՝ այլ բան, և պատահական չէ, որ վերջերս լույս տեսնող բարբառային բառարանում այն բերվում է նոր բարբառներում գործածական «պատրաստել, սարքել», «շինել, կառուցել» իմաստներով [9, 416]:

Ըստ այդմ՝ կարելի է կարծել, որ *սքանչ*-ի **սըք* (< *սուք*) բաղադրիչը նրա բուն մասն է, նախնական իմաստով, հնչյունական առնչության տեսանկյունից, լծորդ է հայ. շուք «շքեղ, լուսավոր. պայծառ» բառին (հմմտ. հայ. *սեմ* (< *սեամ* «(դռան) շեմ») // *շեմ* «շեմք». օրինակ՝ Գ. Մահարու վեպը՝ «Երիտասարդության սեմին». Աճառյանը *սեամ*-ը բացատրում է՝ «դռան սեմը, շեմք» [ընդգծումը մերն է՝ Վ. Հ.]. Մեղրեցին *սեամ*-ը բացատրում է՝ «շեմ» և այլն): Ի դեպ՝ Աճառյանի, այլև Ջահուկյանի բառարանները չունեն *շեմ* բառը, իսկ *սեամ*-ը, ըստ Աճառյանի, «անստույգ բառ» է, ըստ Ջահուկյանի՝ «Ծագումն անհայտ է: Կասկածելի են ինչպես հնդեվրոպական **k'ei-* «ընկած լինել»՝ *-*mo-* ածանցով (Պատրուբանյան), այնպես էլ արևմտակովկասյան ծագման (հմմտ. ուրբիս. *ašaxims*, արբազ, *šaximsa* «շեմք». Ջահ. ՀԼՊ 602 (= Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն, Ե., 1987, էջ 602) վարկածները» [13, 674]:

Այնուհետև՝ *սքանչ*-ի **սըք* (< *սուք*) բաղադրիչը ոչ միայն հնչյունապես, այլև նախնական ընդհանուր իմաստի առումով առնչվում է հայ. շուք «շվաք. ստվեր, ծածկոց, հովանի. շուք, շքեղություն» (իմաստների նշանակումը ըստ Ջահուկյանի բառարանի). այդ արմատական բառից են բաղադրված *շքալ*, *շքեղ*. *շքեղաշուք*, *մեծաշուք*, *շքանշան*, *շքամուտք* և այլն [13, 595]: Եթե այն, ըստ Աճառյանի, «անստույգ բառ» է, ապա Ջահուկյանը փորձում է ստուգաբանել հետևյալ կերպ. «Թերևս բնիկ հնդեվրոպական՝ **k'ũko-* (**k'eu-*) «լուսավորել, լուսավոր» արմատից, որից կազմվել է նաև **k'euk-* հիմքը. հմմդ *h.hնդկ*. *scati-* «լուսավորում է, փայլում է, վառվում է», *čukra*, *čukla* «լուսավոր, սպիտակ, մաքուր»:- Ջահ. ՀԼՊ 132» [13, 595]:

Ուստի արմատի ծագման նման մեկնաբանությունը մենք համարում ենք հավանական և ընդունելի, մանավանդ որ այն, ըստ իմաստաբանական հիմքի, կարող է տարածվել *սըք (< սուք) արմատի տարբերակի վրա (արմատի նախնական իմաստը գտնում ենք հայերենի բարբառներում), որպիսով մեծանում է ստուգաբանության հավաստիությունը:

Նկատենք նաև, որ հայ. (բրբռ.) սուք բառը Սայաթ-Նովայի հայերեն «խաղերից» մեկում գործածվել է «շքեղություն. հանդիսություն. ուրախություն» իմաստով՝ իբրև հնչույթային-արտասանական տարբերակ շուք «ստվեր» («լուսավոր, պայծառ») բառի (բնորոշ՝ Թիֆլիսի բարբառին), որն առանձին է մյուս՝ սուգ (բրբռ.՝ սուք) «տխրություն, վիշտ. զրկանք» բառից՝ իբրև համանուն. «Վուրտիղ հարսնիք, վուրտիղըն սուք, վուրտիղ սոյբաթ խաղ է ըլում. // Վուրտիղ ժամ, վուրտիղ պատարագ, վուրտիղ սիրով տաղ է ըլում» [15, 64]:

Առաջին տողում հարսնիք «հարսանիք» և սոյբաթ «(քաղցր՝ հաճելի) զրույց» բառերի կողքին ասվում է սուք, որ ըստ խաղերի հրատարակիչների կողմից ընդունված բացատրության՝ «լացուկոծ, տխրություն (մահվան, աղետի և այլնի պատճառով)», որն անշուշտ տեղին չէ, մանավանդ որ հաջորդ՝ 2-րդ տողում հոգևոր երևույթների մասին է ասվում [ժամ «եկեղեցի, սրբատեղի», պատարագ «սրբասացություն» և (սիրով) տաղ «երգ, երգեցողություն»]. այլ կերպ ասած՝ այստեղ առկա է աշխարհիկ և հոգևոր երևույթների զուգակցում՝ իրականության երկյակ («դուալ») հակադրությամբ, որը փոխաբերացման (վիպական խոսքի՝ առասպել, լեգենդ, ասք և այլն) միջոցներից մեկն է, մյուս երկուսի՝ փոխանունության և փոխըմբռնման հետ միասին ոճական առումով ծառայում է ասելիքի («ասույթի») ձևակերպմանը և արտահայտմանը՝ այդ դեպքում եռյակ («եռանդամ») հակադրությամբ:

Այդ սուք «շքեղություն. հանդիսություն. ուրախություն» բառի հետ համանուն է մեկ այլ՝ գրական հայերենի սուգ «տխրություն, վիշտ» բառը (հմմտ. սուգ ու շիվան):

Այստեղ գործ ունենք շ//ս տարբերակայնության հետ: Նշվում է նաև բառի «ստվեր» իմաստը (հարցականով), որն այլ բան չէ, քան, այսպես կոչված, իմաստային բաղարկման (կոնտամինացիայի) արդյունք՝ «լույս» / «ստվեր» հարաբերակցմամբ: Առկա են գրական և բարբառային տարբերակներ, որոնք իմաստային առումով պատմականորեն տեղիք են տալիս բառային համանունության. հմմտ. նաև ուրարտ. šu-ḫi/e «կարգա-

վորում» [< š(u)- «կարգավորել, ստեղծել» և hi/e (գոյականական մասնիկ)] - հայ. (բրբռ.) սուք (< սու-ք) «կառուցել. կերտել» [գրական՝ շուք (<շու-ք), շքեղ «(նխն. իմաստով) կառուցել, կառուցված» (?)]՝ ըստ Ջահուկյանի մեկնաբանության [12, 437]: Քննության առնված բառերի (արմատների) համար ընդհանուր են բուն գործածությամբ՝ «լույս», «լուսավորել», իսկ փոխաբերաբար՝ «շքեղ, սքանչելի» իմաստները, որոնք լեզվի պատմության, այլև տարբերակների տեսանկյունից ներկայացնում են մեկ ամբողջություն: Ըստ այսմ՝ պետք է ընդունել Գ.Ջահուկյանի «Թերևս բնիկ հնդեվրոպական՝ *k' uōko- (*k' eu-) «լուսավորել, լուսավոր» արմատից» ստուգաբանությունը, սակայն առանց թեականի [13, 595]:

Այսպիսով՝ հիշյալ արմատների ներքին համեմատության (գրական լեզու - բարբառ), իմաստային առնչության (գրական աղբյուրներում, բարբառների մի մասում հին և նախնական իմաստների նշում), ծագումնային պարզաբանման (բառերի ստուգաբանում) հիման վրա հայերենում համալրվում է «ֆիզիկական աշխարհ» իմաստային (թեմատիկ) խումբ:

Գրականության ցանկ

1. Աղայան Է. Բ., Բառաքննական և ստուգաբանական հետազոտություններ, Ե., 1974:
2. Աճառեան Հ., Հայերէն արմատական բառարան, հ. 1, Ե., 1971:
3. Աճառեան Հ., Հայերէն արմատական բառարան, հ. 3, Ե., 1977:
4. Աճառեան Հ., Հայերէն արմատական բառարան, հ. 4, Ե., 1979:
5. Աճառեան Հ., Հայերէն նոր բառեր Տիմոթեոս Կուզի Հակաճառութեան մէջ // «Հանդէս ամսօրեայ», 1908, 12, էջ 367-368:
6. Աւետիքեան Գ., Սիրմէլեան Խ., Աւգերեան Մ, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հհ. 1-2, Վենետիկ, 1836-1837:
7. «Բառգիրք հայոց», քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Հ. Մ. Ամալյանի, Ե., 1975:
8. Համբարձումյան Վ. Գ., Ակնարկներ հայոց լեզվի համեմատական բառագիտության, 2, Ե., 2007:
9. «Հայոց լեզվի բարբառային բառարան», հ. Ե, Ե., 2008, էջ 416:

10. Մալխասեանց Ստ. Հայերէն բացատրական բառարան, հ. 3, Ե., 1944, էջ 89:
11. Ղափանցյան Գ. Ա., Հայոց լեզվի պատմություն (հին շրջան), Ե., 1961:
12. Զահուկյան Գ. Բ., Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987:
13. Զահուկյան Գ. Բ., Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010:
14. Զահուկյան Գ. Բ., Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Ե, 1970:
15. Սայաթ-Նովա, Խաղերի ժողովածու, աշխատասիր. Հ. Բախչինյանի, Ե., 1987, էջ 54:
16. Տերվիշեան Ա., Հնդեվրոպական նախալեզու, Կ. Պոլիս, 1885:
17. Гамкрелидзе Т. В., Иванов Вяч. Вс., Индоевропейский язык и индоевропейцы., II, Тбилиси, 1984:
18. Дворецкий И. Х., Древнегреческо-русский словарь. Т. II, М., 1959, с. 1162:
19. Джаукян Г. Б., Очерки по истории дописьменного периода армянского языка, Ереван, 1967:
20. Иванов Вяч. Вс., Тохарские языки и их значение для сравнительно-исторического исследования индоевропейских языков // *“Тохарские языки”*, М., 1957, с. 14:
21. Капанцян Г. А., Хуриттские слова армянского языка // *“Известия”* АН Арм. ССР, 1951, 1, с. 25-50:
22. Капанцян Г. А., Хайаса – колыбель армян (Этногенез армян и их начальная история) // Г. А. Капанцян, Историко-лингвистические работы (К начальной истории армян; Древняя Малая Азия), (Ереван, 1956):
23. Капанцян Г. А., Историко-лингвистические работы, том II, Ереван, 1975, с. 279:
24. Леманн У. Ф., Об армянской системе смычных и ее соотношении с протоиндоевропейской системой // *“Вопросы языкознания”*, 1961, 4, с. 56-59:
25. Льюис Г., Педерсен Х., Краткая сравнительная грамматика кельтских языков, М., 1954:
26. Одри Ж., Индоевропейский язык // *“Новое в зарубежной лингвистике”*, вып. XXI, М., “Наука”, 1988, с. 24-121:
27. Хачикян М. Л., Хурритский и урартский языки, Ереван, 1985:

28. Greppin J. A. C., The etymology of Armenian *astem* and *tarm* and the hurro-urartian hypothesis with a bibliographical excursion // *“Revue des etudes arménien”*, 1991, no. XXII, p. 17-21:
29. Dervischjan S., *Das altarmenische* Ք , Wien, 1877:
30. Hübschmann H., *Armenische Grammatik*, 1 Teil. *Armenische Etymologie*, Leipzig, 1897:
31. Lamberterie Ch. de, *Fiançailles arméniennes et germaniques* // *“Revue des etudes arménien”*, 1992, no. XXIII, p. 91-119:
32. Petermann H., *Grammatica linguae armeniacae*, Berolini, Sumptibus G. Eichler, 1837:
33. Pokorny J., *Indogermanisches etymologisches Wörterbuch*, 1, Bern-München, 1959:

ՀԱՅԵՐԵՆԻ ԱԾԱՆՑՆԵՐԻ ՀԱՄԱՆՈՒՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(ՔԱՆԻ”-ՈՑ ԱԾԱՆՑ ԿԱ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ)

ՄԱՆՈՒԿ ՖԵԼԵՔՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,
գիտաշխատող, ք.գ.թ., դոցենտ
manukfeleqyan@gmail.com

DOI: 10.57236/1829-0183-2023.2(29)-45

Համառոտագիր

Հոդվածում քննվում են բառակազմական ձևայինների բազմիմաստության և համանունության տարանջատման հարցեր: Առաջարկվող չափանիշների հիման վրա ժամանակակից հայերենի համար տարբերակված են **ng** (/ʎng/անոց) հնչյունական կազմն ունեցող երեք համանուն ածանցներ՝ **-ng₁** (ունի «տեղ» բառակազմական իմաստը), **-ng₂** («կոնկրետ առարկա» և «գործողության՝ որպես երևույթի անուն» բառակազմական նշանակություններով), **-ng₃** (ոչ գործուն ձևային, որ պահպանվել է գրաբարյան միայն մի քանի կազմություններում):

Քանալի բառեր և բառակապակցություններ՝ ձևայինների համանունություն, բազմիմաստ ածանցներ, համանուն ածանցներ, ածանցների տարբերակներ, բառակազմական հիմք, իմաստային անփոփոխակ, բազմիմաստության և համանունության սահմանազատման չափանիշներ:

ABOUT THE HOMONYMY OF SUFFIXES

(OR HOW MANY SUFFIXES -ՈՑ(-OTS) ARE THERE IN THE ARMENIAN LANGUAGE?)

MANUK FELEQYAN

RA NAS Language Institute
Researcher, Candidate of Philological Sciences,
Associate Professor
manukfeleqyan@gmail.com

Abstract

This article discusses issues of distinguishing polysemy and homonymy of word-forming morphemes. Based on the proposed criteria, three homonymous suffixes with the phonetic composition ng (ʎng/անոց) [ots (nots//anots)] are distinguished in the modern Armenian language: **-ng₁** (has the word-formation meaning “place”), **-ng₂** (with the word-formation meaning “a specific object” and “the name of an action as a phenomenon”), **-ng₃** (an inactive suffix, preserved only in a few borrowings from the Old Armenian language).

Keywords and phrases: homonymy of morphemes, polysemous suffixes, homonymous suffixes, variants of suffixes, lexical basis, semantic invariant, criteria for distinguishing polysemy and homonymy.

**ОБ ОМОНИМИИ СУФФИКСОВ
(СКОЛЬКО СУФФИКСОВ -ՈՅ (-ՕЦ) В АРМЯНСКОМ ЯЗЫКЕ?)**

МАНУК ФЕЛЕКЯН

Институт языка НАН РА

Научный сотрудник, кандидат филологических наук

manukfeleqyan@gmail.com

Аннотация

В статье рассматриваются вопросы дифференциации многозначности и омонимии словообразовательных морфем. На основе предложенных критериев в современном армянском языке выделяются три омонимичных суффикса с фонетическим составом *ng* (*ɪng/ʷɪng*) [*oc^с* (*noc^с//apoc^с*)]: *-ng¹* (имеет словообразовательное значение «место»), *-ng²* (со словообразовательными значениями «конкретный предмет» и «название действия как явления»), *-ng³* (неактивный суффикс, сохранившаяся лишь в нескольких заимствованиях из древнеармянского языка).

Ключевые слова и словосочетания: омонимия морфем, многозначные суффиксы, омонимичные суффиксы, варианты суффиксов, лексическая основа, семантический инвариант, критерии разграничения многозначности и омонимии.

Անառարկելի է համանունությունը, երբ գործ ունենք տարբեր կիրառության, տարբեր գործառույթներ ունեցող ձևությունների հետ: Հայերենում կան *ան* հնչյունական կազմն ունեցող մի քանի ձևություններ՝ ժամանակակից հայերենի ամենաարտադրողական ածանցներից *ան-* ժրխտական նախածանցը, *-ան-* բայական սոսկածանցը և ածականակերտ ու գոյականակերտ *-ան*, վերջածանցը: Լեզվում կան ևս երկու նույնահունչ վերջածանցներ՝ *-ան₂* (*արգելան*, *դեղձան*, *գլան*) և *-ան₃* (*արժան*, *բաժան*, *պարմունճան*): Սրանցից առաջին երեքը չունեն ծագումնային որևէ առընչություն, իսկ վերջին երկուսի կապը *-ան*, վերջածանցի հետ ստուգապես հաստատված չէ [տե՛ս 9, էջ 11-12]:

Եթե հայերենի բառահարաբերական ձևությունների համանունության մասին լեզվաբանական գրականության մեջ եղել են ոչ քիչ անդրադարձ-

ներ¹, հրապարակի վրա է Ն. Պառնասյանի ուշագրավ մենագրությունը [տե՛ս 7], ապա բառակազմական ձևային դրանք ավելի սակավաթիվ են: Հստակեցված չեն նաև բազմիմաստ և համանուն ածանցների տարբերակման չափանիշները: Միայն էդ. Աղայանն է ածանցների համանունությունը և բազմիմաստությունը տարբերակելու համար առանձնացնում երեք շատ ընդհանուր չափանիշ՝ ա) եթե ձևապես նույնական ածանցները կազմում են երկու տարբեր հարացույցներ [...], կամ՝ բ) եթե միևնույն խոսքի մասին են պատկանում, բայց որոշակիորեն տարբեր և նույնիսկ հակադիր իմաստներ ունեն [...], ապա դրանք համանուններ են, գ) եթե միևնույն հարացույցին պատկանող ձևապես նույնական ածանցները տարբեր հիմքերից կազմվող ածանցումներում տարբեր ածանցական իմաստներ են ստանում, ապա ունենք բազմիմաստ ածանց [...] [տե՛ս 2, էջ 290]: Համանունությունը որոշելու համար կարևոր է համարվում նաև ձևապես նույնական ածանցների տարբեր խոսքի մասեր կազմելը [տե՛ս 4, էջ 12]: Ամեն դեպքում, ինչպես բառային համանունության դեպքում է, գլխավոր չափանիշը մնում է իմաստաբային կողմը: Ինչպես նշում է Ա. Ա. Աբրահամյանը, «ողջ դժվարությունը կապվում է իմաստային կողմի հետ, որի հարաբերությամբ էլ որոշվում է հնչյունային (հնչույթային) նույնապիսի դրսևորում ունեցող մեկ այլ միավորի համանուն լինելը կամ չլինելը: Այդ դժվարությունը խիստ ակնբախ է հատկապես երկրորդական ձևայինների համանունությունը վերհանելու գործում, քանի որ [...] դրանց արտահայտած իմաստների մեջ վերացարկումն ուժեղ է» [1, էջ 23]: Այս պարագայում կարևոր է դառնում ածանցի իմաստային անփոփոխակի (ինվարիանտի) որոշումը: Ցանկացած ածանցի համար կարելի է առանձնացնել մի այնպիսի ընդհանուր (թեկուզ և երբեմն խիստ վերացական) նշանակություն, որը իր հիմնական կողմերով կրկնվում է այդ միավորի խոսքային յուրաքանչյուր իրացման մեջ:

Հայերենի բազմիմաստ և համանուն ածանցների տարբերակման սկզբունքների ոչ լիակատար մշակվածությունը շատ լավ երևում է *-ng* վերջածանցի և նրա տարբերակների (*-նց // -անց*) քննության ժամա-

¹ Հատկապես հիշատակելի է Ա. Ա. Աբրահամյանի «Հայերենի քերականական համանունության շուրջ» ծավալուն հոդվածը, տե՛ս [1, էջ 20-38]:

նակ: Ա. Սուքիասյանը և Ա. Մարգարյանը սրանք համարում են միևնույն ածանցի տարբերակներ [տե՛ս 8, էջ 278 և 6, էջ 227]: Ս. Էլոյանը և Ս. Գալստյանը ընդունում են *-ng* և *-նց* // *-անց* տարբեր (ոչ համանուն) ածանցներ [տե՛ս 5, էջ 187, 189 և 4, էջ 89, 161]: Էդ. Աղայանն առանձնացնում է *-անց* // *-նց* հնչումն ունեցող երկու համանուն ածանցներ [տե՛ս 2, էջ 288-289]: Մ. Ասատրյանը սրանք համարում է երեք ինքնուրույն բազմիմաստ ածանցներ: Հաշվի առնելով *-ng* ածանցի իմաստային անփոփոխակը, իսկ ավելի ճիշտ՝ անփոփոխակները, և կապակցելիությունը տարբեր հիմքերի հետ՝ փորձենք պարզել, թե հայերենում քանի *-ng* // *-նց* // *-անց* վերջածանց կա:

Այս ածանցը ավելանում է հիմնականում գոյականական, բայական, նաև մի քանի ածականական և դերանվանական հիմքերի վրա: Գոյականական հիմքերից կազմում է գոյականներ՝ «նախատիպ գոյականով նշվող առարկայի հետ առնչվող տեղ» ընդհանուր բառակազմական նշանակությամբ: «Տեղ» անփոփոխակը կարող է ունենալ բազմաթիվ տարբերակներ՝ «առարկան պահելու տեղ» (*զինանց, մթերանց, աղբանց*), «առարկան պատրաստելու, մշակելու, արդյունահանելու տեղ» (*աղյուսանց, բանջարանց*), «նախատիպ գոյականով անվանվող կենդանին պահելու, խնամելու, բուծելու տեղ» (*խոզանց, թռչնանց, մեղվանց*), եթե նախատիպը մարդ է ցույց տալիս, ապա «մարդկանց հավաքվելու, աշխատելու, զբաղվելու, բուժվելու տեղ» (*ուսուցչանց, ծերանց, հյուրանց, զորանց, գժանց*), «մարդկանց աշխատանքային գործունեությամբ զբաղվելու տեղ» (*արվեստանց, վարսավիրանց, մսավաճառանց*), «որևէ կերակուր պատրաստելու, ուտելու տեղ» (*խոհանց, գարեջրանց, խորովածանց, պոչիկանց*) և այլն: Այս բոլոր կազմություններում շատ հստակ է «տեղ» անփոփոխակը:

Գոյականական հիմքերով այլ կազմություններում «տեղ» անփոփոխակը նույնչափ հստակ չէ: Այսպես, Էդ. Աղայանը գրում է, որ *հիվանդանց, դարբնց, հյուսնց* և *գլխանց, թիկնց, թևնց* բաղադրությունների «միջև կա իմաստային բացահայտ հակադրություն. առաջին շարքի բառերը ցույց են տալիս որևէ բանի հատկացված տեղ, որևէ բանով բնորոշվող տեղ, երկրորդ շարքի բառերը՝ զգեստ կամ զգեստի մաս, որևէ բանի ծառայող շոր. իմաստներն այնքան տարբեր են, որ հնարավոր չէ նույն ածանցը համարել, ուստի և համանուններ են» [2, էջ 290]: Սակայն նշենք, որ այս կազմություններում «տեղ» նշանակությունը բոլորովին էլ

մթագնած չէ. մարմնի մասեր անվանող գոյականական հիմքերով կազմությունները հանգիստ կարող են մեկնաբանվել իբրև «նախատիպի համար նախատեսված, տվյալ *տեղում* կրվող հագուստ կամ զարդ», ինչպես և վարվել է Ս. Գալստյանը [տե՛ս 4, էջ 90-91]: Այսինքն՝ այս դեպքում մենք գործ ունենք միևնույն ածանցի իմաստային տարբերակի հետ: Առավել շատ է մթագնել այս ածանցի «տեղ»իմաստային անփոփոխակը չափի միավորներ կամ չափ ցույց տվող գոյականներով (այս դեպքում նաև թվականական և դերանվանական հիմքերով) կազմություններում՝ *դրամանոց, լիփրանոց, գրամանոց, տասանոց, քսանհազարանոց, ինչանոց, քանի(ս)անոց* և այլն: Այս կազմություններում «տեղ» անփոփոխակի առանձնացումը պահանջում է ավելի մեծ վերացարկում, մանավանդ որ սրանք ունեն թե՛ գոյականի և թե՛ ածականի խոսքիմասային պատկանելություն (առավել ճիշտ մեկնությամբ՝ ածականներից խոսքիմասային փոխանցմամբ առաջացած գոյականներ են): Լեզվում կան ածականական և գոյականական հիմքերով կազմված նաև «մաքուր» ածականներ, որոնք չեն վերածվել գոյականների՝ *թանկանոց, էժանանոց, տոննայանոց // տոնանոց, մղոնանոց* և այլն: Այնուամենայնիվ կարծում ենք, որ սրանցում դեռևս հնարավոր է նկատել «տեղ» նշանակությունը. «մի առարկա (չափելու սարք, կշռաքար, մետաղադրամ, խաղաթուղթ և այլն), որի վրա (որևէ *տեղում*) նշված է արժեք»: Ածականների դեպքում, ասենք՝ *թանկանոց ապրանք, տոննայանոց բեռ* (=մի ապրանք կամ բեռ, որի *վրա* նշված է թանկ գին կամ ծանր կշիռ): Մեր կարծիքով սա միևնույն բազմիմաստ ածանցի իմաստային ևս մեկ տարբերակ է:

Բայական հիմքերով կազմությունները ևս գոյականներ են: Այս հիմքով ենթակաղապարներից մեկով կազմված գոյականները կրկին ցույց են տալիս «*տեղ*, որտեղ կատարվում է նախատիպի ցույց տված գործողությունը»՝ *չորանոց, վաճառանոց, աշխատանոց, դիտանոց* և այլն: Սա ևս միևնույն բազմիմաստ ածանցի կիրառություններից մեկն է:

Առավել գործուն են այս ածանցով կազմությունների հետևյալ մասնակաղապարները՝ ա) «բնածայնական բայ + *-ոց*». այս գոյականներն ունեն «նախատիպի արտահայտած բնածայնության անունը» բառակազմական նշանակությունը՝ *բզզոց, խշխշոց, ծվծվոց, ֆշշոց* և այլն: բ) Այս բառակազմական նշանակությանը շատ մոտ իմաստ ունի բնածայնական ու նաև ոչ բնածայնական հիմքերով հաջորդ մասնակաղապարը. «նախատիպի արտահայտած գործողությունն իբրև անուն»՝ *կայթոց*,

խայթոց, խոնկոց, հաչոց, ործկոց և այլն: Նաև կրկնավոր հիմքերով՝ *վազվզոց, խզբզոց, ծակծկոց*: գ) Բայական հիմքերով կազմում է կոնկրետ (ոչ վերացական) առարկաների անուններ՝ *կապոց, թրջոց, սփռոց* և այլն: Այս մասնակաղապարով են կազմված բազմաթիվ գործիքների անվանումներ՝ *ջնջոց, խարտոց, սղոց, խրոց, մխոց* և այլն: Այս կազմություններում, ինչպես տեսնում ենք, չկա «տեղ» անփոփոխակը: Հիշյալ բաղադրությունների *-ոց* ածանցը պետք է համարվի նախորդի համանունը: Հետևաբար, հայերենում պետք է տարբերակվեն *-ոց* (*-նոց* // *անոց*) հնչյունական կազմն ունեցող մի քանի համանուն վերջածանցներ՝ ա) *-ոց₁*, գոյականական, մասամբ էլ բայական, ածականական և դերանվանական հիմքերից կազմում է գոյականներ՝ «տեղ» բառակազմական ընդհանուր նշանակությամբ, բ) *-ոց₂*, բայական հիմքերով կազմում է գոյականներ՝ «կոնկրետ առարկա (հիմնականում՝ գործիք)» և «գործողության՝ որպես երևույթի անուն» բառակազմական նշանակություններով, գ) հայերենում կա նախորդների հետ ծագումնաբանական կապ չունեցող նաև երրորդ *-ոց₃* ածանցը, որը հին հայերենի հոլովական վերջավորություններից էր և պահպանվել է մի քանի գրաբարյան քարացած կազմություններում՝ *հայոց, գլուխգործոց, Վայոց (ծոր)*:

Բազմիմաստ և համանուն բառերի տարբերակման օժանդակ միջոց է ենթադրյալ համանունների համար հոմանիշների ընտրությունը և ապա դրանց համեմատումը: Այս չափանիշը կարելի է կիրառել նաև ածանցների և ընդհանրապես ձևույթների համանունությունը որոշելիս: *-ոց* ածանցը (մեր առանձնացրած *-ոց₁-ը*)՝ որպես «տեղ» իմաստային անփոփոխակի կրող, հոմանիշ է *-արան* և *-ստան* ածանցներին (*ուսուցչանոց, ծաղկանոց* և *դասարան, ծաղկաստան*), իսկ «կոնկրետ առարկա (հիմնականում՝ գործիք)» նշանակությամբ (*-ոց₂-ը*)՝ *-իչ*, *-ակ₂* բազմիմաստ ածանցների առանձին նշանակություններին (*խարտոց, սղոց* և *քերիչ, հաշվիչ, լծակ, ծորակ*):

Եզրակացություններ

1. Ածանցների համանունության որոշման գլխավոր չափանիշը իմաստաբանականն է: Համանուն ածանցները իրենց խոսքային իրացման մեջ չունեն իմաստային առնչակցության որևէ եզր:

2. Կարևոր է նաև ածանցների ձևաբանական նշանակությունը, այսինքն՝ տվյալ ածանցի՝ այս կամ այն խոսքի մաս կերտելու բառակազմական կարողությունը:

3. Տարբեր հիմքերի հետ զուգորդվելու ունակությունը ևս կարևոր է ածանցների համանունությունը և բազմիմաստությունը տարբերակելու համար:

4. Համանունության որոշման օժանդակ միջոց է ածանցների հոմանիշների ընտրությունը և դրանց հետագա համեմատումը:

5. Այս չափանիշները հաշվի առնելով՝ արդի հայերենում պետք է առանձնացնել *-ng* (*-նց* // *-անց*) հնչյունական կազմն ունեցող երեք համանուն վերջածանց. ա) *-ng₁*, հիմնականում գոյականական հիմքերից կազմում է գոյականներ՝ «տեղ» բառակազմական ընդհանուր նշանակությամբ, բ) *-ng₂*, բայական հիմքերով կազմում է գոյականներ՝ «կոնկրետ առարկա» և «գործողության՝ որպես երևույթի անուն» բառակազմական նշանակություններով, գ) *-ng₃*, պահպանվել է մի քանի գրաբարյան քարացած կազմություններում:

Գրականության ցանկ

1. **Աբրահամյան Ա. Ա.**, Հայերենի քերականական համանունության շուրջ // «Պատմա-բանասիրական հանդես», 1974, 1, էջ 20-38:

2. **Աղայան Էդ.**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, ԵՊՀ հրատ., Ե., 1984:

3. **Ասատրյան Մ.**, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, հ. Ա, ԵՊՀ հրատ. Ե., 1970:

4. **Գալստյան Ս.**, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, ԵՊՀ հրատ., Ե., 1978:

5. **Էլոյան Ս.**, Ածանցները ժամանակակից հայերենում, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Ե., 1963, 242 էջ:

6. **Մարգարյան Ա.**, Ժամանակակից հայոց լեզու, ԵՊՀ հրատ., Ե., 1990:

7. **Պառնասյան Ն.**, Քերականական համանունները ժամանակակից հայերենում, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1979:

8. **Սուքիասյան Ա.**, Ժամանակակից հայոց լեզու, ԵՊՀ հրատ., Ե., 2004:

9. **Զահուկյան Գ.**, Հին հայերենի վերջածանցների ծագումը // «Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր», պրակ 2, «Անանիա Շիրակացի» հրատ., Ե., 1998:

ԲԱՆԱՎԵՃ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ. ДИСКУССИИ И
ОБСУЖДЕНИЯ. DISCUSSIONS

**ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ
ԱՐԴԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՄ**

ԱՄԱԼՅԱ ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ

Բանասիր. գիտ. Թեկնածու

DOI: 10.57236/1829-0183-2023.2(29)-53

Համառոտագիր

Հոդվածում քննվում են շարահյուսական կապակցության եղանակների (համաձայնություն, առդրություն) դրսևորումները արդի գեղարվեստական արձակում:

Համաձայնությունը նախադասության անդամների կապակցման եղանակ է, որը դրսևորվում է նրանով, որ իրար հետ կապված անդամներն ստանում են միևնույն քերականական կարգերը, ուրեմն և համապատասխան քերականական ձևավորում: Ժամանակակից հայերենում ամենաբնորոշը ենթակայի և ստորոգյալի համաձայնությունն է: Դրա հետ միաժամանակ պետք է նկատի ունենալ, որ համաձայնությունն ունի շատ յուրահատկություններ՝ պայմանավորված տարբեր հանգամանքներով:

Քննությունից պարզվում է, որ արդի գեղարվեստական արձակում ենթակայի և ստորոգյալի համաձայնությունը հիմնականում համապատասխանում է գրական հայերենի օրինաչափություններին:

Առդրությունը քերականական կախման այն եղանակն է, որ հանդես է գալիս շարահյուսության միջոցով:

Արդի գեղարվեստական արձակում առդրություն շարահյուսական կապակցության դրսևորումները երբեմն չեն համապատասխանում գրական հայերենի օրինաչափություններին՝ պայմանավորված ոճական նկատառումներով:

Բանալի բառեր և բառակապակցություններ՝ շարահյուսական կապակցություններ, շարահյուսական կապակցության եղանակներ, համաձայնություն, ենթակա, ստորոգյալ, առդրություն, որոշիչ, շարահյուսություն:

**MANIFESTATIONS OF TYPES OF SYNTACTIC CONNECTIONS
IN MODERN FICTION**

AMALYA BARSEGHYAN
RA NAS Language Institute, Ph.D.

Abstract

The article examines the types of manifestations of syntactic connections (in this particular case, the connection between subject and predicate, agreement and adjacency) in modern literary prose. Study of the actual rich material showed:

(a) The coordination of the manifestations of syntactic types of combinations mainly corresponds to the laws of the Armenian literary language.

(b) The adjacency of manifestations of syntactic types of combination in some cases does not correspond to the stylisation.

Keywords and phrases: syntactic combination, types of syntactic connection, soloing, subject, predicate, definition, word order.

**ПРИМЕНЕНИЕ ВИДОВ СИНТАКСИЧЕСКИХ СОЧЕТАНИЙ
В СОВРЕМЕННОЙ ХУДОЖЕСТВЕННОЙ ПРОЗЕ**

АМАЛІЯ БАРСЕГЯН

Институт языка им. Р. Ачаряна, НАНРА, к.ф.н.

Аннотация

В статье рассмотрены виды проявления синтаксических связей (в данном конкретном случае связи между подлежащим и сказуемым, согласованием и примыканием) в современной художественной прозе. Изучение фактического богатого материала показало:

(а) согласование проявлений синтаксических видов сочетания в основном соответствует законам армянского литературного языка.

(б) Примыкание проявлений синтаксических видов сочетания в некоторых случаях не соответствует закономерностям армянского литературного языка. Это обусловлено необходимостью стилизации.

Ключевые слова и словосочетания: синтаксическое сочетание, виды синтаксической связи, согласование, подлежащее, сказуемое, определение, порядок слов.

Ներածություն

Ենթակայի և ստորոգյալի կապակցությունը կազմում է երկկազմ նախադասության կառուցվածքային հիմքը: Ենթակայի և ստորոգյալի

միջև գոյություն ունեցող ստորոգական հարաբերությունը տարբեր կերպ են գնահատում հայ (և ոչ միայն հայ) լեզվաբանները:

Դրանք են՝

ա) Ստորոգյալն են համարում նախադասության գլխավոր անդամ (բայակենտրոն սկզբունքի կողմնակիցները):

բ) Ենթական են համարում նախադասության գլխավոր անդամ:

գ) Ստորոգյալը և ենթական համարում են նախադասության գլխավոր անդամներ (այդպես ենք կարծում նաև մենք):

Ենթակայի և ստորոգյալի քերականական համարժեքության տեսակետը արդի հայ շարահյուսագիտության մեջ գերիշխողն է, թեև ընդհանուր լեզվաբանության մեջ ենթական ներկայացվում է բայի քերականական լրացում:

Այսպես՝ Մ. Աբեղյանը ենթական համարում է դիմավոր բայի լրացում, իսկ դրանց միջև առկա յուրահատուկ կապը կոչում է ներունակություն, որն արտահայտվում է դիմաթվային համապատասխան ձևով, հատուկ է համաձայնությանը [1, 397]: Մ. Աբեղյանից հետո հայ քերականագիտության մեջ բայակենտրոն սկզբունքն են պաշտպանում նաև Է. Աթայանը՝ ենթակայի և ստորոգյալի հարաբերությունը դիտելով ստորադասական հարաբերություն, Ռ. Իշխանյանը [8, 112], Հ. Հարությունյանը և ուրիշներ [6, 64]:

Հ. Հարությունյանի կարծիքով. «Ենթակայի և ստորոգյալի կապակցությունը այլ բնույթի կապակցություններից տարբերվում է նրանով, որ այստեղ միաժամանակ գործում են կապակցության երկու եղանակ՝ համաձայնություն և կառավարում (միայն հոլովական)» [9, 50-61]: Իսկ Գ. Զահուկյանը գրում է. «Ենթական և ստորոգյալը իրար նկատմամբ գրավում են երկակի դիրք և չի կարելի մեկը համարել գլխավոր, մյուսը՝ լրացական անդամ» [13, 309]: Ավելի վաղ նման համարժեքության տեսակետ է հայտնել նաև Ս. Աբրահամյանը, որ «ենթակայի և ստորոգյալի հարաբերությունը ոչ ստորադասական է, ոչ համադասական, այլ հավասարական-վերագրման հարաբերություն» [4, 277]:

Համաձայնություն: Նախադասության քերականական կարգերը հիմնականում հանդես են գալիս ենթակայի և ստորոգյալի կապակցության մեջ: Այդ կարգերից համաձայնությունը նախադասության անդամների կապակցման եղանակ է, որը դրսևորվում է նրանով, որ իրար հետ կապված անդամներն ստանում են միևնույն քերականական կարգերը,

ուրեմն և՛ համապատասխան քերականական ձևավորում: Հին հայերենի համեմատությամբ ժամանակակից հայերենում կապակցման այս եղանակը զգալի չափով սահմանափակել է իր ոլորտը: Ժամանակակից հայերենում ամենաբնորոշը ենթակայի և ստորոգյալի համաձայնությունն է (ենթակայի և ստորոգյալի համաձայնության վերաբերյալ կարևոր դիտողություններ են հանդիպում հայերենի շարահյուսությանը նվիրված մի շարք աշխատություններում): Դրա հիմքում ընկած է այն իրողությունը, որ ստորոգյալը ենթակայի էության կամ նրա որևէ հատկանիշի դրսևորումն է, որը ենթակային է վերագրվում դեմքով: Եվ բնական է, որ այդ կապակցության բաղադրիչները՝ ենթական և ստորոգյալը, պետք է համապատասխանեն միմյանց: Դրա հետ միաժամանակ պետք է նկատի ունենալ, որ համաձայնությունը ունի շատ յուրահատկություններ՝ պայմանավորված տարբեր հանգամանքներով:

Քանի որ ենթակայի և ստորոգյալի դիմային համաձայնությունը հանգամանորեն քննված է, և չկան տարակարծությունների տեղիք տվող երևույթներ, ուստի անդրադարձել ենք ենթակայի և ստորոգյալի թվային համաձայնությանը արդի գեղարվեստական արձակում:

Քննության համար անհրաժեշտ փաստական նյութ քաղել ենք 2000 թվականից հետո հրատարակված գեղարվեստական գրականությունից (արձակ):

Ենթակայի և ստորոգյալի թվային համաձայնության ամենաընդհանուր և հայտնի օրինաչափությունն այն է, որ եզակի ենթակայի հետ սովորաբար դրվում է եզակի ստորոգյալ, հոգնակի ենթակայի հետ՝ հոգնակի ստորոգյալ: Ինչպես՝ «Առնոն հասկացավ, որ Մոսկովյան (փխ.՝ մոսկովյան) իր արկածների արձագանքները Երևան են հասել» (ԱԱՄ, էջ 67):

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում հավաքական գոյականով արտահայտված ենթական: Այն, որպես կանոն, ունի եզակի թվով ստորոգյալ, այսինքն՝ ձևային համաձայնությունը վերածվել է հստակ օրինաչափության: Օրինակ՝ «Մուտքի մոտ բազմություն էր հավաքված» (ԱՊՌ, էջ 114): Սակայն հավաքական գոյականով արտահայտված եզակի ենթակայի հետ հոգնակի ստորոգյալի գործածությունը, որ անցյալում հանդիպում էր հատկապես գեղարվեստական խոսքում, բարբառայնության արտահայտություն է և գրական հայերենի արդի փուլում կանոնական չէ: Մ. Աբեղյանը այս երևույթն անվանել է բակառություն [1, 408]:

Ժողովրդախոսակցական ոճի դրսևորում պետք է համարել հոգնակի կամ բազմակի ենթակաների հետ եզակի ստորոգյալի գործածությունը: Սա գրական լեզվի կանոնների խախտում է: «Խաղաղվե՛ք, այսպիսի գործողություն է պահանջում (փխ.՝ պահանջում են) դեպքն ու ժամանակը» (ԼԽԱ, էջ 113): «Ազգային վեպը վերածվում է Միերի դռան քարի, մի միասնության, որ այո, սահմանափակ է, այս, նման պատմականությունն ու արվեստը տարածելի չէ (փխ.՝ տարածելի չեն) շատ ժողովուրդների վրա» (ԼԽՄ, էջ 251): «Բայց հեղինակն ավելին է ասում՝ առավել հմայիչը ու սարսափելին. Միայն բացառիկները չէ (փխ.՝ բացառիկները չեն), բոլորս ենք մենակ...» (ԱԱՄ, էջ 7):

Երբ բազմակի ենթակաները իմաստով մոտ են և միասին արտահայտում են մեկ հասկացություն, ստորոգյալը դրվում է եզակի թվով: Ինչպես՝ «Իր համար մարդու ներսը, հոգևորն ու ներաշխարհն է կարևոր» (ԴՄՌ, էջ 32): Ստորոգյալը կարող է դրվել եզակի թվով, երբ բազմակի ենթակաները իմաստով մոտ չեն, սակայն համատեքստում ունեն շատ սերտ իմաստային կապ: Օրինակ՝ «Հատկապես գյուղերում ծնված տղաների փորն ու միտքը կապվում էր մրգի իրենց օրաբաժինը չստանալուց» (ԱԱ, էջ 51): Այստեղ բազմակի ենթակաները միոգ չստանալու հետ կապված լինելով է պայմանավորված ստորոգյալի եզակի թիվը:

Հոգնակի ենթակայի հետ պետք է գործածել հոգնակի ստորոգյալ: Օրինակ՝ «Թիմի ներսում կոնֆլիկտներ սկսվեց (փխ.՝ սկսվեցին)» (ԱՊՕ, էջ 30):

Հետաքրքրական է մի շարք դերանուն ենթակաների և ստորոգյալների համաձայնությունը՝ պայմանավորված այդ դերանունների իմաստային յուրահատկությամբ (միայն եզակի իմաստով գործածվող դերանուններ, միայն հոգնակի իմաստով գործածվող դերանուններ, իմաստային երկակիությամբ գործածվող դերանուններ) [3, 60-66]: Օրինակ՝ «Ամեն մեկս ընտրում ենք մի հրեշտակ, մոտենում ենք, վերցնում» (ԱՊՕ, էջ 9): Այստեղ շեշտվում է ամբողջության մեջ մտնող անձերը առանձին-առանձին (ամեն մի որոշյալ դերանվան անկախ գործածության ժամանակ երկրորդ բաղադրիչը դառնում է մեկը): Ինչպես նկատել է Ս. Աբրահամյանը, եզակի ենթակայի հետ սովորաբար հոգնակի ստորոգյալ է գործածվում, երբ ենթական արտահայտված է *ս*, *դ* դիմորոշ հոդ ունեցող դերանուններով, թվականներով և որոշ ածականներով [3, 60-66]:

Որոշ դեպքերում ենթակայի և ստորոգյալի թվային համաձայնության հարցում որոշակի դեր է կատարում ենթակայի լրացումը և հատկապես որոշիչը՝ իր իմաստային յուրահատկության պատճառով: Օրինակ՝ Տարիներ առաջ բանակից զորացրված հերոսի յուրաքանչյուր *քայլ, ժեստ, խոսք դառնում է բացահայտում* (ԱՊՅ, էջ 95):

Կան նաև ենթակայի և ստորոգյալի կապակցության համաձայնությանը վերաբերող շատ այլ ուշագրավ երևույթներ: Դրանցից նշելի է այն, որ եզակի ենթակայի հետ, որը նաև հավաքական գոյական չէ, օրինաչափորեն դրվել է հոգնակի ստորոգյալ, այդ թվում՝ հոգնակի ստորոգելիով: Այսպիսի կապակցությունում ենթակայի դերում հանդես եկող բառը ձեռք է բերում հասկացական ծավալի ընդլայնում, և դա հնարավորություն է տալիս, որ ստորոգելին և առհասարակ ստորոգյալը նրա հետ կապվի հոգնակի թվով: Այսպես՝ «... Իսկ կյանքում *միակ բանը*, որ ոչ ոք, հավանաբար, չի հաշվել, *հիշողություններն են*» (ԴՍՌ, էջ 15): «Որովհետև վեպում *գլխավորը* հենց այս զուգահեռ-չհատվող *ժամանակներն են*» (ԱԱՄ, էջ 6):

Մաս ցույց տվող հավաքական գոյական ենթական ունենում է և՛ եզակի, և՛ հոգնակի թվով ստորոգյալներ, բայց օրինաչափականը, առավել սովորականը նման դեպքում եզակի ստորոգյալն է: Ինչպես՝ «Իսկ գավառներից եկած համարձակների *մեծ մասը*, որ *ուզում էին* զոռով մտնել, *հեղձամաղձուկ եղավ*» (ԼԽԱ, էջ 84): «Իսկ ժողովրդի *մեծ մասը* մուրալով և օրը քաղցած է *մթնեցնում*» (ԼԽԱ, էջ 135):

Որոշ բայերի հարակատար դերբայը գոյականաբար գործածվելիս կարող է ունենալ հավաքական իմաստ, այդ դեպքում նրա հետ դրված ստորոգյալը կարող է ունենալ հոգնակի թիվ: Օրինակ՝ «*Մնացածը վրստահում են* սրանց, բայց ոչ Սարոյանին» (ԱԱՄ, էջ 191): «Հիմա կարևորը «Ալֆա-2-ը» տիեզերք թոցնելն է, *մնացածն* անցողիկ *բաներ են*» (ԱԱՄ, էջ 196):

Մնացած-ը գոյականաբար գործածվելիս՝ ոչ հավաքական իմաստով, կարող է ունենալ նաև եզակի թվով դրված ստորոգյալ: «*Մնացածը* տեխնիկայի *գործ է*» (ԱԱՄ, էջ 213):

Ենթակայի և ստորոգյալի համաձայնության հարցում հաճախ մեծ դեր է կատարում կառույցի ձևային կողմը: Եթե եզակի ենթակայի գործողությանը մասնակից է նաև մեկ ուրիշը, և դա արտահայտված է սեռական հոլովածակի և *հետ* կապի միջոցով, ստորոգյալը դրվում է եզակի

թվով [11, 192]: Քանի որ *հեյր* կապով կապվող բառով նշվում է գործողություն կատարող այլ առարկա, որը չի դրվում ենթակայի պաշտոնով և ուրեմն չի ազդում ենթակայի թվային հատկանիշի վրա: Այստեղ միասնության պարագան նույնպես կատարում է գործողություն (ինչպես ենթական), թեև լրացում է: Մինչդեռ Ա. Պաչյանի և Լ. Խեչոյանի ստեղծագործություններում ստորոգյալը նման դեպքերում դրվում է հոգնակի թվով, որը ճիշտ չէ: Օրինակ՝ «Տերևները թրթռում էին հողի վրա ցնցվող մարմնից, որովհետև *պապը, ում հեյր* ամեն օր *ջրում էին* այգու ծառերը...» (ԱՊՑ, էջ 161): «Երբ հասկացել էր՝ խելագարվելու է, *Սանասարի հեյր* Բաղդադ *էին վերադարձել*՝ հանձնվելու կուռքին» (ԼԽՄ, էջ 309):

Այսպիսով՝ արդի գեղարվեստական արձակում ենթակայի և ստորոգյալի համաձայնությունը հիմնականում համապատասխանում է գրական հայերենի օրինաչափություններին:

Առդրություն: «Առդրությունը նախադասության անդամների կամ բառակապակցության բաղադրիչ բառերի ստորադասական շարահյուսական կապի ձևերից մեկն է, երբ մի բառի կախվածությունը մյուսից չի արտահայտվում բառաձևով, այլ տեղով, իմաստով, դրսևորած քերականական հարաբերության ոչ ինքնուրույն բնույթով» [12, 25]:

Լեզվաբաններից ոմանք կախումը շարահյուսական կապակցության առանձին եղանակ են համարում առդրությունից: Ինչպես օրինակ, Արտաշես Սարգսյանը՝ թվարկելով այն հատկանիշները, որոնցով այն տարբերվում է կապակցման մյուս եղանակներից:

Դրանք են՝

ա) կախման դեպքում թվի քերականական կարգը թելադրվում է կապակցվող եզրերից մեկի կողմի, այլ ոչ թե երկուսն էլ դրվում են նույն թվով, ինչպես համաձայնության դեպքում,

բ) ի տարբերություն կառավարման՝ կապակցվող եզրերից մեկը պահանջում է ոչ թե հոլովական կամ հոլովակապային ձևավորում, այլ թվային,

գ) լրացումն է թելադրում լրացյալի քերականական ձևավորումը և ոչ թե հակառակը,

դ) ի տարբերություն առդրական կապակցության, որի դեպքում կապը իրականանում է շարադասության (նաև հնչերանգի միջոցով) միջոցով, այս դեպքում առկա է թվի կարգով կապակցման պահանջ» [13, 39-41]:

Իսկ Ռ. Իշխանյանը կախումը համարում է առդրության մի դրսևորում, մի տեսակ: Նա գրում է. «Առդրության մի տեսակը կոչվում է կախում. Դա այն է, երբ չհղյուվված լրացումը թելադրում կամ պարտադրում է իր լրացյալի (գերադասի) թիվը: Սա հիմնականում վերաբերում է որոշիչ-որոշյալ կապակցության այն դեպքերին, երբ որոշիչը իր բառային իմաստի թելադրանքով պահանջում է որոշյալի եզակի կամ հոգնակի թիվ: Այսպես՝ փունջ-փունջ, խումբ-խումբ, մեծաքանակ, բազմաթիվ և այլ որոշիչների հետ գործածվում է հոգնակի լրացյալ, որևէ, յուրաքանչյուր, մեկ, մի և այլ որոշիչների հետ՝ եզակի որոշյալ» [8, 33]: Թեև Մ. Աբեղյանը «կախում» տերմինը գործածում է այլ իմաստով. «Կախման հարաբերությունը քերականության մեջ կոչվում է խնդրառություն կամ վարում» [1, 324]:

Հայ քերականագիտության մեջ օգտագործվում է նաև «շարահասություն» տերմինը, որը չի ընդունում Գ. Զահուկյանը: Նրա կարծիքով շարահյուսական կապակցության եղանակը շփոթվում է նրա իրականացման միջոցի հետ: «Առդրությունը քերականական կախման իրականացման այն եղանակն է, որ հանդես է գալիս շարահասության միջոցով, այսինքն՝ ընդհանուր կաղապարի մեջ լրացումները գրավում են որոշակի դիրք լրացյալի և իրար նկատմամբ» [13, 424]: Ըստ Գ. Զահուկյանի՝ գոյականական կապակցության կաղապարն է. «դերանուն+թվական+ածական+գոյական (այն երկու նոր տները)» [13, 294]:

Ի տարբերություն բանաստեղծական խոսքի՝ արծակ ստեղծագործություններում առդրություն շարահյուսական կապակցության եղանակն ունի սովորական դրսևորում (որոշիչը և հատկացուցիչը նախորդում են իրենց լրացյալներին): Օրինակ՝ «Ազգային վեպը վերածվում է Միերի դռան քարի...» (ԼԽՄ, էջ 251): «Կարճապրև միտինգից հետո ժողովրդային զանգվածը ձգվեց դեպի ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձանը...» (ՌԴԵ, էջ 215):

Սակայն սովորական չէ հատկացուցիչին լրացնող որոշիչի շարահասությունը. այն պետք է դրվի հատկացուցիչից առաջ: Օրինակ՝ «...Դա արվեստասեր հասարակության պահանջ չէր» (ՌԴԵ, էջ 396): «...ո՞նց եմ սիրում նոյեմբերյան երևանի բույրը» (ԱՇԳ, էջ 78):

«Մի թվականով (երբեմն էլ անորոշ դերանունով) արտահայտված որոշիչը որպես կանոն դրվում է ածական որոշիչից առաջ» [5, 406]: Օրինակ՝ «Նա ընդամենը փայլուն ընդունակություններով դպրոցական մի ա-

շակերտ էր (փխ.՝ մի դպրոցական աշակերտ էր)» (ՌԴԵ, էջ 215): «Նոյեմբերյան մի գիշեր (փխ.՝ մի նոյեմբերյան գիշեր) անձրև տեղաց և առավոտյան արդեն աշուն էր» (ԱՇԳ, էջ 78): Սակայն երբ անձրև տեղաց, և դեղնած տերևները ցած թափվեցին, գեղեցիկ մի տերևաթափ (փխ.՝ մի գեղեցիկ տերևաթափ) սկսվեց, գեղեցիկ աշուն» (ԱՇԳ, էջ 78): «Հեղինակի համար ոչ պակաս թանկ արծակ մի ստեղծագործություն (փխ.՝ մի ոչ պակաս թանկ արծակ ստեղծագործություն)» (ԱՇԳ, էջ 17): «Դա անչափելի մի տարածք էր (փխ.՝ մի անչափելի տարածք)» (ԱԱՄ, էջ 299):

Երբեմն մի որոշիչը, որպես կանոն, գործածվում է ածականից առաջ, սակայն հատկացուցիչն է դրված որոշիչից հետո: Այսպես՝ «Մի հայ մարդու վարձեց, որն արտոնագիր ուներ բյուզանդական շուկաներում ու հրապարակներում բանասացության (փխ.՝ բանասացության բյուզանդական շուկաներում ու հրապարակներում)» (ԼԽԱ, էջ 215):

Երբեմն առդրության ոչ կանոնական դրսևորումներ են հանդիպում՝ ոճական նկատառումներով: Օրինակ՝ «...այժմ ավելի տենչում է արյունն այս մարտիկի» (ԱՊՕ, էջ 60), «Թավ խոտի պես ծփուն աղվամազերն իմ դավաճանում են հուզմունքս» (ԱՊՕ, էջ 100):

Եզրակացություններ

Հոդվածում քննվել են շարահյուսական կապակցության (տվյալ դեպքում՝ ենթակայի և ստորոգյալի համաձայնություն, առդրություն) եղանակների դրսևորումները արդի գեղարվեստական արձակում: Փաստական հարուստ նյութի քննությունը ցույց է տվել.

ա) համաձայնություն շարահյուսական կապակցության եղանակի դրսևորումները հիմնականում համապատասխանում են գրական հայերենի օրինաչափություններին:

բ) Առդրություն շարահյուսական կապակցության եղանակի դրսևորումները երբեմն չեն համապատասխանում գրական հայերենի օրինաչափություններին՝ պայմանավորված ոճական նկատառումներով:

Գրականության ցանկ

1. Աբեղյան Մ., Երկեր, հ. 2, Ե., 1974:
2. Առաքելյան Վ., Հայերենի շարահյուսություն. Պարզ նախադասություն, Ե., 1958:

3. Արրահամյան Ս., Արդի հայերենի դերանունները, Ե., 1956:
4. Արրահամյան Ս., Ժամանակակից հայերենի քերականություն, Ե., 1969:
5. Արրահամյան Ս., Ն. Պառնասյան և ուրիշ., Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Ե., 1976:
6. Գյուլբուդադյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1988:
7. Իշխանյան Ռ., Արդի հայերենի շարահյուսություն. Պարզ նախադասություն, Ե., 1986:
8. Հարությունյան Հ., Կառավարումը ժամանակակից հայերենում, Ե., 1983:
9. Պետրոսյան Հ., Ս. Գալստյան, Լեզվաբանական բառարան, Ե., 1975:
10. Պալասանյան Ս., Քերականություն մայրենի լեզվի (մաս Ա, Բ, Գ), Թիֆլիս, 1894:
11. Զահուկյան Գ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974:
12. Սարգսյան Ա., Ժամանակակից հայերենի շարահյուսական կապակցության մի եղանակիմասին, Լեզու և լեզվաբանություն, հմ. 1-2, Ե., 2015:
13. Атаян Э., Понятие элементарной синтаксической структуры, Е., 1964.

Համառոտագրություններ

- ԱԱՄ – Աշոտ Աղաբաբյան, Մենակը, Ե., 4-րդ հրատ., Բուկինիստ, 2021. 352 էջ:
- ԱՊՌ – Արամ Պաչյան, Ռոբինզոն, Ե., էջ հրատ., 2019, 164 էջ:
- ԱՊՕ – Արամ Պաչյան, Օվկիանոս, Ե., Անտարես հրատ., 2014, 200 էջ:
- ԱՊՑ – Արամ Պաչյան, Ցտեսություն ծիտ, Ե., Անտարես հրատ., 2012, 224 էջ:
- ԱՀՄ – Արսեն Համբարյան, Մարդանոց, Ե., ՀԳՄ հրատ., 2008, 140 էջ:
- ԱՇԳ – Առլեն Շահվերդյան, Գարնանային ռեքվիեմ, Ե., հեղինակային հրատ., 2016, 148 էջ:

ԴՍՌ – Դավիթ Սամվելյան, Ռոդենի ձմեռը, Ե., Էդիթ պրինտ
հրատ., 2019, 160 էջ:

ԼԽՄ – Լևոն Խեչոյան, Միերի դռան գիրքը, Ե., Անտարես հրատ.,
2013, 396 էջ:

ՌԴԵ – Ռազմիկ Դավոյան, Եթե աստված կամենա, Տիգրան Մեծ
հրատ., 2008, 528 էջ:

ՎՍՍ – Վահրամ Սահակյան, Սև աչքեր, ճերմակ սփռոց, Ե., Հեղի-
նակային 2-րդ հրատ., 2004, 224 էջ:

**ԱՇՏԱՐԱԿ ՏԵՂԱՆՎԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԼԵՉՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԽՈՍՔՈՒՄ
ԱՇՈՏ ԳԱԼՍՏՅԱՆ**

Բանասիր. գիտ. դոկտոր
ash.galstyan@mail.ru

DOI: 10.57236/1829-0183-2023.2(29)-64

Համառոտագիր

Աշտարակը Հայաստանի հնագույն բնակավայրերից է: Այստեղ կան վաղ ժամանակների պատմամշակութային կոթողներ, բրոնզեդարյան արձաններ, բնակատեղիներ, դամբարաններ, այլ հուշարձաններ: Աշտարակը համարվել է Արագածոտն գավառի շենքերից մեկը: Նախկինում կոչվել է Աշտարակաց գյուղ, իսկ 1963 թ. դարձել է քաղաք: Աշտարակի մասին հիշատակություններ կան տարբեր հեղինակների գործերում՝ Ղ. Ալիշան, Պ. Պողոջյան, Ս. Շահազիզ, Գ. Էմին, Վ. Պետրոսյան, նաև այն հուշագիրների վավերագրություններում, որոնց կյանքի այս կամ այն հատվածն աղերսվել է այս հնամյա բնակավայրին: Աշտարակի մասին գրել են նաև այլազգիները: Հեղինակներից շատերը տվել են Աշտարակ տեղանվան և նրա խորհրդանիշների գեղարվեստական նկարագիրը, լեզվական տարբեր բնութագրիչներով հյուսել հայտնի բնակիչների ու ներկայացրել լեզվաոճական բնութագրերը:

Բանալի բառեր և բառակապակցություններ՝ Աշտարակ, տեղանուն, գրողներ, գիտնականներ, նկարագրություն, տեքստ, բանաստեղծություն, արձակ, երկխոսություն, հասկացույթ:

**LINGUISTIC BASES OF DESCRIPTION OF ASHTARAK LOCATION
NAME IN ARTISTIC SPEECH
ASHOT GALSTYAN**

Doctor of Philological Sciences
ash.galstyan@mail.ru

Abstract

Ashtarak is one of the oldest settlements in Armenia. Here there are historical and cultural monuments, bronze age statues, settlements, tombs and other monuments of early times. Ashtarak was considered as one of the oldest constructions of the Aragatsotn province. Previously it was called Ashtarakats village, and in 1963 it became a town.

There are many references about Ashtarak in the works of various authors, such as Gh. Alishan, P. Proshyan, S. Shahaziz, Gh. Emin, V. Petrosyan. There are also references about Ashtarak in the documentaries of those memoirists, whose this or that part of life was addicted to this ancient settlement. Foreigners have also written about Ashtarak. Many of these people gave an artistic description of Ashtarak settlement, presented Ashtarak, its

symbols, the portraits and characteristics of Ashtarak people with different linguistic characteristics.

Keywords and phrases: Ashtarak, toponym, writers, scholars, description, text, poem, prose, dialogue, concept.

**ЛИНГВИСТИЧЕСКИЕ ОСНОВЫ ОПИСАНИЯ ТОПОНИМА
АШТАРАК
В ХУДОЖЕСТВЕННОЙ РЕЧИ
АШОТ ГАЛСТЯН**

д. филол. н.
ash.galstyan@mail.ru

Аннотация

Аштарак является одним из древнейших населенных пунктов Армении. Здесь есть историко-культурные памятники древних времен, статуи бронзового века, жилища, гробницы и другие памятники. Аштарак считался одним из поселений провинции Арагацотн. В прошлом назывался деревней Аштарак, а в 1963 г. стал городом.

Про Аштарак есть упоминания в трудах разных авторов – Г. Алишан, П. Прошян, С. Шахазиз, Г. Эмин, В. Петросян, а также в свидетельствах тех мемуаристов, чья жизнь на определенном отрезке была связана с этим древним населенным пунктом. Про Аштарак писали также представители других национальностей. Многие из этих людей дали художественное описание населенного пункта Аштарак, различными языковыми средствами представили Аштарак, его символы, портреты и характеристики известных аштаракцев.

Ключевые слова и словосочетания: Аштарак, топоним, писатели, ученые, описание, текст, стихотворение, проза, диалог, понятие.

Ներծառություն

Հայ գեղարվեստական արձակում շատ են Հայաստանի պատմամշակութային տեղանունների գեղարվեստական նկարագրություններն ու տարատեսակ անդրադարձումները: Դարերից եկող բնակավայրերի շարքում առանձնանում է Աշտարակ տեղանունը, որի գեղարվեստական նկարագրությունն ըստ էության ներկայացնում են տեղացի արվեստագետները, այդ բնակավայրում երբևէ ապրած անձինք: Այդպիսի բնագրերում առկա են բնակավայրի խորհրդանիշները՝ եկեղեցիները, մշակութային վայրերը՝ նկարագրական խոսքի և պատկերավորման միջոցների դրսևորմամբ:

Մեթոդաբանություն

Սույն հոդվածի ուսումնասիրության տեսական-մեթոդաբանական հիմք են հանդիսացել լեզվաբանների, ոճագետների, մշակութաբանների թեմային առնչվող աշխատանքները:

Հիմնախնդիրը լուծելու նպատակով առաջնորդվել ենք լեզվաբանության մեջ տարածում գտած մի շարք մեթոդներով:

Քննարկում

Աշտարակ գոյականը պարսկական ծագում ունի և նշանակում է «ուղիղ բարձրացող կառույց», «բերդապարսպի բուրգ», «սլացիկ բարձրաբերձ շինություն»: Հ. Մանանդյանը *Աշտարակ* հատկանունը կապում է *Strangira* անվան հետ, որն արձանագրված է 4-րդ դ. քարտեզներում: Ենթադրվում է, որ բառն ունի նախահայկական ծագում, երբ դեռ «աշտարակ» բառը հայերենում գործածական չէր: Գ. Ղափանցյանը, ընդունելով Մանանդյանի այս տեղայնացումը, բառի մեջ առանձնացնում է *Str-* արմատը, և այն համարելով հայերեն «Շտր» հնչյունակազմի լատիներեն տառադարձություն՝ գտնում է, որ բառի մեջ առկա է ասուրական Իշտար դիցուհու անվան փյունիկյան «Աշտար» արտահայտչաձևը:

Աշտարակը հայկական աղբյուրներում հիշատակվում է 9-րդ դարից: Հնում մտել է Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Արագածոտն գավառի մեջ: Այստեղ կան նաև վաղ ժամանակներին վերաբերող եկեղեցական կոթողներ, մատուռներ, վիմագիր արձանագրություններ:

Ծիրանավոր եկեղեցին կառուցվել է 5-րդ դարում: Տեղացիները նրա շրջակայքը անվանել են *Բերդաթաղ*: Կարմրավոր եկեղեցին կառուցվել է 7-րդ դարում: Քաղաքի կենտրոնում վեր է խոյանում Սուրբ Մարիանեն, որը կառուցվել է 1281-ին: Մուղնի գյուղում է գտնվում Սբ Գևորգի վանքը, որը 17-րդ դարի կառույց է:

Դարերի հոլովությամբ տարատեսակ հայտանիշներով է բնութագրվել *Աշտարակը*՝ Արագածոտն գավառի աչք, եկեղեցիների և կամուրջների քաղաք, երգիչների հայրենիք, ծիծեռնականիստ քաղաք և այլն: Սակայն ամենաբնութագրիչը Պերճ Պողոջանինն է. «Աշտարակ. աչքն է Արագածոտն գավառի, Արագած սարի բազմատեսակ ծաղիկներից կապված փնջի վարդն է: Այն ոչ միայն նշանավոր է եղել յուր կենսատու ջրով, մաքուր ու առողջարար օդով, երկնային դրախտ այգիներով, այլև

պատիվ է ունեցել յուր մեջ ընդունելու հայոց ազգի սուրբ հայրերին և ազգապաշտպան հայրենապետներին» [9, 14]:

Աշտարակի մասին հիշատակություններ կան տարբեր հեղինակների գործերում՝ Ղ. Ալիշան, Պ. Պռոշյան, Ս. Շահագիզ, Գ. Էմին, Վ. Պետրոսյան, նաև այն հուշագիրների վավերագրություններում, որոնց կյանքի այս կամ այն հատվածը աղերսվել է այս հնամյա բնակավայրին՝ Վ. Ալագան, Կ. Սուրենյան, Մ. Գալշոյան, Գ. Գուրզադյան... Աշտարակի մասին գրել են նաև այլազգիները: Անգլիացի ճանապարհորդ, Լոնդոնի թագավորական հասարակության անդամ Զ. Մորիերը դեպի Արևելք կատարած իր ուղևորության ժամանակ 1814թ. հունիսի 16-ին մեկ օր գիշերել է Աշտարակ գյուղում և հիացական գրառումներ կատարել իր նոթերում: Նրան հիացնում են Աշտարակի եկեղեցիները (հատկապես Մարիանեն), հին արձանագրությունները, քարե կամուրջները, որոնք կարող են պատիվ բերել ամեն մի քաղաքակիրթ երկրի: «Աշտարակն ունի կարևոր բնակավայր լինելու բոլոր նշանները», - եզրակացրել է անգլիացի ճանապարհորդը:

Ղ. Ալիշանը 1890 թ. գրված «Այրարատ» երկում, քարտեզագրելով Արագածոտնի շենքերը, ոգեկոչված գրում է Արագածոտն գավառի և նրա վայելքների մասին, որը հարուստ է «գեղեցիկ բարեմասնութեամբք յորդառատ ջուրց, զուարճագեղ բուսաբերութեան եւ յստակութեան օդոց...» [2,129]:

Պ. Պռոշյանի ստեղծագործություններում հաճախ է գծագրվում Աշտարակ տեղանունը: «Ես ծնվել եմ *Երևանու* նահանգի Աշտարակ գյուղումը», - գրել է դասականը: «Հացի խնդիր» վեպի առաջին էջերից տրվում է Աշտարակ բնակավայրի հիշատակումը. «Տո՛, ցնդել եմ, խելքս կորցրել եմ, ես ո՛ր եմ անց կենում: Աշտարակը որտեղ թողի, ո՛ր հասա. ա՛յ սատկած ձի, քո իզանըդ կորել է՛ր, դու չգիտե՛ս, որ ես Աշտարակ պտի մտնեի, առաջին գալդ հո չէր, որ ճամփեն մոլորեցիր» [10,25]:

Աշտարակն անուղղակիորեն կապվում է նաև վեպի գլխավոր հերոսի՝ Միկիտան Սաքոյի գործունեության հետ. «Դա Միկիտան Սաքոն է, ընթերցո՛ղ, որի հետ պատիվ կհամարեմ քեզ ծանոթացնել: Դրա համար մի քանիսն ասում են, թե քրդստանցի է, ոմանք էլ պնդում են, թե աշտարակցի է: Այս վերջինները հիմնում են յուրյանց խոսքը նրա վերա, որ գինեվաճառ Սաքոն ուներ Աշտարակումը մի երկու այգի» [9,41]:

Հետաքրքրական է տեղի բնակիչների, Աշտարակի բառուբանի, եկեղեցիների, Քասախի կիրճի հիշատակությունը գեղարվեստական խոսքում: Գեղարվեստական և հուշագրական բազում էջերում Աշտարակը ներկայացվում է իր հոգևոր կառույցներով, դպրոցներով, աշտարակցին՝ իր օրհնանքով: «Աշտարակցու օրհնությունները». այսպես է բանաձևում Պերճ Պռոշյանը «Հուշիկներում»:

Պռոշյանի երկերում տրվում են բնակիչների բազում բնութագրություններ. «Աշտարակի Քասախ գետակը լողալու շնորհին անխնայաբար շոայլել է հավասարապես աշտարակցիներին. մեծ և փոքր քաջավարժ են լողալու մեջ» [9, 49]:

Ազգագրական հետաքրքիր տեղեկություններ են պարունակում Պ. Պռոշյանի վրձնահարվածները Աշտարակի վերաբերյալ. «Աշունք է, այգեկույթն Աշտարակում վերջացել է. գյուղացիք այգիներից տուն են հավաքվել, աշնան լվացքն արել է մայրս և հագուստներս կախել չորանալու» [9,57]: Նշենք, որ հնում Աշտարակում տարեկան երեք անգամ մեծ լվացք էին անում՝ Ջատկին, Ջրօրհներին և աշնանը՝ քաղցվահանին՝ այգեկույթից հետո:

Աշտարակն այսօր էլ հայտնի է Ներսես Աշտարակեցի կաթողիկոսով: Նրան շրջասաբար անվանել են *փիլոն հագած Գարիբալդի* (Ֆ. Մակլեր): Նրա պատմահասարակական-գրական կերպարը գծագրվում է Պ. Պռոշյանի «Հուշիկներում». «Ջարմանալի մարդ էր Ներսես կաթողիկոսը. նրա աչքում մեծ, փոքր, հարուստ, աղքատ, իշխան, ռամիկ, հասակավոր, մանուկ ամենեքյան միապետ հավասարաչափ արժեք ունեին: Նրան միաժամանակ սեղանակցել են գյուղացին և մեծավորը» [9, 86-87]: Հակահիշների կուտակումը ավելի է բնութագրում հայոց հայրապետին:

Աշտարակ բնակավայրի նկարագրի առումով հատկանշական է Վ. Պետրոսյանի արձակը: «Աքլորաքարը» պատմվածքում ներկայացվում է Խ. Աբովյանի այցելությունը Աշտարակ. «Խաչատուր Աբովյանը, որ հայ մեծ լուսավորիչ է, մեր գյուղ այն ժամանակ էր եկել, երբ Պռոշյանը ձեր տարիքին էր: Աբովյանն այցելել է այն դպրոցը, որտեղ սովորում էր ապագա գրողը: Այդ դպրոցը Մարինե եկեղեցու բակում էր: Հետո մեծ լուսավորիչը երեխաների հետ եկել է Քասախի ափը: Նրան շատ էր դուր եկել մեր Աքլորաքարը...» [8, 110]:

Այս էական տեղեկությունը Վ. Պետրոսյանը լսել է իր ուսուցչից՝ տիկին Շուշանիկից, որն ամեն տարի իր աշակերտներին բերել է Աքլորաքարի մոտ ու պատմել այս պատմությունը:

Պատմվածքում ներկայացվում է երիտասարդ Սարգսի, երեք գեղեցկուհի քույրերի ու հրաշքով կառուցված Ծիրանավոր, Սպիտակավոր, Կարմրավոր եկեղեցիների մասին: Քույրերն Աքլորաքարի մոտ տեսնում են Սարգսին ու իրարից անտեղյակ՝ սիրահարվում տղային: Հետո իմանալով միմյանց սրտի գաղտնիքը՝ հագնում են ծիրանագույն, սպիտակ և կարմիր զգեստներ և ձորագլխի տարբեր ժայռերից նետվում ցած: Մի գիշերում ծնվում-կառուցվում են երեք եկեղեցիները: Այստեղ հեղինակը գունանունների և գույների հետաքրքիր խաղարկում է կատարում:

Երգիչների քաղաք Աշտարակում է ծնվել Գ. Էմինը, ծնվել է ուսուցչի և այգեպանի ընտանիքում: Մի առիթով նա գրել է. «Այն բանի համար, որ ես այսօր ոչ թե կամուրջներ կամ ջրանցքներ եմ սարքում, այլ գրում եմ գրքեր, շնորհակալ եմ դպրոցում ինձ հանդիպած հայ գրողներից ամենափայլուններից մեկին՝ Եղիշե Չարենցին...Ընդհանուր ես ունեմ 10 գիրք, 3 որդի և մի փոքրիկ Հայաստան» [5, 17]:

Գ. Էմինի պոեզիայում նույնպես շատ են աշտարակյան լարերը:

Հարազատ բնակավայրի պատկերը բանաստեղծի հոգում դարձել է հույզ ու երագ, որ հանգիստ չի տալիս նրան: Փոխաբերական պատկերները հարստացնում են պոեզիայի լեզուն.

Փշատի հոտ է գալիս գյուղից,

Աթարի, դաղձի, մանկության հոտ,

Ամեն ոլորան ու ծառուղի,

Մի հուշ է պատել թանկ ու ծանոթ... [5, 268]:

Բանաստեղծության մեջ առկա են *մանկություն, կորցնել, արցունք, մորաբերել* հասկացությունները: Առկա երկխոսությունը հեղինակի և բարի պառավի միջև հիշողություններ է ծնում ոսկեծամ մանկության արահետների մասին [3,58]:

Կուլ տալով արցունքն իմ կոկորդի,

Կանգնում եմ ամեն քարի առաջ,

-Ի՞նչ ես կորցրել, ազի՛զ որդի,

Հարցնում է մի կուզիկ պառավ:

-Ինչ եմ կորցրե՞լ... Է՛հ, ի՞նչ ասեմ,

Որ գտնեմ այն, ինչ երա՛զ դառավ...

Իմ մանկությունն է կորել այստեղ,
Իմ մանկությունը, բարի՛ պառավ [5,268]:

Հետաքրքիր կառուցվածք ունի «Աշտարակի գերեզմանոցը» բանաստեղծությունը, որը կտակ-բանաստեղծություն կարելի է համարել: Ինչպես գիտենք, Գ. Էմինը թաղված է Կարմրավորի բակում:

Միևնույն մտքի կրկնությունը ավելի է ընդգծում հեղինակային խոսքի նպատակայնությունը: Ինչպես նշում է Հ. Հարությունյանը, «կրկնությունները միօրինակ ու ծանծրալի չեն: Ամեն մի կրկնության մեջ բառը զուգակցվում է տարբեր բառերի հետ, արտահայտում է տարբեր նրբերանգներ, նույնիսկ փոխվում է նույն բառերի հարաբերությունը» [7,104]:

Եվ երբ ես հոգնեմ
Այս դաժան դարի համար ապրելուց,
Այս հողի համար արյուն թափելուց,
Այս հողի մասին երգեր ասելուց,
Այս հողի համար խնդալ-լացելուց,
Կգամ, կնստեմ այս մամռոտ քարին,
Կգամ, կպառկեմ այս քարի վրա
Կամ... այս քարի տակ,
Եվ ինչպես առաջ,
Կնայեմ փոշոտ այս արահետին,
Այս այգիների զմրուխտե գետին,
Իմ Աշտարակին,
Իմ հին տնակին
Արյունից կարմիր իմ Կարմրավորին... [5,210]

Կարմիր գույնի երանգների խաղարկումը հետաքրքիր պատկեր է ստեղծում:

Աշտարակ բնակավայրի մասին հիշատակություններ կան Վ. Ալազանի «Տառապանքի ուղիներով» հուշագրության մեջ: Այստեղ երևում է քաղաքի բնակիչների նիստուկացը, ասպնջական վերաբերմունքը նյութապես և հոգեպես. «Աշտարակի ժողովուրդը մեծ համակրանքով ու հարգանքով էր վերաբերվում» [1, 159],- գրում է հեղինակը: Որքա՛ն տպավորիչ է Աշտարակի Պետական թատրոնի դերասան Կարո Չալաբյանի հետ հանդիպումը:

Հայտնի է, որ երկխոսությունը մտքերի մատուցման եղանակ է և Աշտարակն ու նրա բնակիչը հաճախ են ներհյուսվում տրամախոսության

տիրույթում. «Ընկե՛ր Ալազան, ես ձեզ շատ լավ գիտեմ, կարդացել եմ ձեր բոլոր գրվածքները, գիտեմ, որ դուք բոլորովին անմեղ տեղն եք բանտարկվել ու աքսորվել», - հայտարարում է Աշտարակի ՆԳ բաժնի պետ Եղիազարյանը [1, 157]:

Որոշ երկխոսություններում գծագրվում է Աշտարակ բնակավայրի պատկերը.

«-Ես ինձ համապատասխան աշխատանք գտել եմ,- ասացի ես:

- Ի՞նչ աշխատանք:

- Աշտարակում դեռ մնում է այն խրճիթը, ուր ծնվել ու իր մանկությունն է անցկացրել ձեր հայրենակից Պերճ Պռոշյանը. եթե դուք հնարավորություն տաք, ես այն կդարձնեմ նրա տուն-թանգարանը» [1, 161]:

Ալազանի հուշերից վեր են հառնում տարբեր անձանց դիմանկարներ, որոնք նկարագրական խոսքի կարևոր միջոցներ են: Բոլորն էլ վառ հիշողություններով են կապվում Աշտարակի ընդհանուր մթնոլորտին: Նրանց մարդկային նկարագիրը, դիմացինին սատար կանգնելու ցանկությունը հուշագիրը ոճական երանգներով է ներկայացնում: Այսպիսի հուշափաստերը գրողի ստեղծագործական ուղու հավելյալ վկայություններ են:

Աշտարակի հող ու ջրի ծնունդ են նշանավոր ակադեմիկոսներ են հայագետ Գրիգոր Ղափանցյանը և կենսաքիմիկոս Նորայր Սիսակյանը, որի անունով կոչվում է Լուսնի 131-րդ խառնարանը:

Մի անգամ ինչ-որ հարցի շուրջ վեճ է ծագել ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտում: Գրիգոր Ղափանցյանին հակաճառել է Գուրգեն Սևակը: Ղափանցյանը չհանդուրժելով բացականչել է. «Էդ էր պակաս, որ հավաքարցին աշտարակցուն հայերեն սովորեցնի»¹:

Ընթերցողը գեղարվեստական-վավերագրական էջերից քաղում է գրականագիտական, ազգագրական, պատմական տեղեկություններ, որոնք հարստացնում են մարդու իմացական գիտելիքները, զարգացնում աշխարհըմբռնումը: Օրինակ, «Պերճ Պռոշյանի տուն տանգարանի համար շարունակում էի ձեռք բերել նորանոր ցուցանմուշներ: Գիտեի, որ Պռոշյանի հայրը դերձակ էր եղել և մեծ դժվարությամբ գտա նրա հարթուկը» [1, 167]:

¹ Հատկանշական է, որ հայտնի լեզվաբան Գրիգոր Ղափանցյանը գիտությանը նվիրել է «Աշտարակի խոսվածքը» արժեքավոր աշխատությունը (նուսերեն):

Աշտարակ տեղանունը տարբեր կերպ է ներկայանում հուշագրության լեզվում: Հ. Թումանյանը գյուղացիների կյանքից շատ սրախոսություններ, կատակներ է հյուսել, նույնիսկ որոշել է դրանք տպագրության հանձնել: Ս. Հովյանը «Մեր Ուհանեզը» հուշագրության մեջ ներկայացնում է աշտարակցի և լոռեցի հնձվորների անեկդոտի՝ Հ. Թումանյանի տարբերակը [6, 260]:

Աշտարակի պատմամշակութային գոհարներից է Կարմրավորը կամ Ս. Աստվածածին եկեղեցին, որը մեզ հասել է գրեթե անփոփոխ վիճակում: Հայտնի աստղագետ, էսսեների հեղինակ Գ. Գուրգադյանը «Մի սիրո պատմություն» գրքում Կարմրավոր եկեղեցին անվանել է «վաղ միջնադարի տաճարային ճարտարապետության զմրուխտյա ակ» [4, 157]: Այնուհետև ծավալուն բնութագրել է այդ գողտրիկ հրաշքը. «Այնքա՛ն քնքուշ, այնքա՛ն մտերմիկ է, որ մարդ ակամա ձեռքերն է մեկնում ափը վերցնելու, գուրգուրելու այդ քարե փունջը: Ինձ այնպես է թվում, որ այդ ապշեցուցիչ համաչափությունն ու անթերի ներդաշնակությունն ստեղծողի ականջին գլխահակ մուրճն ու բրիչը ձեռքին աշխատելիս հընչել է մի տարաշխարհիկ սիմֆոնիա երգեհոնային նվագակցությամբ:

Կարմրավորն ուրի՛շ է...»[4, 157]:

Աշտարակի խորհրդանիշները շատ-շատ են՝ Աշտարակի ընկույզը, կամուրջը, ծիծեռնակը, հյուրերին ջուր չտալու պատմությունը և այլն: Գևորգ Դոդոխյանի «Ծիծեռնակ» բանաստեղծությունը գրվել է 1854թ., և որի երաժշտությունն ընտրել է հենց հեղինակը:

Ծիծեռնա՛կ, ծիծեռնա՛կ,
Դու գարնան սիրուն թռչնակ,
Դեպի ո՞ւր, ինձ ասա,
Թոչում ես այդպես արագ:
Ա՛խ, թռի՛ր ծիծեռնա՛կ,
Ծնած տեղս Աշտարակ,
Անդ շինի՛ր քո բույնը,
Հայրենի կտուրի տակ:

Արդյոք Աշտարակում է ծնվել հայտնի բանաստեղծության հեղինակ Դոդոխյանը: Միանշանակ ո՛չ: Գևորգ Դոդոխյանը ծնվել է 1830 թ. Սիմֆերոպոլում: Նախնական կրթությունն ստացել է Սիմֆերոպոլի ծխական դպրոցում, ապա գիմնազիայում: Ավարտել է նաև Մոսկվայի Լազարյան ճեմարանը: Ուսանել է Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայում և

Դորպատի համալսարանում: Ժամանակակիցների վկայությամբ ուսումնառության ընթացքում Դոդոխյանը ունեցել է աշտարակցի նվիրյալ կուրսընկեր և նրան է ձոնել հանրահայտ բանաստեղծությունը:

Քասախի ավին ծվարած գողտրիկ այս քաղաքում ծնվել են շատ նշանավոր մարդիկ, որոնց շնորհիվ մշտավառ կանթեղի պես բոցկլտում է Աշտարակի լույսը, բնակիչների օջախի ճրագը: Աշտարակ տեղանվան և աշտարակցի «տեղի բնակչի իմաստով» գործածված բառազույգերը գեղարվեստավերագրական տարբեր երկերում դրսևորվում են տարբնույթ լեզվաոճական հիմքերով: Հայտնի հրապարակախոս Վ. Պետրոսյանն այսպիսի մտերմիկ ոճով է ավարտում «Հայկական էսքիզները». «Հիշո՞ւմ եք աշտարակցի այն մորը, որ պատերազմի բոլոր տարիներին գուլպա էր գործում և ուղարկում անհայտ, անձանոթ հասցեներով: Պատերազմի ավարտի հետ, գիտեք, որ հանգավ մայրական այդ մոմը, իսկ նույն օրերին երկաթուղին դեռ տանում էր (ո՞ւր էր տանում) նրա գործած վերջին զույգ գուլպան, որ երևի ոչ ոք չէր հագնելու այլևս. զինվորները տուն էին դառնում...» [8, 609]:

Եզրակացություններ

1. Աշտարակ տեղանվան նկարագրությունը գեղարվեստական խոսքում ամբողջանում է դիպուկ արտահայտություններով և շրջասույթներով:

2. Հուշագրական հատվածներից վեր են հառնում տարբեր անձանց դիմանկարներ, որոնք նկարագրական խոսքի կարևոր միջոցներ են:

3. Գունանունների և գույնի երանգների խաղարկումը հետաքրքիր պատկերներ է ստեղծում գեղարվեստական ոճում:

4. Հաճախ բառային կրկնությունները զուգակցվում են պատկերավորման միջոցներին՝ խոսքը դարձնելով առավել արտահայտիչ:

5. Առկա հուշափաստերը գրողների ստեղծագործական ուղու հավելյալ վկայություններ են:

Գրականության ցանկ

1. Ալազան Վ., Տառապանքի ուղիներով, Ե., 1990:
2. Ալիշան Ղ., Այրարատ, 1890:

3. Գալստյան Ա., Երկխոսությունը ժամանակակից հայերենում, Ե., 2003:
4. Գուրզադյան Գ., Մի սիրո պատմություն, Ե., 2004:
5. Էմին Գ., Եժ, Ե., 1977:
6. Թումանյանը ժամանակակիցների հուշերում, Ե., 1969:
7. Հարությունյան Հ., Գեղարվեստական խոսք, Ե., 1986:
8. Պետրոսյան Վ., Վերջին ուսուցիչը: Վիպակներ և պատմվածքներ, Ե., 1980,
9. Պռոշյան Պ., Եժ, Ե., 1964:
10. Պռոշյան Պ., Երկեր, Ե., 1984:

**ՀՈԳԻ ԵՎ ՀՈԳԵՀԱՅ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ
ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐԸ**

ՀԱՅԿԱՆՈՒՇ ՄԵՍՐՈՊՅԱՆ

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ
Առաջատար գիտաշխատող, ք. գ. դ.
haykanushm@mail.ru

DOI: 10.57236/1829-0183-2023.2(29)-75

Համառոտագիր

Մահվան առեղծվածը, մարդկանց մտածելակերպի վրա կյանքի և մահվան հակադրության ազդեցությունը պատճառ են դարձել համապատասխան բառաշերտի ստեղծման, բառերի տերմինացման, իմաստափոխության և ոճական կիրառման: Հայերենի բարբառային բառապաշարը հարուստ է մահվանը հարակից *հոգի* և *հոգեհաց* հասկացությունները բնորոշող բառաշերտով, դարձվածքներով, նկարագրական արտահայտություններով, առած-ասացվածքներով և լեզվական այլ միավորներով:

Հոդվածում բավականին ծավալուն բարբառային նյութի հիման վրա ներկայացվում է *հոգի* և *հոգեհաց* հասկացությունների՝ հայերենի տարածքային տարբերակներում դրսևորած առանձնահատկությունները, հնչյունական և բառային զուգաբանությունները, քրիստոնեական դավանանքով և նախապաշարմունքով պայմանավորված արարողակարգերին վերաբերող բարբառաբանությունները, հոմանշային շարքերը, ժողովրդական ընկալումների հիման վրա ստեղծված օրինության, երդման և անեծքի բանաձևերը:

Բանալի բառեր և բառակապակցություններ՝ Հայերեն, բարբառ, հոգի, հոգեհաց, համարժեք, տարածագործառական տարբերակ, հնչյունական զուգաբանություն, հոմանիշ, դարձվածք:

DIALECT EQUIVALENTS OF THE CONCEPTS OF

SOUL AND FUNERAL

HAYKANUSH MESROPYAN

RA NAS Language Institute
Leading researcher, D.Ph.
haykanushm@mail.ru

Abstract

The mystery of death, the influence of contrary between life and death on people's mentality has become a reason for creation of appropriate vocabulary, word terminology and for the change of meaning and styling of the vocabulary.

The article presents characteristics of the concepts of soul and wake in territorial variants of the Armenian language, phonetic and lexical analogues associated with rituals caused by Christian faith and prejudices, formulas of blessing, oath and curse, synonyms, speech patterns, descriptive constructions that are expressed by all word-formation means of the Armenian language.

Keywords and phrases: Armenian language, dialect, soul, funeral, equivalent, functional, phonetic variants, synonym, phrase.

ДИАЛЕКТНЫЕ ЭКВИВАЛЕНТЫ ПОНЯТИЙ *ДУША* И *ПОМИНКИ* АЙКАНУШ МЕСРОПЯН

Институт языка НАН РА
Ведущий научный сотрудник, д.ф.н.
haykanushm@mail.ru

Аннотация

Тайна смерти, противоречие жизни и смерти влияют на мысли людей и являются причиной для создания соответствующей лексики, переосмыслений и терминологизации общеупотребительных слов, имеет непосредственное отношение к образованию стилей.

В статье представлены характеристика понятий *душа* и *поминки* в территориальных вариантах армянского языка, фонетические и лексические аналоги, связанные с обрядами, вызванными христианской верой и предрассудками, формулы благословения, клятвы и проклятия, синонимы, речевые обороты, описательными конструкции, которые выражаются всеми словообразовательными средствами армянского языка.

Ключевые слова и словосочетания: Армянский язык, диалект, душа, поминки, эквивалент, функциональный, фонетические варианты, синоним, словосочетание.

Հոգի հասկացության ժողովրդական ընկալման բարբառային արտահայտությունները

Ննջեցյալի հանդեպ ծիսական տարբեր արարողություններով հարգանքի տուրք մատուցելու սովորույթը գալիս է դեռևս հեթանոսության շրջանից, որը հետագայում ներառել է հայ եկեղեցին՝ այն փոխարինելով հանգուցյալների հիշատակման օրերով: «Այդ օրերին գերեզմանի մոտ տեղի են ունեցել ճաշկերույթներ՝ հանգուցյալների հոգու հանգստության համար» [15, 595]: Վարդ Բդոյանը ննջեցյալի հետ կապված սովորույթներն ու ծիսական արարողությունները բաժանում է երեք հիմնական փուլի. 1) հոգեվարք ապրողի մահն արագացնելու գործողություններ,

2) հուղարկավորության ծիսակարգ, 3) մեռածի հիշատակին նվիրված արարողություններ [4, 171] :

1) Հոգեվարքին առնչվող բարբառային լեզվական միավորներ:

Այս փուլին վերաբերող բարբառային կազմություններից են՝ *սըքոաթ* (Սասուն)² «հոգեվարք» [15, 594], *հոգեառ* «հոգին առնող հրեշտակ», Արարատյան, Շիրակ («*Հոգիառ հրեշտակս մենակ դու ըլնես*» [14, 145]), *գրող* «հոգին առնող», Վան («*Ձեռքդ պոնես, տամ գրողին, Կերթամ, խասնես իմ սիրողին*» [10, 145], Վանի Գործոթ), *հոգին առնել* «մահվան հասցնել» («*Ո՛վ ի առեր իմ աղքըտի դառնիկ հոգին*», Մոկս) [9, 14], *հոգու հետ ընել*, Արարատյան, *փաթավէքը տալ // փապըճները ջխտել*, Նոր Զուղա «հոգին ավանդելու վիճակի մեջ լինել», *հոգի-հոգի անել // ֆոգի-ֆոգի անել* (Լոռի) «մեռնելու ժամանակ չարաչար տանջվել» [3, 399-400], *հոգու հետ կոխվ տալ* «հոգեվարքի ժամանակ չարչարվել», *հոգին քաղվել // խուզին քաղվել* (Մոկս) «սաստիկ տանջվել» («*Կագուան Ասլանի խուզին քաղուից, էլավ պուրտը*», Մոկս) [9, 14], *հօքէթարց ըլլալ* (Երզնկա) և այլ բարբառաբանություններ, որոնք գործածվում են նաև ժողովրդախոսակցական լեզվում:

Համաձայն հավատալիքի՝ մարդը կազմված է մահկանացու մարմնից և անմեռ հոգուց: Երբ հոգին հեռանում է մարմնից, մարդը դառնում է *ննջեցյալ*: Հոգու և մարմնի բաժանումը Ջանգեզուրի բարբառախոսը բացատրում է հետևյալ կերպ. «հոգին կենդանի կը մնայ և Աստծու ողորմութիւնով էն դիու դունէն (աշխարհք) կերթայ ադամական դրախտ» (172) [5, 172]: Ջավախքի բարբառակիրների կարծիքով հոգին «արևի շաֆխի պէս է, գըլնի օրա լուսանայ կը, գնաց թըչը, մթնէ կը» [1, 317] :

Ննջեցյալ բառը բարբառային խոսքում ունի մի շարք հոմանիշներ՝ տարածքային հնչյունական տարբերակներով, որոնք արտահայտում են իմաստային որոշակի տարբերություններ: Բարձր ոճական դրսևորում և հարգական իմաստ ունեն *հանգուցյալ*, *ննջեցյալ*, *ճամփորդ*, *վկա*, *նահա-տակ*, *մարտիրոս* և այլ բառեր: Բարբառային խոսքին բնորոշ են *դրախտական* (Արարատյան, Մուշ, Բուլանուխ), *դրախտի փայ* (Ալաշկերտ), *լուսահօքի* (Կարին), *լըսի փայ* (Լոռի), *Արելի մատաղ* (Արտիմեդ), *գաբրելական փողին արժանացած* (Արտիմեդ), *ագիզ մեռել* (Բուլանուխ), *օրի-*

² Բարբառային օրինակներն ըստ բարբառագիտական մենագրությունների, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ձեռագիր նյութերի, ինչպես նաև բարբառախոս վայրերում մեր կատարած հարցումների:

նած ֆողին արժանացած (Արարատյան), խրրիշտակ տա՞նած, խանգուցյալ (Վան) և այլն:

Տարածքային լայն ընդգրկում ունեն *ողորմ* բնիկ հայերեն արմատով՝ ննջեցյալ հատկանշող բարդությունները. այսպես՝ *վողորմած* (Արարատյան) // *ողորմած* (Մարաղա, Ադանա) // *ողորմած* (Տիգրանակերտ) // *ուղորմած* (Բեյլան), *ողորմածիկ* (Երևան, Լոռի, Կարին, Ղազախ, Նոր Բայազետ, Թիֆլիս) // *ողորմածիգ* (Մուշ) // *ըղըրմածիկ* (Տավուշ), *ողորմած հոգի* (Աստրախան, Երևան, Ղարաբաղ, Նոր Նախիջևան, Պոլիս, Թիֆլիս) // *ողորմած հոքի* (Սուչավա, Նոր Նախիջևան, Պոլիս, Թիֆլիս), *ըղորմածիկ* // *ղորմածիկ* // *ըղորմած հոքի* (Լոռի) և այլն:

Մեռել հոմանիշը գործածվում է որպես հասարակաբանություն և կոնկրետ գնահատական կամ վերաբերմունք չի արտահայտում հանգուցյալի հանդեպ:

Հոգու՝ մարդկային մարմնից հեռանալու պահին ննջեցյալի հարազատներին այցելելը Ջավախքում բնորոշվում է *թող ապրիս գալ* դարձվածքով: Մխիթարիչները՝ *թող ապրիս եկողները*, մխիթարական խոսքերն են ասում. «*Դու ողջ ըլլիս, Սուրբ Հոգին մխիթարե՛*» [1, 310] :

2) ***Թաղման ծիսակարգին առնչվող բարբառային բառեր:*** Այս խմբի լեզվական միավորները բավականին մեծաթիվ են, որոնք արդեն իսկ ներկայացված են մեր հեղինակած «*Մահ հասկացությանը վերաբերող բարբառային բառաշերտի ընդհանուր բնութագիրը*» հոդվածում [13, 21-32]:

3) ***Մեռածի հիշատակին նվիրված արարողություններին առնչվող բառեր:***

Քանի որ «ավանդական հայ հասարակությունում մեռածների հարգումն արժեք է» [6, 108], ուստի հայերենում առկա է այդ հարգումն ու արժեքը բնորոշող բավականին ընդարձակ բառիմաստային խումբ: Թեմային առնչվող բարբառաբանությունների, ինչպես և ծեսերի նկարագրության շտեմարան են «Ազգագրական հանդեսի» 26 հատորները:

Քրիստոնեական դավանաբանության համաձայն «Գերեզմանի հանգիստը մինչև հարություն ժամանակավոր քուն է, իսկ մահացողը՝ ննջեցյալ և ոչ թե մեռյալ» [16, 595] :

Հոգի ձևաիմաստային միավորի հնչյունական զուգաբանությունները

Հոգի բառը հայերենի բարբառներում հիմնականում հանդես է գալիս հնչյունական տարբերակվածությամբ (գրանցել ենք 34 հնչատարբերակ): Միայն Սեբաստիայի Խոունավուլ բնակավայրում է գրանցված գրական հայերենին բնորոշ *հոգի* ձևը, իսկ *գ'* շնչեղ բաղաձայնով *հոգ'ի* ձևը հանդիպում է Խարբերդի, Նոր Ջուղայի, Սուչավայի բարբառներում: Կրկնական *գ* շնչեղ ձայնեղներ ունեն Հաջնի *հիգ'գ'ի* և Ջեյթունի *հիգ'գ'է* հնչյունական զուգաբանությունները: Չ քմային բաղաձայնով *հոգ'ի* հնչատարբերակն է գրանցված Առտիայի բարբառում: Նախիջևանի տարածաշրջանի Տանակերտ գյուղի խոսվածքում գործածվում է *գ* ձայնեղով *հէգի* ձևը: Հայերենի մյուս բարբառատարածքներում գրական հայերենին բնորոշ *գ* ձայնեղ չի հանդիպում: Այս հնչյունին հիմնականում համապատասխանում են՝ 1) պարզ, քմային (*լ'*), առոգանական (*լ'*) կամ կրկնական (*լլ, կլ'*) *լ* խուլը և 2) պարզ, քմային (*ք'*), *ք* և *կ* (*ք'^ն*), *գ* և *ք* (*գ'^ն*) համամասնականներ կամ կրկնական (*քք*) *ք* շնչեղ խուլը:

Այսպես՝ 1) պարզ, քմային (*լ'*), առոգանական (*լ'*) կամ կրկնական (*լլ, կլ'*) *լ* խուլ. Հոկի (Համշեն, Մուշ, Տավորիկի Իրցանք, Նիկոմեդիայի Խասկալ, Կարսի Քյուրագդարա, Մոտկանի Նիջ)// *հոկ'ի* (Սասունի Ընգուզնակ, Սաղդուն) // *հիկկի* (Եդեսիայի Գարմունջ, Բեյլան) // *հիկկա* (Սվեդիա) // *հիկկա* (Քեսաբ) և այլն: Եդեսիայի բարբառին բնորոշ է ոչ մի վայրում չվկայված *հոկկոց* եզակի ձևը՝ «հոգի» իմաստով: Ամփոփման ենթարկված նույնահունչ տարբերակները՝ Եդեսիայի Գարմունջ (*հոկկոց*), Սևերեկ (*հոկոց*), Ռոդոսթո (*հոքոց*), Ապարանի Վարդաբլուր (*խոքոց*), ունեն «հոգեհաց» իմաստը: Օրինակ՝ «Ա՛լլրոսվ հ'ա՛ լվա՛ յուխահա՛ ցին մէճը տըրէցինկ', հոկոց դըվէցինկ'» (Սևերեկ): «Մէռէին հոքուն հոքոց ըրավ» (Ռոդոսթո):

Հ հազագի դիմաց *խ* հնչյուն ունեն հետևյալ զուգաբանությունները. *խոկ'ի*, սեռ. *խուկ'ու* (Աշտարակի Տեղեր, Վան, Շատախ, Թիմարի Մարմետ և Պողանց) // *խոկի* (Բերկրի, Խիզանի Պոռշնենց, Ցածի Թիմարի Քօջանի)//*խոկ'է* (Մոկսի Կըճավ և Խալենց)//*խուկ'էի* (Մոկսի Մամոտանց) // *խուկէյ* (Ոզմ) // *խոքի* (Սալմաստ, Ապարանի Ծաղկաշեն, Արտաշատ, Մասիս, Արմավիրի Մրգաշատ, Վերին Բուլանուխի Փիրան), *խոքի* (Սուրմալուի Մոլլաղամար) // *խոքը՛* // *խոքու*, սեռ.՝*խոքույու* (Մարաղա) և այլն:

2) Պարզ, քմային (*ք'*), *ք* և *կ* (*ք'^ն*), *գ* և *ք* (*գ'^ն*) համամասնականներ կամ կրկնական (*քք*) *ք* շնչեղ խուլ. *հուքի* (Տավուշի Վերին Կարմիրաղբյուր, Շահումյանի Բուզլուխ, Կիրովաբադ) // *հուք'ի* (Ղարաբաղի Մարտու-

նի, Նոր Շեն) // *հօ՛քի* (Կարճևան, Ագուլիս) // *հօքի* (Շամախի, Էջմիածնի Աղավնատուն և Հայթաղ) // *հիքէ* (Մարաշ) // *հիք՛է* (Չեյթուն) // *հօքքի* (Տիգրանակերտ) // *հո՛ւքի* // *հէճճի* (Ղարաբաղ) // *հո՛ւքի* (Բուլնիս-Խաչեն) // *հէօքի* (Ասլանբեգ) // *հիգ՛քա* (Սվեդիա) // *ֆոքի* (Լոռի) // *ֆօքի* (Բուրդուր, Մառնեուլի Խոժոռնի) և այլն:

Ինչպես նկատում ենք, հիմնական հնչափոխություններն են՝ մի շարք տարածքներում բառակազմի *h* հազագը օրինաչափորեն վերածվում է *խ* կոկորդային կամ *ֆ* շրթնատամնային խուլերի: Տեղի են ունեցել նաև *n* (>*o*, *h*, *ni*, *n՛i*) և *h* (>*ա*, *ա՛*, *է*, *ը*, *ը՛*, *էյ*, *էի*) ձայնավորների հնչյունափոխություններ:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ թե՛ արևելյան, թե՛ արևմտյան խմբակցության բարբառներում տարածագործառականության ամենաբարձր ցուցանիշն ունի *հօքի* (*q>p*) հնչատարբերակը (Երևան, Գորիս, Մեղրի, Կաքավաբերդ, Շամախի, Փերիայի Միլակերտ, Վերին Բուրվարի Դեյնով, Թիֆլիս, Ալաշկերտ, Կարին, Ալն, Մալաթիա, Նոր Նախիջևան, Պուլիս, Ադաբազար, Ռոդոսթո, Սեբաստիա և այլն):

Նշված հնչյունափոխական երևույթներն արտացոլվում են նաև *հոգի* բառով կազմված *հոգեհաց* բարդության հնչատարբերակներում:

Հոգի բառի բարբառային հոմանիշները: Հոգի, ինչպես նաև հարանուն *ոգի* բառի սակավաթիվ հոմանիշներից են՝ *ջան* (Սասուն), *քըսմըճաղիկ* (Երզնկա) «նորածիններ գողացող չար ոգի», *պան*³ (Եվրոկիա) «անտառներում բնակվող ոգի» և այլն: Եվրոկիայի բարբառն ունի *պանի ուրդիլ* հարադիր բայը՝ «պանի հանդիպել, այս ոգուց բռնվել» [2, 894]: Այս պատիժը, ըստ նախապաշարմունքի, տեղի է ունենում ծառերի տակ միգելու հետևանքով: «Ի՞նչ բան է *ուրդնել*: Չարքի պատահել, հանդէպքի գալ, խելագարվել», - մեկնաբանում է Ստ. Մալխասյանցը [12, 612]:

Հոգի բառով կազմված բաղադրություններ: Հոգի բառով կազմվում են բարդություններ, հարադրություններ, բառակապակցություններ, օրինանքի և այլ բանաձևեր. օրինակ՝ *հոգեպուն* (Այնթափ) «եկեղեցիներում և վանքերում հատուկ վայր, որտեղ իջևանում են հյուրերը, աղքատներն ու հիվանդները», *հօքէդուն* (Կեսարիա) «1. ուխտատեղի, 2. նորածնի փափուկ գլխամասը», *հոգու ճրագ* (Բուլանուխ) «մեռնողի հոգու համար

³ Ծան. Հերմեսի որդի Պանը բնության աստվածն է՝ այժի ոտքերով ու եղջյուրներով: Նա է հնարել սրինգը և լեռներ ու ձորեր շրջելով՝ իր սրինգով մասնակցում էր նիմֆաների պարին: Նրա հայտնվելուց սոսկում էին, որից էլ ծագել է *Terreur panique* դարձվածքը:

վառվող ճրագ» և այլն: Արարատյան բարբառի *հոգեբաժին* բարդ բառը, Վանի *հոգվո բաժին* գրաբարաբանությունը նշանակում են «ննջեցյալի հոգու հիշատակի համար մայրավանքին տված կամավոր տուրք»: Մուշի բարբառի Բուլանովսի խոսվածքի *հոգու պաշար, հոգուք աղարաք, հոգու պատրաստություն* բառակապակցություններով նշվում է «ննջեցյալի գերեզմանում դրված ուտելիքը, ամանը և այլ պարագաներ՝ իբրև պաշար». այժմ գործածվում են «բարեգործություն, ողորմություն կրոնաբարոյական իմաստներով»:

Կարնո բարբառի Ջավախքի խոսվածքում *քահանային հոգոց ասել տալ*, դարձվածային արտահայտությամբ նշվում է հանգուցյալին տանից ուղեկցելու ծեսը, երբ ննջեցյալին նախ տանում են եկեղեցի և մինչև թաղման օրը ժամերգություններ են կատարում. առաջին ժամերգությունից հետո գալիս են ննջեցյալի տուն, *քահանային հոգոց ասել տալիս*, ապա մեկ բաժակ օղի խմելուց հետո հեռանում: Այս ծեսը Վարանդայում հատկանշվում է *գանձ ասել* հոմանիշով:

Հոգին կանչելու ծեսը Վարանդայում բնորոշվում է *երեք անգամ վայ կանչել* արտահայտությամբ, որն ունի հետևյալ իմաստը. (Թաղման) «Միւս օրը, լուսաբացին, ննջեցեալի հայրը և կամ եղբայրը գնում է գերեզմանատուն, համբուրում ննջեցեալի գերեզմանը և *երեք անգամ վայ կանչում*, որպէս զի հոգին, որ մինչև այդ կանչը սաւառնում է գերեզմանի շուրջը, անդորրութեամբ ուղևորուի դէպի երկինք» [1, 182] :

Վանեցիներն ունեն օրինության այսպիսի խոսքեր. «*Խոքիդ մէջ լո՛ւստ՛նէլնի, օղորմա՛ծ*»: «*Խոգեզվանք քե ը՞գալի*» [11, 326] : Նաև անեծք⁴ «*Վանա ծով ծէթ էլնի, չայիր-չիման ճրագ՛ էլնի: Մաջիդ-մադրասէն պատրուք՛ էլնի, կիշիր-ցերեկ խա վառվի, խուկուսր թողութէն չէլնի*» [7, 90]:

Հոգեհաց հասկացության բարբառային անվանումները

Հանգուցյալին հուղարկավորելուց հետո հարգանք մատուցելու ծիսակարգի կարևոր բաղադրիչներից են հոգեհացը, այգողքը, ողորմու-

⁴ Հայ ժողովրդի ընկալումներում ընդունված չէ ննջեցյալի հասցեին չարաբանությունը: Մեր բանահյուսությանը բնորոշ է «Մեռածից հետո կամ լավ կամ ոչինչ» ասացվածքը: Այդ իսկ պատճառով անարգական բառաշերտը և անեծքները այդքան էլ մեծ թիվ չեն կազմում՝ բարեբանությունների համեմատ: Մուշի բարբառի Բուլանովսի խոսվածքում և այլ տարածքներում մեռնողի բամբասանքն անելիս գործածում են մեղմասացություններ. Օրինակ՝ «*Աստուած ուր մեղք թողէ, հող խաբար չգրանէ ուրին*» [1, N 2, 1898, Թիֆլիս, 180-181]:

թյուն բաժանելը, ինչպես նաև յոթնօրենքի, քառասունքի և տարելիցի ծիսակատարությունները, մեռելոցներին գերեզման այցելելը, սուգ պահելը, շիրմաքարով, անվանադրությամբ և այլ միջոցներով հիշատակը հավերժացնելը [4, 179]:

Հուլարկավորության կարգին հաջորդում է *հոգեհացի* հոգևոր բարեպաշտական արարողությունը, որի նախնական ձևը ազապն է: Հունարեն *agepe* «սեր» բառով նշվող այս ծեսը «Քրիստոնէութեան սկզբնական շրջանում հաւատացեալների համայնական ընթրիք [է]՝ ի յիշատակ խորհրդաւոր ընթրիքի, որի ժամանակ մասնակցողները համբուրում էին միմեանց՝ ի նշան հաշտութեան» [12, 3]: Հետագայում «ազապիներ մատուցվել են նաև ննջեցյալների հոգու հանգստության համար» [16, 14]:

Ննջեցյալի հիշատակը հարգելու ամենից տարածված արարողությունը հոգու հանգստության համար ողորմություն բաժանելն է, որը չի սահմանափակվում ժամանակով և վայրով:

Հոգի + ա + հաց բարդությունը Ս. Մալխասյանցի բառարանում նշված է որպես գավառական գործառույթ ունեցող եկեղեցական բառ՝ հետևյալ բացատրությամբ. «Հոգու հաց, ճաշ, որ ննջեցեալի տէրերը թաղումից յետոյ տալիս են յուլարկաւորներին և աղքատներին» [12, 121]:

Հայերենի բարբառները բավականին հարուստ են այս ծիսակարգը բնորոշող բառերով ու արտահայտություններով: Գրական հայերենին բնորոշ *հոգեհաց* ձևն է գրանցված միայն Այնթափում և Սեբաստիայի հուռնավույ բնակավայրում: Մի շարք տարածքներում գործածվում են այս բարդության հնչյունական տարբերակները (գրանցել ենք 10 տարբերակ): Այսպես՝ *հօքէհաց* (Մուժումբար, Վերին Բուրվարի Դեյնով, «Գիրամուղքին հօքէհաց դըվին», Նիկոմեդիայի Խասկայ), *հօքէհա՛ց* (Սասունի Հոսներ), *հօկէհաց* (Խոտրջուրի Միջին թաղ, Արաբկիր, Սուրմալուի Փանիկ), *հօկէխաց* (Փերիայի Թաղիաբաղ), *խօկէխաց* (Արճեշի Ծայծակ), *խօքէխաց* (Բայազետի Կարմիր գյուղ), *խօքէխաց* (Ապարան), *խօգէհաց* և այլն: Միայն Հավարիկի բարբառում գրանցված է *հոգի+ա+հաց՝ ա* հոդակապը պահպանած, *ի* ձայնավորին չմիաձուլված *հօքըիյահաց* զուգաբանությունը: Հօքըիյահաց բաղադրությունը կարելի է բացատրել նաև որպես *հօքըիյա* սեռական հոլովածևի, այսինքն՝ *հոգու* և *հաց* ուղիղ ձևի միասնություն:

Մի շարք վայրերում *հոգեհաց* բարդ բառին համարժեք է *հոգու հաց* բառակապակցությունը՝ համապատասխան հնչյունական տարբերակնե-

րով (գրանցել ենք 20 հնչատարբերակ): Օրինակ՝ *հոգու հաց // հոգու հաց* գրական ձևն ունեն արևելյան բարբառախմբից՝ Երևանի, Նախիջևանի Աստապատ գյուղի խոսվածքները և արևմտյան տարածքից՝ Ակնի, Մանիսայի, Նոր Նախիջևանի բարբառները: Հնչյունափոխված տարբերակներից են՝ *հոքու հաց // հոքու հաց* (Օշական, Թալինի Ներքին Սասնաշեն, Ախալքալաքի Բեժանո, Բոգղանովկայի Փոգա, Փերիայի Շուրիշկան, «Հօքու հաց դըվավ մ՛ննօղին անունին», Խարբերդի Բազմաշեն), *հոկու հաց* (Օրդու, Մոտկանի Նիչ), *հոկու հաժ // հոկու հաժ* (Խուրթի Շեն և Թաղավանք, Ալաշկերտի Յօնջալու և Իրիցու գյուղ, Սասունի Ընգուզնակ, Կրխու և Սաղդուն, Ճենիկ, Աբխազիայի Ալախաձե, Կարսի Քյուրազդարա), *հոքուն հաց* (Ասլանբեկ), *հոքիին համար հաց* (Նիկոմեդիայի Արմաշ), *խուկու խաց* (Սպարկերտի Տոսու և Վերին Հուրուք, Ուշի), *խոքու խաց // խօքու խաց* (Արծկեի Հառեն և Արջրա, Մանազկերտի Էգնախոջա և Բաղնոս, Էջմիածնի Արագած և Առատաշեն, Նախիջևանի Ուլյա և Նորաշեն, Քյազազի Գուլիզարդ, Սուրմալուի Դաշբուռուն և Ղազուկըշլաղ, Դիադինի Ջուջան, Խիզանի Խարիդ), *խուկու խաց* (Մոկսի Կըճավ, Կարկառի Ծոկու), *խօկու խաց* (Վանի Մխկյա և Մխկներ, Արճակի Սևան և Լիմ, Գավաշի Հարպերտ), *խուքու խաց* (Թիմարի Մարմետ), *խօկու խաց* (Շատախ, Մոկսի Մամոտանց), *խօքիին խաց* (Մարաղա), *խօկու խաց* (Արծկեի Առնջկույս և Կոճերեր, Աշտարակի Ոսկեհատ, Բիթլիսի Դերըկ, Սուրմալուի Կուլաք), *խօկու խաց* (Հայոց ձորի Նորգեղ), *խօքու խաց* (Խոյի Սեյրավար, Արճակի Մանդան), *խօքը խաց* (Խոյի Կարակըզի և Բադիլբոյ) և այլն:

Քիչ չեն նաև *հոգու հաց* բառակապակցության մեկ շեշտով կցական գործածությունները (գրանցել ենք 13 տարբերակ). *հոքուհա՛ց* (Կոշ, Առինջ, Սեբաստիայի Դենդիլ և Մանջալիկ, «Յօթին հոքուհա՛ց գուդ՝աք գօր»), *հօկուհա՛ժ* (Մուշի Մկրագոմ և Վարդենիս, Բուլանուխի Կոպ, Բասենի Արմալու, Վանի Աղբակ, Համշեն, Ճանիկ, Սամսոն և Օրմօնք՝օյ), *հօկուհա՛ժ* (Մուշ, Ապարանի Նիգատուն, Արագած, Ափնագյուղ), *հօկուհա՛ժ* (Սասունի Գոմք), *հօկուհա՛ժ* (Փսանքի Մըշկեղ), *խօկուխա՛ց* (Բիթլիս, Խիզանի Պոռշենց, Թիմարի Դոնաշեն), *խուկուխա՛ց* (Մամոտանցի Սեղ), *խօքուխա՛ց* (Փերիայի Ծաղկալանջ) և այլն:

Հոգեհաց բառի բարբառային հոմանիշները: Բավականին հարուստ է *հոգեհաց* բառի հոմանշային արտահայտությունը: Դրանք ունեն

տարբեր կազմություններ. 1) երբ *հոգի* (*հոգու*, Ղրիմ, *խոկոնու*, Սպարկերտի Տոսու և Վերին Հուրուք) կամ *հաց* (*խաց*, Ալաշկերտի Կազի, Նաիրիի Թեղենիք, Կարկառի Ծոկու, Աշտարակի Ագարակ, Խոյի Կարակըզի և Բաղիլթոյ) բաղադրիչներն առանձին արտահայտում են «հոգեհաց» իմաստը: 2) Նույնարմատ հոմանիշներ, որոնցում հիմնականում պահպանված են կա՛մ *հոգի*, կա՛մ *հաց* բաղադրիչները:

ա) *Հոգի+ այլ բաղադրիչ*. Հօկու *հարգ*, Շատախի Գյարմավ, *հուկկոնու արույ*, Հաջըն, *հոկու խեր*, Մոտկանի Կոռ, *հոկկոնու ուղըլիք*, Բեյլան, *խուկոնու վրոըհիկ*, Մամոտանցի Ապարանց, *խօկու խեր*, Արծկեի Առնջկույս, Աշտարակի Ոսկեհատ, *հօքէջաշ*, Ակն, *հօքու ջաշ*, Մալաթիա, *հօքահա՞նգիստի հաց*, Օրդուբադի Մեսրոպավան և այլն:

բ) *Այլ բաղադրիչ + հաց*. Ծնկնահաց // ծնկահաց, Լոռի, Բորջալու և այլն:

Հաց բաղադրիչը պահպանվում է *մեռել* և *ժամ* բառերով կազմված բաղադրություններում:

Մեռել + հաց, ծաշ, պատարագ կամ *ժամ* կառույցի բարբառային զուգաբանություններ: Նշենք, որ *մեռ* արմատով կազմված *մեռելահաց* բարդությունն ունի մոտ 30 տարբերակ և բնորոշ է բազմաթիվ բնակավայրերի:

Բարդ բառեր՝ *մեռելահաց* // *մէռէլահաց*, Ղազախ, Ղարաբաղ // *մեռելիսաց*, Ալաշկերտի Յոնջալու, Անիի Սառնաղբյուր // *մէռէլիաց*, Մուժումբար, Ախալքալաքի Կարծախ // *մէռէլիած՞*, Սասունի Կրխու // *մէռլահաց* // *մեռլահաց*, Արարատյան, Եղվարդ, Շամխորի Նյուզգեր // *մեռլահաց*, Ալաշկերտի Կազի, Կարկառի Ծոկու, Աշտարակի Ագարակ // *մէռըլիսաց*, Այնթափ // *մըռլահաց*, Դաշքեսանի Բանանց, Կարմիրի Վերին Ճամբարակ, Շամխորի Մարտունի, Գորիսի Վերինջեն և Բոուն, Իջևանի Ծաղկավան, Խանլար, Շահումյանի Բուզլուխ // *մըռըլիած՞*, Սասունի Մառնիկ // *մըռըլահաց*, Մարտակերտի Թալիշ, «*Մըռըլահացէն հէտան յըտնատոր չըն անէլ*», Ղափանի Ներքին և Վերին Խոտանան, *մէռէլիսաց*, Ապարանի Ձորագլուխ // *մըռըլահաց*, Վաղուհաս // *մեռել ժամ*, Չենկիլեր // *մահահաց*, Խարբերդի Հաբուսի և այլն:

Բառակապակցություններ՝ *մէռլի խաց*, Կոտայքի Ակունք // *մեռլի հաց* // *մէռլի հաց*, Քանաքեռ, Փերիայի Միլակերտ // *մահոնի հաց*, Բալուի Նաջարան // *մըռլի հաց*, Գորիսի Շինուհայր // *մըռըլի հած՞*, Բուլանուխի Կողակ // *մէռէլի խաց*, Բիթլիսի Քըխսամ // *մէռըլիսաց*, Այնթափ //

մէռէլօցի հաց, Շամախու Սաղյան // մէռլի ժա՛մ, Գավաշի Հարպերտ // մեռլի ճաշ, Յաճի Թիմարի Քօջանի // մեռլի պաղարաք, Ղարաղաղի Վինան և այլն:

Մեծ թիվ են կազմում *պապարազ* բառով կամ դրանով բաղադրված հոմանիշները (26 տարբերակ):

ա) *Պաղարակ*, Խնուսի Գոպալ, Ապարանի Ձորագլուխ, Մելիքգյուղ, Արայի, Ափնա, Կայք, Բուլանուխի Կոպ և Շերվանշեխ, Արծափի Կոզովիտ, Մարտունու Նորգյուղ, Մաղինա և Լիճք, Կարսի Նախիջևան, Մանագլերտի Ռստամ-Գեղուկ, Բասենի Վելի Բաբա // *պաղարակ՛*, Խուրթի Թաղվու // *պաղարաք*, Արարատ, Սիսիանի Ուզ և Տոլորս, Նուխի, Բայազետի Մուսուն, Վերին Բասենի Ալիճագրակ, Կարինի Դիլիֆ, Ներքին Բուլանուխի Լիզ, Աբովյանի Կամարիս, Ալաշկերտի Ուջքիլիսա, Բասենի Տաղվերան, «Իվիլ յթիքյա՛ն կըլիւէթ պըղա՛րա՛ք՛ տէռնա» // *պաղարաք՛*, Բուլանուխի Միրբար, Մուշի Վարդխաղ // *պաղարագ*, Բոզդանովկայի Փոզա // *պաղարաք՛*, Ղարաբաղի Ուրգութուն // *պաղա՛րա՛ք՛*, Էջմիածնի Աթարբեկյան // *պապ՛արաք՛*, Օհանավան // *պապարաք*, Ազա, Ապարանի Եղիպատրուշ, Վարդենիս, Թթուջուր, Վարդաբլուր, Մուշի Եկմալ և Լաթար, // *պա՛պա՛րա՛ք*, Մակու, Լճաշեն // *պապարաք՛*, Բաղեշի Շամիրամ, Սպարկերտի Տոսու և Վերին Հուրուք // *բաղարաք*, ԼՂՀ Վաղուհաս, Գորիսի Քարահունջ // *բաղարա՛ք*, Մարտակերտի Սեյտուլան // *բաղարա՛ք՛*, Ասկերանի Խանաբաղ, Մարտունու Եմիշճան // *բ՛աղարաք*, Բեյլան, «Հիկկիյին բ՛աղարաք էնցըցինք, ուղըլիք դըվինք» // *բաղարաք՛*, Հաղրութի Հին Թաղեր, Վերին Հոռաթաղ, Մեհտիշեն, Ղազարահող, Նուխիի Դաշպուլաղ // *բաղարէք՛*, Հաղրութ // *բա՛ղա՛րա՛ք՛*, Մարտակերտի Չափար, Նուխիի Սաբաթու // *բըղարաք*, Գորիսի Խոտ // *բըղա՛րաք*, Կարմիրի Վահան և այլն:

Հոգեհաց տալու գործողությունը Սյունիք-Արցախ բարբառախմբում նշվում է *բաղարաք՛ անէլ // տալ* «հոգեհաց կազմակերպել մահացածի համար», *բաղարաք՛ը օտէլ* «հոգեհացին մասնակցել, ներկա լինել» հարադրություններով:

բ) *Հոգու պապարագ*, Չենկիլեր // *խօկու պապարաք*, Մարտունու Մոլալու // *պապարաքի հաց*, Բալահովիտ, Փերիայի Նամագերդ // *պապարաքի խաց*, Խոյի Գետագատ, Փերիայի Ղարղուն // *բըղըրըքա՛ հաց*, ԼՂՀ Կոճողտ // *պաղարաքի հաց*, Ուրմիայի Իքի-Աղաշ և այլն:

Հոգեհացի իմաստը հայերենի բազմաթիվ բարբառներում արտահայտվում է նաև *ժամ* արմատով կամ *ժամ* բաղադրիչ ունեցող կազմություններով՝ *ժամ*, Խոտրջուր, Նախիջևանի Մեծոփ // *ժամ*, Մոկսի Հաղին // *ժրմահաց*, Սիսիան, Դաշքեսանի Բանանց // *ժամախաց*, Աշտարակի Տեղեր // *ժամահաց*, Արարատան, Շիրակ, Նախիջևան // *ժամուհած*, Մուշի Բոստաքյանդ, «Մըր էրգիր ժամու հած փուն չիդէն, ժամու դ՞ուռ կիդէն՝ փըշում է հած, փըշում է միս» // *ժամահաց*, Նախիջևանի Փարադաշ // *ժամախաց*, Խոշաբի Հուռթուկ // *ժամի խաց*, Հին Ջուղա // *ժամու խաց*, Եղեգնաձորի Ենգիջա, Աշտարակի Անտառուտ, Արտաշատի Ազատավան, Հայոց ճորիՆորգեղ և այլն:

Տարարմատ հոմանիշներից առանձնապես տարածական բարձր հաճախականություն ունեն *ողորմություն* և *քելեխ* բառերը՝ համապատասխան հնչատարբերակներով (14 հնչատարբերակ):

1) *Ողորմություն >ողորմութուն* (Ադանա) // *ողորմութուն* (Երզնկա) // *ողորմութունէն* (Սալմաստ) // *վողորմութին* (Տիգրանակերտ) // *ուղորմըթին* (Բեյլան) և այլն:

Կեսարիայի բարբառին բնորոշ *ողորմըթըն* հնչատարբերակը թրքախոս հայերից անցել է նաև թուրքերի և թրքախոս հույների բառապաշարին⁵:

2) *Քելեխ*, Երևան, Շուկավեր, Թբիլիսի // *քիլեխ*, Ստեփանավանի Վարդաբլուր // *քելեխ*, Թումանյանի Թեղուտ // *քելեխ*, Ապարանի Մելիքգյուղ, Հարթավան, Արագած, Ափնա // *քիլեխ*, Կարկառի Ծոկու // *քիլեխ*, Եղեգնաձորի Ենգիջա // *քըլըխ*, Մոտկանի Մրցանք // *քիլեխ*, Օհանավան // *քըլեխ*, Նաիրիի Քասաղ // *քըլեխ*, Եղեգնաձորի Աղավնաձոր, Նախիջևանի Շուռուտ // *քըլըլեխ*, Մարտունու Լիճք, Գորիսի Քարահունջ // *քըլեխ*, Արտաշատ, Մասիս և այլն: Այս բառը հանդիպում է քրդերենում՝ *քելեխ-ա ֆըլա* «հայի քելեխ» բառակապակցության մեջ, որն ամենայն հավանականությամբ փոխառություն է հայերենից: Բոգդանովկայի Փոզա գյուղի խոսվածքում *քելեխ* բառն ունի նախատական, վիրավորական իմաստ և ասվում է անարժան մեկի հոգեհացի մասին:

Տարարմատ հոմանիշներից են՝ *համփիս*, Կեսարիա // *համպոյս*, Սվեդիայի Խտրբեկ // *արգ*, Կեսարիա // *հա՛րգ*, Սասուն, Գեղիեգուզանի գաղթականներով բնակեցված Աշտարակի Լեռնարոտ // *(ժամա)հարգ(ը)*,

⁵ Նման տարբերակ գտնում ենք Ս.Անթոյանի «Կեսարիայի բարբառը» (Ե., 1962) գրքում:

Նախիջևանի Ազնաբերդ, «*Հարգ (ժամ) տրվին մէնօղի պաղվին*», Նախիջևանի Մեծուփ // *պաշտում*, Միլակերտ և Նամագերդ, «*Մէռլին պաշտում ան անում*», Փերիայի Հադան // *պաշտումահաց*, Երևան, Ղազախ // *հ'էրէսի հաց*, Իգդիրի Հախվերիս // *հ'էրէսի խաց*, Վարդենիսի Թուսկուլու // *յաւրխաց*, Մարաղա // *խեր*, Մուշի Հացիկ // *խեր*, Մելիքայուղ, Արայի // *խերի հած*°, Ալաշկերտի Յօնջալու և Իրիցու գյուղ // *խերի խաց*, Արճեշի Կտրած քար, Սուրմալուի Մոլլաղամար // *խերուհաց* // *ջաշ*, Սասունի Իշխանաձոր, Աշտարակի Ավան // *հողվերկի հած*, Սասունի Արծվիկ // *փէղըղի հաց*, Ալաշկերտի Խաստուր // *նի'գնահաց*, Մեղրի // *մահվան հոց*, Ագուլիս // *խացխա'նա*, Սպարկերտի Տոսու և Վերին Հուրուք // *խաչօխնա'*, Խոշաբի Չենիս // *խաչօխնա*, Վանի Քոեր // *խաչօխնան*, Վանի Դարման, Ծվստան, Աղբակի Հասպըստան // *աբէդ*, Սասունի Հոսներ, Թալինի Ներքին Սասնաշեն // *սադախա*, Էվերեկ // *վարցք*, Բուլանուխի Միրբար // *զա'տ*, Սասուն // *ողորմաճաշ*, Թբիլիսի // *ճաշիտուն* (=ճաշիտուն), Մուշի Մկրագոմ // *ոահմ* // *սադադ*, Քանաքետ // *թիքա'*, Գորիսի Վերին շեն և Բոուն // *գօնիալա*, Վանի Ջարա // *գ'օ'նիա'լա'* Վանի Խէք // *սուֆրա-սեղան*, Բուլանուխ, «*Մարդուն' սուֆրա-սեղան, կնկան' կանած փողան*» (= Մինչ ամուսնու հոգեհացն են տալիս, կնոջ ուզողները լցվել են տան սրահներն ու փողոցները):

Մի շարք վայրերում հանգուցյալի հիշատակին տրվող հացի անվանումը գործածվում է իմաստային կոնկրետացմամբ կամ սահմանափակումով:

Վերին Բուլանուխի Փիրանի խոսվածքում *անբիծ'կ* բառով նշվում է միայն առաջին օրը տրվող ուտեստը: Թիֆլիսի բարբառում *սուրփ սիղան* են կոչում հանգուցյալի քառասունքը և այդ առթիվ տրված ճաշը: Վանի Թիմարի շրջանի Պողանց գյուղի խոսվածքում *խաչօխնա* բազմիմաստ բառ է և նշանակում է՝ «1. հոգեհանգիստ, 2. հոգեհաց, 3. հանգուցյալի հիշատակին նվիրված պատարագ»: Ագուլիսի բարբառում *պաշտումահոց* կամ *պաշտում* են ասում պատարագից հետո տրվող հոգեհացին: Արարատյան բարբառում *պաշտումահացը* ընթրիք է, որը տալիս են ննջեցյալի հոգու խաղաղության համար երեկոյան հոգեհանգստից հետո:

Սասունի Հոսներից գաղթածներով բնակեցված Թալինի Ներքին Սասնաշենի խոսվածքում *խաչխանա*-ն յոթին տրվող հոգեհացի անվանումն է, որին Ջավախքում ասում են *օխթի հաց*, Չեյթունի բարբառում՝

հիկկ'ի հոց: Նիկոմեդիայի Խասկալ գյուղի խոսվածքում *հոքէհաց* բառը իմաստային նեղացման հետևանքով ձեռք է բերել միայն «կիրականամուտին տրվող ուտեստ» նշանակությունը: Իմաստափոխված է նաև Գավաշի Հարպերտի խոսվածքում՝ *խաշխունա՝* այսինքն՝ քառասունքին տրվող հաց՝ «*Քառասունքին խըրխաս կըրան*»:

Կարնո բարբառի Ջավախքի խոսվածքում *փեղարի հաց* են ասում հատկապես գերեզման փորողներին տրվող հոգեհացը:

Ղարաբաղի բարբառում *ժըմահաց* կամ *պարարագ* բառերով նշվում է այն հոգեհացը, որին հրավիրվում է քահանան ննջեցյալի տնեցիների կողմից: Մոկս-Մամոտանցի Ապարանց բնակավայրի խոսվածքով *խաշխանա* կոչվող հոգեհացը տրվում է հանգուցյալի մահվան տարելիցին. այդ առիթով մի քանի կով են մորթում, քարի վրա մեռոն են թափում:

Մահացածի հիշատակին ասվող խոսքը կոչվում է *օղորմաթաս* կամ *հօգէթաս:*

Հոգեճաշ հասկացությունը *այգողք* (այգ+ողք+ք) բառով է նշվում Կեսարիայում (*աքողք*), Ջեյթունում (*աքո՝ւխք, էագո՝ւղք*) և Ադաբազարում (*այկօծ*): Սեբաստիայի բարբառում *աքօխք*-ը լավաշ հացով չամիչն է, որ պարկերով բերում են և բաժանում գերեզմանատանը ներկա գտնվողներին: Լեզվական այս իրողությունը կարելի է բացատրել իմաստային փոխհաջորդականությամբ կամ թաղման օրը հոգեհացի ծես ընդունված չլինելով: Որոշ վայրերում թաղումից հետո հոգեհացի ծես չլինելու հանգամանքը հաստատվում է նաև Ղարադաղի Սարդու բնակավայրի *օխնը* (<եօթն) բառով:

Վանի Դարման և Ծվստան բնակավայրերում ևս թաղման օրը հոգեհաց չի տրվել: «*Յօթին կուրան խաչօխնա, թաղէլու օր չին խըմէ, ուտէ*», - վկայում է բարբառախոսը: Վերին Բուլանուխի Փիրան գյուղի խոսվածքի *պարարաք* բառով ևս նշվում է թաղման հաջորդ օրը տրվող հոգեհացը: Նախիջևանի Կյաղ բնակավայրում մեռելի թաղման երկրորդ օրը տրված ուտեստը կոչվում էր *գօրփա՝րա՝* (գյոռ՝ քրդերեն «գերեզման», *փարա՝* պարսկերեն «փող»):

Նիկոմեդիայի Արմաշ և Սեբաստիայի Ջարա բնակավայրերի խոսվածքներում *հոգեհաց* բառը որևէ համարժեքով արտահայտված չէ: Որպես բացատրություն բարբառախոսը նշում է. «*Յոթ օր օջախ չեն*

վառում, յոթին եկեղեցուց դուրս եկողին լավաշի մեջ փաթաթած միս կամ չամիչ են բաժանում որպես ննջեցյալի հոգու համար տրվող հաց»:

Մոտկանի Մցու գյուղի խոսվածքով այդ գործողությունն անվանում են *հաց տալ*, ԼԴԸ Խանազահի խոսվածքով՝ *ժամ արիլ*, Համշենի Օրդուում՝ *կօվուշ* (<գովել) անորոշ դերբայով և այլն: Հանգուցյալի գովքը Համշենի տարածաշրջանում կոչվում է *մա՛ր տուշ* («գովել»):

Այս ծիսակարգի իմաստային դաշտին առնչակից են *խացին հասնել* (Վան)՝ «մահը չտեսնել, միայն հոգեհացին հասնել», *ժամանել* (Քանաքեռ)՝ 1) «ննջեցյալի համար պատարագ անել տալ», 2) «հոգեհաց տալ», *եօթնէից կատարել* (Ջավախք)՝ «հուղարկավորությունից հետո քահանայի՝ 7 օր ննջեցյալի տուն գնալը և հատուկ կարգ կատարելը, որի ընթացքում քահանային միշտ «*օխթն օրէնքի*» հաց են տալիս», *հոգոց ասել* (Ջավախք)՝ «հոգեհացը ավարտելուց հետո սգավոր տանտիրոջը մխիթարելու արարողության աղոթք ասել», որն ավարտվում է «*Աստուած ընդունելի էնէ, հոգին սուրբ կամար կապէ հին ու նոր ննջեցեալներիդ վրան*» [8, 314] և այլն:

Եզրակացություններ

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մարդկային կյանքի անխուսափելի ավարտը նշող ծիսակարգին առնչվող *հոգի* և *հոգեհաց* հասկացությունները հայերենի տարածքային տարբերակներում բնորոշվում են բազմաթիվ բառերով, հնչյունական և բառային զուգաբանություններով, հոմանիշներով, դարձվածքներով, նկարագրական կառույցներով, որոնք արտահայտվում են հայերենի բառակազմական բոլոր միջոցներով:

1. Ննջեցյալի հետ կապված սովորույթների ու ծիսական արարողությունների երեք հիմնական փուլերին առնչվող բարբառային բառապաշարով առանձնանում է երրորդ՝ մեռածի հիշատակին նվիրված արարողությունները բնութագրող բառաշերտը: Առաջին՝ հոգեվարք ապրողին, և երկրորդ՝ հուղարկավորության ծիսակարգին առնչվող բառաշերտն այնքան էլ հարուստ չէ:

2. Հոգի բառը թե՛ արևելյան, թե՛ արևմտյան խմբակցության բարբառներում հանդես է գալիս հնչյունական տարբերակվածությամբ, և տարածական գործառականության ամենաբարձր ցուցանիշն ունի *հօքի* (*q>ք*) հնչյունական զուգաբանությունը:

3. Հայերենի բարբառները բավականին հարուստ են հոգեհացի ծիսակարգը բնորոշող բառերով ու արտահայտություններով: Մի շարք վայրերում *հոգեհաց* բարդ բառին համարժեք է *հոգու հաց* բառակապակցությունը՝ համապատասխան հնչյունական տարբերակներով:

4. Հայերենի տարածքային տարբերակներում լայն տարածում ունեն հատկապես *հոգի+ այլ բաղադրիչ, այլ բաղադրիչ+հաց, մեռել + հաց, ճաշ, պատարագ* կամ *ժամ* կառույցի բարբառային բաղադրությունները:

5. Բավականին հարուստ է *հոգեհաց* բառի հոմանշային արտահայտությունը: Տարարմատ հոմանիշներից առանձնապես տարածական բարձր հաճախականություն ունի *քելեխ* բառը՝ համապատասխան հնչատարբերակներով:

6. Մի շարք բարբառախոս վայրերում հոգեհացի ծիսակարգ չի կատարվել կամ փոխարինվել է այլ արարողությամբ, ուստի տվյալ խոսվածքներում համապատասխան լեզվական միավոր գրանցված չէ:

Գրականության ցանկ

1. «Ազգագրական հանդես» 1895, հ. 1, Շուշի, 145:
2. Աճառեան Հ., Հայերեն գաւառական բառարան, Լազարեան ճեմարան արեւելեան լեզուաց, Թիֆլիս, 1913, 894:
3. Ամատունի Սահակ վարդապետ, Հայոց բառ ու բան, Տպարան Մայր Աթոռոյ ս. Էջմիածնի, Վաղարշապատ, 1912, 399-400:
4. ԲղոյանՎ., Հայ ազգագրություն (համառոտ ուրվագիծ), ԵՊՀ հրատ., Ե., 1974, 171, 179:
5. Բենսէ, Բուլանըխ կամ Հարք գաւառ, «Ազգագրական հանդես», Չորրորդ տարի, Ե գիրք, N 1, Տպարան Ա. Մարտիրոսեանցի, Թիֆլիս, 1899, 172:
6. Գիշյան Բ., Մահվան արևելյան և արևմտյան արժեքային կողմնորոշումների համեմատության փորձ // «Բանբեր Երևանի համալսարանի», 2 (113), Ե., 2004, 99-08:
7. Թուրջյան Հ., Բառարան Վանի բարբառի, «Վասպուրական» հայրենակցական միություն, աշխատասիրությամբ Հայկանուշ Մեսրոպյանի, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Ե., 2018, 90:
8. Լալայեան Ե., Ընտանեկան բարք. Մահ, թաղումն և մեռելոց // «Ազգագրական հանդես», Գիրք Ա, Շուշի, 1896, 314:

9. Հայկունի Ս., Կագուան Ասլան, բանասաց Մկրտիչ Կուլան, «Էմինեան ազգագրական ժողովածու», հատոր Զ, Տպարան Մայր Աթոռոյ ս. Էջմիածնի, Վաղարշապատ, 1908, էջ 14:

10. Հայկունի Ս., Ժողովրդական երգ, առած, ասած, հանելուկ, երգում, օրհնանք, անէծք եւ այլն // «Էմինեան ազգագրական ժողովածու», հատոր Զ, Մոսկուա – Ալեքսանդրապոլ, 1906, 145:

11. Հայկունի Ս., «Էմինեան ազգագրական ժողովածու», հատոր Զ, Տպարան Մայր Աթոռոյ ս. Էջմիածնի, Վաղարշապատ, 1908, 14, 326:

12. Մալխասեանց Ս., Հայերէն բացատրական բառարան, ՀՍՍՌ Պետհրատ, հ.1, 3, Ե., 1944, 3, 121:

13. Մեսրոպյան Հ., «Մահ» հասկացոյթանը վերաբերող բարբառային բառաշերտի ընդհանուր բնութագիրը // «Լեզու և լեզվաբանություն», N 1, Ե., 2022, 21-32:

14. Մխիթարեանց Աղ., Փշրանք Շիրակի ամբարներից, «Էմինեան ազգագրական ժողովածու», հատոր Ա, Մոսկուա – Ալեքսանդրապոլ, 1901, 145:

15. Սուքիասյան Ա., Հայոց լեզվի հոմանիշների բառարան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1967, 594:

16. «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Ե., 2002, 14, 595:

**ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅՈՒ ՄԻ ՇԱՐՔ ՆՈՐԱԿԱԶՄ ԲԱՌԵՐԻ
ԻՄԱՍՏԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ
ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՀՀ ԳԱԱ լեզվի հնստիտուտ
ավագ գիտաշխատակից, ք.գ.թ.
Susanna7494@gmail.com

DOI: 10.57236/1829-0183-2023.2(29)-92

Համառոտագիր

Գրիգոր Տաթևացու գրական ժառանգության նորակազմ բառերի քննությունը հետաքրքիր է ինքնին, սակայն հեղինակի գործածած նոր բառերը հետաքրքիր են նաև այդ հասկացությունների նրբիմաստների ժամանակակցի ընկալման և մեկնաբանման առումով: Դրանք երբեմն պատմական տեղեկություն են պարունակում, ինչպես ունենք օրինության կարգի հետ կապված նորակազմ բառերի դեպքում, որոնք մեծ մասամբ վկայված չեն գրաբարյան բառարաններում:

Բանալի բառեր և բառակապակցություններ՝ նորակազմ բառեր, համագործածական բառեր, ծիսակրոնական հասկացություններ, երաժշտական հասկացություններ, բժշկագիտական հասկացություններ, իմաստային քննություն:

**SEMANTIC STUDY OF GRIGOR TATEVATSI'S NEWLY WORDS.
SUSANNA GRIGORYAN**

Candidate of Philological Sciences
National Academy of Sciences of the Republic of Armenia
Senior Researcher
Susanna7494@gmail.com

Abstract

Sometimes they contain historical information, as in the case with newly formed words related to the order of blessing, and for the most part these words are not attested in Grabar dictionaries.

Key words and phrases: new words, collaborative words, ritualistic concepts, musical concepts, medical concepts, semantic examination.

СЕМАНТИЧЕСКОЕ ИССЛЕДОВАНИЕ НОВЫХ СЛОВ ГРИГОРА ТАТЕВАЦИ

СУСАННА ГРИГОРЯН

Кандидат филологических наук
Национальная Академия наук РА
Старший научный сотрудник
Susanna7494@gmail.com

Аннотация

Рассмотрение новых слов литературного наследия Григора Татеваци интересно само по себе, но новые слова, использованные автором, чрезвычайно интересны и с точки зрения современного восприятия и интерпретации нюансов этих понятий. Иногда они содержат исторические сведения, как это имеет место в случае с новообразованными словами, относящимися к порядку благословения, и по большей части эти слова не засвидетельствованы в словарях древнеармянского языка.

Ключевые слова и словосочетания: новые слова, общеупотребительные слова, ритуальные понятия, музыкальные понятия, медицинские понятия, семантическая экспертиза.

Ներածություն

Գրիգոր Տաթևացին գրեթե իր բոլոր աշխատություններում մի կողմից ամփոփել է Սուրբ գրային մեկնությունները, մյուս կողմից՝ բերել նոր երանգներով հարստացած հեղինակի իր խոսքը: Նրա մեկնությունները հայերենի ճկուն լեզվամտածողության դրսևորում են, հանգամանք, որը Գրիգոր Տաթևացու գրական ժառանգության արժեքավոր կողմերից մեկն է:

Մի շարք հեղինակներ, Հ. Աճառյանը և այլք [3; 5; 8; 7], որոնք իրենց աշխատություններով համալրել են գրաբարյան բառարանները, բազմաթիվ անգամ հղում են Տաթևացու բառագործածություններին և բառամեկնություններին, որը դարձյալ հաստատում է որոշակի բառերի՝ Տաթևացու հեղինակած լինելու փաստը: Այսպես օրինակ, Լ. Հովհաննիսյանի «Գրաբարի բառարան. Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր» աշխատության մեջ (այսուհետև՝ ԼՀԳԲ) *ախթարմայ. անհապողողութիւն, առնչական, բացբարձութիւն, կոպիտ, միջակօրէն, պատարագելի, փոխարկապէս* բառերի դեպքում հղում է Տաթևացուն [7]: Ռ. Ղազարյանի, Հ. Ավետիսյանի «Միջին հայերենի բառարան»-ի (այսուհետև՝ ՄՀԲ) դեպքում այդ հղումները հասնում են շուրջ հարյուրի:

Հ. Աճառյանը «Հայերէն արմատական բառարան»-ում (այսուհետև՝ ՀԱԲ) Տաթևացու բառերին հղելիս գործածում է բառերի բացատրության բոլոր մոտեցումները, այսինքն՝ բուն բացատրության կողքին Տաթևացու գործածությամբ իր բառերով՝ կա՛մ «ճշտում է բառի նշանակության նրբություններ», կա՛մ վերականգնում է ենթադրելի ճիշտ բառաձևը, կամ էլ այն բերվում է իբրև ժամանակակցի վկայություն, մի բան, որ ոչ բոլոր հեղինակների պարագայում է կիրառելի եղել: Ըստ էության, սա մի փաստ է, որ գրաբարյան բառանյութի պարագայում ի դեմս Տաթևացու Աճառյանը նկատել է վստահելի գիտակին:

Տալով հայ մատենագիտության հայտնի շրջանաբաժանումը՝ Աճառյանը հատուկ ուշադրություն է հրավիրում, որ հայ մատենագրության հինգ շրջաններից միայն երկուսի՝ ոսկեդարյան շրջանի և հետոսկեդարյան շրջանի բառերն են ընդգրկվել ՀԱԲ-ում, այսինքն՝ բառարանում ընդգրկելով Տաթևացու գրական ժառանգության բառանյութը՝ հայագետն ընդհանրապես կասկածելու տեղ չի թողնում, որ այս հեղինակի գրական ժառանգության բառանյութը «ոսկեդարեան» կամ՝ «հետոսկեդարեան» շրջանին է պատկանում՝ դրանով իսկ ցույց տալով իր անհամաձայնությունը «Նոր հայկազեան բառարանի» հեղինակներին, որոնք Տաթևացու ոճը ժամանակին բնութագրել են «ստորին» [6]:

Սրա հետ մեկտեղ, անգամ Հ. Աճառյանի «Հայերէն արմատական բառարան»-ում կան դեպքեր, երբ վիճելի հարցերի դեպքում հաստատապես կարելի է վստահել Տաթևացու տեսակետին: Օրինակ՝ *տօնահմայք* բառը Տաթևացին բերում է որպես «թերափիմք» բառի բացատրություն՝ «գուշակության, դյուօթի, հմայության համար գործածվող իր» իմաստով: «Այլ և թերափն՝ իղձք ասէ և թերափիմք՝ տօնահմայք» [1, 425]: Երեմիա Մեղրեցին «Բառգիրք հայոց»-ում [11] նույնպես «թերափիմ» բացատրում է «տօնահմայս»: Հ. Աճառյանը, ապա նաև Ստ. Մալխասյանցը *թերափիմ* բառի բացատրության մեջ նախնիների «տօնահմայք» բացատրությունը համարում են սխալ, քանի որ այն, ըստ Աճառյանի, երբայերենից թարգմանաբար նշանակում է «մարդանման կերպարանքով տնային կուռք», ըստ Մալխասյանցի՝ «մարդակերպ տնային կուռք»: Վերջինս բերում է «տօնահմայք»-ի առանձին բացատրություն, սակայն հարցականով, այն է՝ «հմայութեան տօն»: Փաստորեն, չունենալով «տօնահմայք»-ի հստակ բացատրություն՝ նախկին տեսակետները սխալ են համարվել: Տաթևացու բացատրությունը հետևյալն է. բերում ենք ամբողջությամբ. «Եփուսն

հոմանուն է, քանզի կոչի ուսանոց և կոչի վիճակ: Այն, որ ուսանոց է, որպես վակաս քահանային, և որպես մայրն Սամուէլի արար: Եվ այն որ վիճակն է, ծիրանեգոյն հանդերձ է, որ սեղան հացին և զխնկոցն ծածկէին. և տեսություն և փրկութիւն թարգմանի: Իսկ *թերափն է բոլորակ հանդերձ ծածկոյթ տապանակին*: Եւ զայս գործի հմայութեան առնէին և քավութիւն թարգմանի: Այլ և *թերափն՝ իղծք ասէ և թերափիմք՝ տօնահմայք* [1, 425]:

Սա ծիսակրոնական մի հատված է, որտեղ կան տասնյակից ավել ծիսական հասկացություններ, պատմական տեղեկություն ուսանոցի կամ քահանայի վակասի մասին և վերջապես տրվում է հստակ բացատրություն «թերափ»-ի և նրա կիրառության վերաբերյալ. շրջանաձև կտորը, որով ծածկվել է տապանակը, կոչվել է «թերափ», ինչով և (*հավանաբար, տոն օրերին*) կատարվել են հմայություններ («Եւ զայս գործի հմայութեան առնէին»), և հավանաբար «հմայութեան գործի» առնողները կոչվել են «տօնահմայք»: «Գրաբարի հոմանիշների բառարան»-ում կարդում ենք. «*իղծ - 1. ըղձապատում, հարցուկ, կախարդ, դիպ. 2. յոգն. - ըղձութիւն, դիպութիւն, գուշակութիւն, հմայութիւն, հմայք*» [9, 300], որով էլ բացատրվում է «*թերափն՝ իղծք ասէ*» արտահայտությունը:

Կան նորակազմ բառեր, որոնք չնայած Հ. Աճառյանի բառարանում հիշատակվում են որպես նոր, սակայն հղում չկա Տաթևացուն, օրինակ՝ *բաժանելի* բառի դեպքում, որը սակայն, Տաթևացին ոչ միայն օգտագործել է, այլև նույն բաղադրիչով նաև կազմել նոր բառեր. *բաժանելի, բաժանիչ, բաժանորդ* (վերջինս ժամանակակից հայերենում դարձյալ համագործածական բառերի շարքում է): Այս կերպ *բան* բաղադրիչով կազմվել են *բանականաբար, բանակրութիւն, բանաւորիլ, այլ բաղադրիչով՝ այլագիծ, այլակատար, այլամագ, այլայլոյր, այլավիճակ, արտ բաղադրիչով արտագնացումն, արտագունել, արտածորումն, արտահոսումնարտայայտումն, արտաքարշել, արտաքսելի* նորակազմ բառերը:

Նորակազմ բառերը հեղինակի համար դարձել են միջոց՝ նորովի բացատրելու մեկնաբանվող նյութը. Այդ կերպ Տաթևացին շրջանառության մեջ է դրել, օրինակ, տասնյակից ավելի ծիսակրոնական բառեր. *անմկրտեալ, բազմաքրիստոս, ողջոյնառաք* (իմա՝ աստված), *ողջոյնընկալ* (իմա՝ Աստվածածին), *որթապաշտ, նախարարչութիւն, նախաճաշակումն*, օրինության կարգի հետ կապված՝ մի ամբողջ բառախումբ. *գե-*

րեզմանօրհնէք, դեզօրհնէք, մայրօրհնէք, սերմնօրհնէք, քահանայօրհնէք և այլն [տե՛ս նաև 13]:

Մ. Օրմանյանի «Ծիսական բառարան»-ում [12] ըստ պատշաճի հավաքված և բացատրված են ծիսական, եկեղեցական, հոգևոր երաժշտության տերմինները: Հեղինակն աշխատության 3-րդ մասում, նշել է, որ՝ «հանձն չենք առել կատարել ու ոչ հնագիտական և ոչ էլ քննադատական աշխատություն, այլ լոկ առձեռն տեղեկություններ տալ և բավարարել բարեպաշտ ժողովրդին» [ն. տ.]:

Ծիսակարգային հասկացությունները և դրանց մեկնությունները Գրիգոր Տաթևացու աշխատություններում, ոչ միայն պատկառելի թիվ են կազմում, այլև հեղինակը հավուր պատշաճի կատարել է նաև նյութի համակողմանի քննություն՝ այդ թվում վերլուծելով հեթանոսական և ազգային ծիսակարգերը, եկեղեցական տոների հիմքերը և վերաիմաստավորումները: Միայն հեղինակի «Գիրք հարցմանց»-ի «Վասն տօնից հարցումն» վերնագրով 51-րդ պրակում, որտեղ ծիսական հասկացությունները վերլուծվում են նորը հնի համադրությամբ՝ վերաիմաստավորումների պարզաբանումներով, երբեմն տրվում են նաև պատմական բացատրություններ, բերվում են «բաղարջակերք», «օրենքների տվչութիւն», «քավութիւն», «տաղաւարահարաց տօն», «նորգատիկ», «հոգւոյ գալուստ», «խաչիտօն», «եկեղեցուտօն» «պասքայ», «շաբաթապահք», «պենտակոստէ» և այլ ծիսական հասկացությունները: Այստեղ հեղինակի նորակազմ բառերի առատությունը դառնում է բացատրելի (շատաքանակ լինելու պատճառով հղումները կտրվեն տեղում):

Անմկրտեալ -չմկրտված, անկնունք: «Իսկ վերջին դժոխք, որ կոչի անջրդի գութ, նոցա է, որ որք ոչ ունին չար և ոչ բարի, որպէս մանկունք անմկրտեալ» [1, 505]: ՄՀԲ-ն հղում է Տաթևացու «Գիրք քարոզութեան» Ամառան հատորին:

Բազմամայր «բազմաց, շատերի մայր». «Տասներորդ, բազմամայր եղև Սառա ըստ նահապետացն. բազմամայր է և կոյսն ըստ հավատացելոցն. բազմամայր է և եկեղեցի ըստ վերածնելոցն» [1, 307]: ՄՀԲ-ն հղում է Տաթևացուն:

Ողջոյնառաքն - Ողջոյնը առաքող, հղող: Բառը կարելի է գրանցել որպէս «աստուած» բառի հոմանիշ. «Նախ զի աստուած էր ողջոյնառաքն...:» [1, 464]: ՄՀԲ-ն հղում է «Գիրք հարցմանց»-ին:

Ողջոյն ընկալն «ողջոյնը ստացող, ընդունող» Եթե «*Ողջոյն առաքն*» աստված էր, ապա «*Ողջոյն ընկալն*» Տիրամայրն է. «Զի կոյս էր ողջոյն ընկալն և գերազանց քան զամենայն կոյս...» [ն. տ.]: ՄՀԲ-ն հղում է Տաթևացուն:

Պատկերացուցութիւն «գուշակություն ըստ մարդու դիմագծերի». «Չորեքտասաներորդ՝ պատկերացուցութիւն մարդոյն ըստ մասին» [1, 227]: ՄՀԲ-ն հղում է Տաթևացուն:

Ռամսրես «գուշակ, կախարհ, հմայող». «Ապա ուրեմն ի ժամանակիս յայս ընկեր են Սավուղայ, որք սակաւ մի կարծեօք հաւանին երազոց կամ վիճակաց և ռամտեսաց և այլոցն» [1, 429]: ՀԱԲ -ը բերում է Տաթևացու վկայությունը՝ «գրբաց» բացատրությամբ:

Տարէքուր «ննջեցյալի մահական տարին բոլորող օրը». «Զի՞նչ է եօթնօրէքն և ամսագլուխն և *տարէքուրն*» [1, 683]: ՄՀԲ-ն հղում է Տաթևացուն:

Օրհնության կարգի հետ կապված նորակազմ բառերի բերվող շարքը հետաքրքիր է թե՛ ծիսակարգային, թե՛ պատմական տեղեկություն պարունակելու և թե՛ բառիմաստի տեղաշարժի առումով:

Գերեզմանօրհնէք «գերեզմանի օրհնության կարգ, որ կատարվել է Ավագ շաբաթվա ուրբաթ օրը՝ խորհրդանշելով Յիսուս Քրիստոսի գերեզման դրվելն ու դժոխքի ավերումը». «Զգերեզմանս յորո՞ւմ աւոր պարտ է օրհնել: Պատասխանի: Ի մեծի ուրբաթն: Զի բշաբաթին մեռելոց է և ո՛չ *գերեզմանօրհնէք*: Եւ այս է խորհուրդն, զի յայնմ աւոր խաչեցաւ քրիստոս և գերեզմանք բացան և այլն: Եւ ի նոյն օրն ի գերեզման եմուտ և էջ ի դժոխս և քարոզեաց» [1, 684]: Բառն անցել է բարբառների՝ երևույթի ընդհանրացմամբ, այսինքն՝ եթե ի սկզբանե այն բացառապես վերաբերել է զատկական Ավագ ուրբաթ օրը կատարվող գերեզմանի օրհնության կարգին, հետագայում աստիճանաբար ներառել է ընդհանրապես գերեզմանի օրհնության կարգը:

Դեզօրհնէք «դեզի օրհնության կարգ». «Այլև ունինք զմարմնաւոր պատարագս զօրինակին. զենմունք վասն կենդանեաց և մեռելոց: Որպէս տօնականն զատկի և տէրունական տօնից: Անդ և *դեզօրհնէից*: Ազապս մատաղաց և ոգէհանգիստ...» [1, 362]:

Մայրօրհնէք «մայրապետության կարգ տալու օրհնություն». «Զօրհնութիւն կարգաւորութեանցս այսոցիկ ո՞վ է արարեալ և ո՞վ է բերեալ յազգս հայոց: ... Իսկ զկարգ *մայրօրհնէից* սուրբն կիպրիանոս կարգեղո-

նացի: Որ և զուստիանէ սրբուհի կոյսն մայր արար կանանց հաւատաւորաց» [1, 658]:

Սերմնօրհնէք «կալի, հնձանի, սերմի օրհնության կարգ». «Ի Բ ամի թագաւորութեանն առաքեաց սուրբն իսահակ և ետ բերել *զսերմօրհնէքն* զկալոյ և զհնձանին» [ն. տ.]:

Քահանայօրհնէք «Քահանայի օրհնության կարգ». «Իսկ վասն քահանայ օրհնէիցն սուրբն սահակ է արարեալ, յառաջին ամի եպիսկոպոսութեան իւրոյ, ի նաւասարդի ամսեանն, որ օր մի էր և յիշատակ սուրբ կարապետին արար *զքահանայօրհնէքն*». [ն.տ.: ՄՀԲ-ն հղում է Տաթևացուն:

Տաթևացու երկերում բազմաթիվ և բազմազան են երաժշտական հարցադրումները: Նման հասկացությունները պայմանականորեն՝ ըստ իմաստային դաշտերի, ներկայացնելու դեպքում, կարելի է ասել դրանք գործիքների և շարականների, սաղմոսների ընդհանուր անվանումներ են: Վերջին խումբը հեղինակը բերում է համատարած գոյականական կիրառությամբ (թվաքանակով գրեթե վեց տասնյակ են), իսկ «Երեք սրբեան»-ը՝ անգամ հոլովառությամբ՝ «Երեք սրբենին»:

Երաժշտական հասկացությունների բացատրությունների մեջ նույնպես հանդիպում են նորակազմ բառեր. հետաքրքիր է *սատանագիւր* բառը, իմաստը թելադրում է, որ խոսքը վերաբերում է սատանայի կողմից հնարելուն, սակայն անսպասելի է բացատրության մեջ նաև Դավիթ մարգարէի այդ «սատանագիւտ» հնարքը նրա դեմ օգտագործելու հանգամանքի նկարագրությունը: Հատվածից պարզ է դառնում, որ նախ՝ առաջին իսկ երաժշտական գործիքները՝ քնարն ու տավիղը, «սատանագիւտ» են, որ ստեղծվել է մարդկանց «իզացնելու», այսինքն՝ հոգեպես թուլացնելու համար, ապա, որ Դավիթ թագավորը դրանք սպասարկու դարձրեց հոգևոր երգեր կատարելուն. «Վասն է՞ր ծայն և քնար խառն էր Դաւիթի յերգս հոգւոյն» հարցին հեղինակը պատասխանում է. «Նախ՝ զի մարդն հոգի է և մարմին, ծայնի և ձեռք երգէր. Ձերկու մատունս ի մի լծակցեալ յօրհնութիւնն աստուծոյ: Երկորդ՝ զի *սատանայագիւր էր քնար և տաւիղ, իզացուցանել զմարդիկ*. Խառնեաց զնոսա ի բանս հոգւոյն, զի իւր սրովն խոցեսցէ զինքն և հալածեսցէ որպէս ի սաւուղայ» [1, 641]:

Նորակազմ է նաև *կիսափոխ* բառը: Սա գիշերվա ինը ժամերի հսկումներին կատարվող «փոխերին» հաջորդող մի չև հանգստյան վեց

ժամերը կատարվող սաղմոսի մասէ. «Իսկ եկեցէն ունի սաղմոսս Թ փոխ բոլոր. Պահապան Թ ժամուց հանապազորդ գիշերոյն: Եւ վեց *կիսափոխն*՝ յաւելեալ ժամուցն մինչ ի հանգստեանն» [1, 622]: Որևէ բառարան չունի վկայություն:

Նորակազմ բառերի մեջ զգալի թիվ են կազմում մարդուն, նրա խառնվածքին վերաբերող բառերը. *աղուեսաբարոյ, անխելամուտ, բազմակուլ, արծակաքայլ, բարեսուն, բացունչն, բոնամիտ, գիճասէր, թիւրամիտ, թխակն* և այլն:

Նորակազմ բառեր կան նաև Տաթևացու կիրառած մեծաքանակ բժշկագիտական հասկացությունների անվանումների մեջէ հիվանդությունների, բժշկության, բուժման, հոգեվիճակների, մարմնակազմության, կազմախոսության թեմաներով:

Իսկ քահանայագործելու իրավունք չունենալու հանգամանքներին վերաբերող հատվածում նորակազմ բառերի մի ամբողջ խումբ է, որտեղ ըստ էության հիվանդություններ նկարագրող հասկացություններ են. «Նախ՝ կոյրն. իսկ ի մեզ, որ մտօքն իցէ: Երկրորդ՝ բեկեալն ի գործոց բարեաց: Երրորդ՝ լեզւատն, որ է անձայնն. որք ոչ ունին զխոստովանութիւն: Չորրորդ՝ մարմառոտն. որ կաշին պատառեալ և խոց լինի, նշանակէ զխոց մեղաց: Հինգերորդ՝ քոսն. որ յայտնին է: Վեցերորդ՝ երքունոտն. սնքնոտն. անբուժն է: Եօթներորդ՝ *քածաւարին*. *այլամազն* խառնեալ. զանազան բարուց նշանակ: Ութերորդ՝ թաղամասաւորն. որ թաղիացեալ է միսն ի կաշին և չքերթուի. որ անորիշ է ի խառնակ կենաց: Իններորդ՝ ականջատն. որ խուլ է մտօք: Տասներորդ՝ կրճատն. որ է ազատն. անամօթն է: Մետասաներորդ՝ մալեալն, *տրեալն*. պակասն արիութեամբ: Երկոտասաներորդ՝ փօշտանկն. որ հատեալ է աղիքն և ի դուրս թափեալ. նշանակ հոգեկան ցաւոց ի մարմինն երևեալ: Այլ և ի վերայ այսր, հիւանդն և գիժն: Որ մտօքն է մոլի, և մեղօք հիւանդ, չէ ընդունելի» [1, 371]:

Հատվածի քահանայագործության արգելքի ցանկց նրանք, ըստ որի չեն կարող քահանայագործել՝ *այլամազ, սնքնոտ, տրեալ, քածաւարի*, որոնք ևս նորակազմ են՝ համեմատությամբ վերը հիված բառարաններով.

Այլամազ «ուրիշ կամ այլ մազ» իմաստով, ՄՀԲ-ն հղում է Տաթևացուն [հմմտ. 8, 41], այլ բառարաններ չեն վկայում. Տաթևացին բառը բերում է իբրև *քածաւարի* բառի հոմանիշ և երկուսի համար տալիս «գա-

նազան բարուց նշանակ» բացատրությունը, որ նշանակում է «տղամարդուն ոչ հարիր, կնաբար»:

Սնքնուր «որքինով, կեղով հիվանդ»: ՀԱԲ-ում բառը տեղ է գտել բացառապես Տաթևացու բառագործածության հիման վրա:

Տրեալ «ապականված», այն «տուիչ»՝ իգացող իմաստով «Հայերէն գաւառական բառարան»-ում նշվում է Պոլսի բարբառում գործածական լինելը [4, 1039]:

Քածավարի «կնաբար»: ՀԱԲ-ը հղում է Տաթևացուն:

Հետաքրքիր են ներկայումս գործածությունից դուրս եկած կամ, այսպես կոչված, հնացած մի քանի նորակազմ բառեր, որոնք Աճառյանի բառարանում բերվում են իբրև նորագյուտ, դրանք են՝ *գաղտառ*, *գուրգուր*:

Գաղտառ. Աճառյանը բառը կապում է *գաղտ* «թաքուն» իմաստի հետ, ըստ որի՝ նորագիտ բառ՝ «յետևից ծածուկ կծող շուն» իմաստով, և վկայում է «Տաթև. ամ. 250»: Տաթևացին բառը բերում է իբրև «նախանձի» հոմանիշ. «Իսկ նախանձոտն է որպէս *գաղտառ* շունն» [2, 250]:

Գուրգուր. Աճառյանը գրում է՝ «նորագիտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Տաթև. ամ. 421», և համարում բնածայն բառ, ինչպես որ մեկնում է Տաթևացին. «Եկեալ հաւ մի, նստաւ ի վերայ ծառոյն, որ զոմանք *գուրգուր* և ոմանք դռուն կոչեն և ձայնեաց՝ *գո՛ւրգո՛ւր*»: Ավելացնենք, որ հատվածը Գրիգոր Լուսավորչի դայակի կողմից նրան փախցնելն է նկարագրում, որպես և Տաթևացին փորձում է ստուգաբանել՝ *Գրիգոր* անունը [2, 421] անունը:

Նկատենք, որ նման բառերը արդյունք են հայերենին բնորոշ մտածողության, ուստի հայտնի են իբրև բառապաշարի համագործածական բառեր, օրինակ՝ *ամբողջութիւն*, *անմորութ*, *անսպոյգ*, *արհեստական*, *արհեստաւոր*, *բաժանորդ*, *բացարձակապես*, *բացորոշ*, *բռնամիտ*, *երկխօսութիւն*, *մշտապէս*, *մսակոյտ*, *հակասական*, *հասանելի*, *յիշատակութիւն*, *յաւիտենականութիւն*, *նախապատրաստութիւն*, *ներգոյական*, *նշանադրութիւն*, *ուղղածն*, *պատահական*, *սևամորթ*, *սրտային*, *սրտոտ*, *վատահամբաւ*, *տեսակաւորել*, *փոշիանալ*, *փոքրիշատէ*, *փութանցիկ* և այլն:

Գրաբարի գործածական բառարմատները խիստ կենսունակ են նաև Տաթևացու նորակազմությունների պարագայում. օրինակ՝ *բազմբաղադրիչով* գրաբարյան բառարանները տալիս են ավելի քան երեք հարյուրի չափով. Տաթևացին նոր բառեր կազմելիս հաճախ է դիմել այդ

բաղադրիչին՝ հավելումն գրաբարյան բառերի. *բազմաբաշխութիւն, բազմեղանակ, բազմակույ, բազմամայր, բազմաքրիստոս* ձևերը:

Նույնն է նաև *ան-* ժխտական նախածանցի դեպքում. *անաջատրութիւն, անբախելի, անբովանդակապէս, աներկչոյր, անթառամելի, անխելամուտ, անհատողութիւն, անմաշելի, անմեղր, անմկրտեալ, անուսումնապէս, անստոյգ, անվարձատրելի* և այլն:

Նոր բառեր կազմվել ըստ լեզվի ավանդական բառակազմական եղանակների՝ բառաբարդման և ածանցման՝ իրենց գրեթե բոլոր ենթակաղապարներով:

Շատ ավելի քիչ են բառակազմական առումով վիճելի նորակազմությունները, որոնցից մեկին փորձենք անդրադառնալ:

Բառակազմական կաղապարի առաջին հայացքից ոչ կանոնական գործածությունը իմաստային դաշտում հարցեր է առաջացնում, օրինակ, *ենթակայոջ* բառի դեպքում, որտեղ կարիք է առաջանում պատմական կամ տարածամանակյա վերլուծություն կատարել: Բառը Տաթևացին օգտագործում է «ենթակայոյթյան տակ գտնվող» իմաստով՝ ածանց + ածանց + հոդակապ + հիմք + վերջավորություն կաղապարով. «Այլ ի մարմինն նիթօրէն և սկզբնաբար. Իսկ ի հոգին տեսակաբար և իբր *ենթակայոջ*» [1, 567]: «Պարունակելի, բաղկացական, ենթակայոյթյան տակ, ենթակայոյթյան ներսում գտնվող» իմաստով այս բառը բերում է միայն Երեմիա Մեղրեցին *ենթակայում*¹ ձևով, և կասկած չկա, որ այստեղ գործ ունենք «*նի + ենթակայութիւն*» կառուցի հետ, այսինքն՝ ենթակայոյթյան տակ, ենթակայոյթյան մեջ, ենթակայոյթյան ներսում գտնվող, հատկապէս, որ ենթակայ նշանակում է նաև «տակը եղած». Այլ հարց է, որ Երեմիա Մեղրեցին *ենթակայում*¹ ձևը համարում է պարոտական հոլովածն՝ հաշվի չառնելով բերվող օրինակի ներգոյական հոլովածնը:

Եզակի այս գործածությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ Տաթևացու օրերում դեռ շարունակել է կենսական մնալ *նի* հնագույն նախածանցը՝ «ներս, տակ, ներսում» նշանակությամբ: Նկատենք նաև, որ նախածանցը մեր օրերում գործածական է հայերենի մի շարք բարբառներում¹:

Մեկ այլ դեպքում, Տաթևացին շինականի կողմից նշվող երեխայի

¹ Հունաբան կազմություն է , որ անցել է նաև լատինաբան հայերենին և տեղ գտել այլ կարգի գրական հուշարձաններում (Ծանոթ. խմբ.):

ծննդյան օրը կոչում է *տղարուք*։ Հ. Աճառյանը վկայակոչում է Տաթևացուն. «*տղարուք* (չունի ԱԲ) որդու ծննդեան տօնը» Տաթև. հարց. 321» [5; 412], սակայն չի տալիս բառի բացատրությունը. հատվածը հետևյալն է. «Նա՛խ՝ որպէս հասարակ շինական քի ծննդեան զաւակաց զմին օրն պատուեն տղարուք կոչելով» [1; 321]: Մեր կարծիքով, բառը նշանակում է «երեխաներ»: Նկատենք, նաև, որ հատվածը պարունակում է տեղեկատվություն ազգագրական թերևս մոռացված մի արարողակարգի մասին, երբ տարվա մեջ մեկ անգամ նշվել է տան բոլոր զավակների օրը: Այն, որ դա կատարվել է շուքով, հուշում է «պատուել» բառը:

Այսպիսով, Գրիգոր Տաթևացու կերտած նորակազմ բառերը հիմնականում ծիսակրոնական, երաժշտական, մարդաբանական, բժշկագիտական ոլորտից են, որոնցից ժամանակակից հայերենում գործածվում են *անստորոգ*, *արհեստական*, *երկխօսութիւն*, *բոնամիտ*, *թխակն*, *պատահական*, *սևամորթ*, *սրտային*, *սրտոտ*, *ուղղածն*, *վատահամբաւ*, *քահանայօրհնէք* և այլ բառեր: Հեղինակային եզակի գործածությամբ են մնացել *աղուեսաբարոյ*, *սատանայագիւտ* և մի շարք այլ նորակազմ բառեր, որոնք բավականին հաջողված են հայերենի մտածողության առումով, սակայն հետագա գործածություն չեն ստացել:

Գրականության ցանկ

1. Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց. Կ.Պոլիս, 1729:
2. Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր, Կ.Պոլիս, 1741:
3. Աճառեան Հ., Հայերէն նոր բառեր հին մատենագրութեան մէջ, հ.Ա, Բ, Վենետիկ, 1913:
4. Աճառեան Հ., Հայերէն գաւառական բառարան, Թիֆլիս, 1913:
5. Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հհ. Ա-Դ, Ե., 1971-1979:
6. Աւետիքեան Գ., Սիրմէլեան Խ., Աւգերեան Մ., Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հհ. 1-2, Վենետիկ, 1836-1837:
7. Հովհաննիսյան Լ., Գրաբարի բառարան. նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր, հ. Ե., 2010:
8. Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ., Միջին հայերենի բառարան, Ե., 2009:

9. Ղազարյան Ռ., Գրաբարի հոմանիշների բառարան, Ե.2006:
10. Մալխասեանց Ա., Հայերէն բացատրական բառարան, հ. 1-4, Ե., 1944-45:
11. Մեղրեցի Ե., Բառգիրք հայոց, Ե., 1975:
12. Մ. Արք. Օրմանյան, Ծիսական բառարան, Ե., 1992:
13. Գրիգորյան Ա., Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ի նորակազմ բառերի քննություն, Ե.2014:

**ՈԱԶՄԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ.
ՊԱՏՄԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ
(ՓՈԽԱՌՅԱԼ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ)
ԱՆՆԱ ԽԻՉԱՆՑՅԱՆ**

Երևանի պետական համալսարան,
Ասիստենտ, բանասիրական գիտությունների թեկնածու
anna.khizantsyan@ysu.am

DOI: 10.57236/1829-0183-2023.2(29)-104

Համառոտագիր

Տեխնիկական աշխարհի շարունակական զարգացումը, որը, իհարկե, գլոբալիզացման հետևանք է, արտացոլվում է լեզվում, ինչպես հայելու մեջ. արձանագրվում են գյուտերի անվանումները և դրանց առնչվող տարբեր գործընթացները: Բառերի մի մասն ամրագրվում է լեզվում՝ որպես եզրույթ դառնալով տվյալ լեզվի տերմինաբանական համակարգի մաս (երբեմն փոխառվում են այլ տերմինաբանական համակարգից), որոշ բառեր էլ դուրս են գալիս գործածությունից իրենց նշած իրողությունների հետ:

Եզրույթի պատմության ուսումնասիրությունն արդիական է, քանի որ շատ քիչ աշխատություններ կան՝ նվիրված եզրույթի (ներառյալ ռուսաց լեզվի եզրույթները) ստուգաբանական վերլուծությանը:

Սույն հոդվածում ուսումնասիրվում են ավիացիայի՝ որպես տեխնոլոգիայի ամենաերիտասարդ ոլորտներից մեկի որոշ տերմիններ, մասնավորապես՝ ռուսերենի փոխառյալ ավիացիոն եզրույթները: Ուսումնասիրությունը կատարվում է լեզվի պատմության դիտանկյունից, տրվում է եզրույթների պատմական մեկնաբանությունը, որը թույլ է տալիս ցույց տալ, թե ինչպես է ձևավորվել նշված տերմինաբանական համակարգը: Ուսումնասիրության հիմքում «Օդանավի արտաքին կառուցվածքը» տերմինաբանական խումբն է:

Ուսումնասիրվել են տերմինաբանական համակարգեր, որոնցից փոխառվել են ավիացիոն տերմիններ: Ստուգաբանական վերլուծության միջոցով պարզել ենք փոխառության սկզբնաղբյուրը և միջանկյալ լեզուն:

Տվյալ աշխատանքը մեկն է գիտական հոդվածներից՝ նվիրված ռազմական տերմինի պատմության ուսումնասիրությանը:

Բանալի բառեր և բառակապակցություններ՝ պատմական քննություն, եզրույթ, ավիացիոն եզրույթ, ստուգաբանություն, տեխնիկական եզրույթաբանություն, փոխառություններ:

**MILITARY AVIATION TERMINOLOGY: HISTORICAL
COMMENTARY
(BASED ON BORROWED TERMS)
ANNA KHIZANTSYAN
Yerevan State University,
Assistant, PhD
anna.khizantsyan@ysu.am**

Abstract

With the continuous development of the technical world, which is, of course, a consequence of globalization, the names of inventions and various processes associated with them, which are a consequence of the exploitation of those same inventions, are reflected and recorded in language, as in a mirror. Some of these terms enter as a term, becoming part of the terminological system of a given language (sometimes moving from another terminological system), others leave the language along with the realities that they denoted.

The study of the history of the term is one of the pressing issues of linguistics, because there are quite a few works devoted to the etymological analysis of the term (including terms of the Russian language).

This article examines some terms of aviation, as one of the youngest areas of technology. In particular, the subject of this article is aviation terms borrowed from the Russian language. The study of terms is carried out in the aspect of the history of the language, their historical commentary is provided, which allows us to show how the term system in question was formed. The study was conducted on the material of the terminological group “External layout of the aircraft”.

During the study, we examined terminological systems from which the terms were included in the aviation terminological system; having carried out an etymological analysis, we determined the source language and the intermediary language.

The work is an article from a series of scientific articles devoted to the study of the history of the military term.

Keywords and phrases: historical commentary, term, aviation term, etymology, technical terminology, borrowings.

**ВОЕННАЯ АВИАЦИОННАЯ ТЕРМИНОЛОГИЯ: ИСТОРИЧЕСКИЙ
КОММЕНТАРИЙ
(НА МАТЕРИАЛЕ ЗАИМСТВОВАННЫХ ТЕРМИНОВ)**

АННА ХИЗАНЦЯН

Ереванский государственный университет,
Ассистент, кандидат филологических наук
anna.khizantsyan@ysu.am

Аннотация

При непрерывном развитии технического мира, являющегося, конечно же, следствием глобализации, в языке, как в зеркале, отражаются и фиксируются наименования изобретений и связанных с ними различных процессов, являющихся следствием эксплуатации тех самых изобретений. Часть из этих терминов входит в качестве термина, становясь частью терминологической системы данной области (иногда переходя из другой терминосистемы), другие – выходят из языка вместе с реалией, которые они обозначали. Исследование истории термина является одним из актуальных вопросов языкознания, т.к. работ, посвященных этимологическому анализу термина (в том числе и терминов русского языка), довольно мало.

В данной статье исследуются некоторые термины авиации, как одного из самых молодых направлений техники. В частности, предметом данной статьи являются заимствованные русским языком авиационные термины. Изучение терминов проводится в аспекте истории языка, приводится их исторический комментарий, позволяющий показать, как формировалась рассматриваемая терминосистема. Исследование проводилось на материале терминологической группы «Внешняя компоновка летательного аппарата».

В ходе исследования мы рассмотрели терминосистемы, из которых термины вошли в авиационную терминологическую систему; проведя этимологический анализ, определили язык-источник и язык-посредник. Работа представляет собой статью из цикла научных статей, посвященных исследованию истории военного термина.

Ключевые слова и словосочетания: исторический комментарий, термин, авиационный термин, этимология, техническая терминология, заимствования.

Глобализация и связанное с ней непрерывное развитие науки и техники находят отражение в языке. Это касается, конечно же, и авиации – одного из наиболее молодых направлений. При развитии авиации, разработке и эксплуатации новых летательных аппаратов наименования любого изобретения и связанных с ним процессов входят в язык в качестве термина и становятся частью терминологической системы данного языка.

Военно-авиационная терминология представляет собой совокупность терминов, которые обозначают понятия или реалии, связанные с эксплуатацией летательного аппарата, с его конструкцией и компоновкой. В авиацион-

ной терминологии широко представлена интернациональная лексика: однословные наименования, аббревиатуры, номинативные словосочетания, терминологические элементы.

Предметом исследования настоящей работы являются термины, входящие в состав военной авиационной терминологии. **Объектом** исследования мы выбрали заимствованные элементы терминологической группы «Внешняя компоновка летательного аппарата» (далее ТГ). В частности, нами были рассмотрены однословные термины указанной ТГ, а именно термины *garrot, киль, консоль, люк, нервюра, стабилизатор, фюзеляж (лонжероны, стрингеры), шасси, шпангоуты, элерон (элефон, фраперон)*.

Цель исследования – проанализировать заимствованные лексемы, используемые русским языком в качестве авиационных терминов, рассмотреть их исторический путь, определить язык-источник и язык-посредник, через которые они были заимствованы.

Результаты исследования можно будет применять во время практических занятий при обучении профессиональной лексике курсантов военных авиационных специальностей, при разработке комплекса обучающих упражнений и заданий по русскому языку как языку специальности.

Актуальность. Исследование истории термина является одним из актуальных вопросов языкознания. Интерес ученых к изучению термина (способов и путей образования термина, его взаимодействие с общеупотребительной лексикой, происхождение терминов) достаточно высок. Однако работ, посвященных этимологическому анализу термина (в том числе и терминов русского языка), довольно мало.

В трудах ряда ученых пути и способы терминообразования исследуются лишь в синхронном плане, на современном уровне, и не обращается внимания на историю термина, на пути его проникновения в язык. Однако анализ термина в диахроническом срезе представляет особый интерес как с практической, так и с теоретической точки зрения, и позволит определить «закономерности в жизни термина».¹

Соглашаясь со мнением многих ученых (В.В. Виноградова, Б.Л. Богородского, И.В. Арнольд, Р.А. Будагова и других), отметим, что изучение истории термина, является необходимым аспектом языкознания, т.к. имеет непосредственное отношение к вопросам упорядочения терминов, определению взаимосвязи истории термина и языка, а также к изучению вопроса, что термины обозначали в разные периоды своей «жизни».

¹ Цит. по **Ткачева Л.Б.** Происхождение и образование авиационных терминов в английском языке // Автореферат диссертации на соиск. учен. степени канд. филол. наук. – Омск: 1972. [6]

Таким образом, исследование истории термина позволит составить полную картину фонетической, морфологической и семантической структуры термина: «нет термина без науки, как нет науки без термина»².

Переходя непосредственно к авиационной терминологии, необходимо отметить, что авиационные термины являются сравнительно «молодыми». Несмотря на то, что некоторые термины авиации были известны еще 200 лет назад, формирование авиационной терминологии относится к XX в., когда в мире началась стремительно развиваться авиация.

Далее детально рассмотрим термины терминологической группы «Внешняя компоновка летательного аппарата»: *гаргрот, киль, консоль, лонжерон, люк, нервюра, стабилизатор, стрингеры, фюзеляж, шасси, шпангоут, элерон*.

Шасси – «часть летательного аппарата, самолета; система опор, служащая для передвижения его по аэродрому, для взлёта и посадки»³. В толковых словарях современного русского языка (СРЯ) лексема встречается с пометкой «технический» – «устройство или машина, предназначенное для размещения на нем какой-либо полезной нагрузки»⁴.

Термин представляет собой заимствование из французского языка, происходит от *chassis*⁵. Проследив этимологию этого термина, можем отметить, что он произошел от лат. *capsa* ‘капсула’ от *capere* ‘брать, получать’, далее от праиндоевропейского **kap* ‘хватать’. Сохранив свою основную семантику, лексема вошла во французский язык в XII в. в значении ‘вместилище, капсула’ и вплоть до XVI в. использовалась только для обозначения сундука, в котором хранилось тело святого. Уже в XVIII в. в столярных терминах французского языка под *chassis* понимали любую раму, внутренняя часть которой заполнена панелями.

Элерон – ‘руль крена, поворота’. Термин происходит от французского *aileron* ‘крылышко, маленькое крыло’. Впервые лексема была зафиксирована в 1864 г. в труде Мэтью Пирса Болтона «О воздушном передвижении» («*Onaërial locomotion*»). Уже в 1877 г. слово появилось в франко-английском словаре Cassell в качестве термина для обозначения ‘самолета, руля крена, поворота’.

В дальнейшем, взяв за основу термин *элерон*, в английском языке были образованы два новых авиационных термина: *элевон* и *флаперон*. *Элевон*

² Цит. по Ткачева Л.Б. Происхождение и образование авиационных терминов в английском языке // Автореферат диссертации на соиск. учен. степени канд. филол. наук. – Омск: 1972. [6]

³ Толкование авиационных терминов в данной статье приводится по словарю военно-авиационных терминов Березина П.Ф. [5]

⁴ Толкование слов в современном русском языке в данной статье приводится по Толковому онлайн-словарю Евгеньевой А.П., Толковому онлайн-словарю Ефремовой Т.Ф. [1], [2]

⁵ При проведении этимологического анализа изучаемых терминов были использованы материалы интернет ресурсов, в частности, <https://www.etymonline.com>. [3]

происходит от английского *elevon*, который представляет собой гибридный термин, образованный в результате слияния терминов *elevator* (от лат. *elevator* ‘то, что поднимает вверх’) и *aileron*. По той же словообразовательной модели образован термин *флаперон* от английского *flaperon* – *flap* ‘закрылок’ и *aileron*.

Фюзеляж – ‘одна из главных частей самолета’. Данная часть летательного аппарата получила свое название из-за формы. Термин *фюзеляж* заимствован предположительно в начале XX в. из французского языка – *fuselageom fuselé* ‘веретенообразный’, первоисточником данного слова является латинское *fusus* ‘веретено’.

Меронимами данного термина являются термины *лонжерон* и *стрингеры*.

Лонжерон – ‘продольный элемент набора крыла, оперения, фюзеляжа’. В толковых словарях СРЯ термин имеет помету ‘технический’ и значение – ‘продольный несущий элемент конструкции автомобиля, трактора, самолёта и т.п.’.

История данного термина довольно интересна. Этимологически термин восходит к французскому *longeron* ‘продольная балка’, далее от *longer* – *long* – от лат. *longus* ‘удлиняющий’. В английский язык термин попал в 1735 г. как термин фехтования – *allonger* ‘укол мечом’, в переводе с французского ‘удлиняющий’. В русский язык вошел в начале XX в. в связи с развитием авиации.

Стрингеры – ‘элемент продольного набора, связывающие между собой шпангоуты (или нервюры)’. Происходит от английского *stringer*, далее от *string* ‘привязывать, скреплять’. Термин перешел из морской терминосистемы. В ходе анализа истории термина, была найдена информация о том, что в английском языке XV в. термин имел значение ‘человек, натягивающий тетиву для лука’, а в 1774 г. было зафиксировано новое его значение – ‘тот, кто связывает слова’. Дальнейшую историю лексемы в рамках данной статьи мы не рассматриваем, т.к. она утратила связь с авиационной терминологией.

Шпангоут – ‘элемент поперечного набора конструкции летательного аппарата’. Термин изначально использовался в морской терминологии в значении ‘поперечное ребро жёсткости бортовой обшивки судна (между днищем и палубой)’. Термин был заимствован из нидерландского языка от *spanthout* – *spant* ‘балка’ и *hout* ‘древесина’.

Нервюра – ‘элемент поперечного набора крыла (или оперения)’. Термин происходит от фр. *nervure* ‘жилка, балка’, от лат. *nervus* ‘тетива, крепость, мощь’. Изначально лексема использовалась как архитектурный термин со значением ‘выступающее ребро готического каркасного крестового свода’.

Стабилизатор – ‘неподвижная часть горизонтального оперения летательного аппарата’. Термин был заимствован из французского языка, произо-

шел от *stabilizer*. Во французский язык он попал, в свою очередь, из латинского (от *stabilis* ‘устойчивый, постоянный’). Возможно, в русский язык термин попал из английского (точные сведения отсутствуют). В английском языке в качестве авиационного термина лексема зафиксирована в 1909 г. Ранее, в 1861 г., лексема использовалась как термин судостроения.

Ранее, в XIV в., лексема использовалась как термин психологии в значении ‘твердость, решимость, душевное равновесие лица, персоны’. В свою очередь этот психологический термин восходит к лат. *stabilis* ‘непоколебимый, твердый’. А уже в начале XV в. фиксируется как термин физики – ‘способность оставаться в вертикальном положении’.

В современном русском языке термин является полисемичным и используется в следующих значениях: техническое устройство, обеспечивающее устойчивость; вещество, задерживающего процесс изменения свойств другого вещества; а также впереносном значении как человек или абстрактная сущность, которая делает процесс устойчивым во времени, устраняет нежелательные отклонения: *«Кстати, остается непонятным, почему к скафандру не приделали каких-либо стабилизаторов на ногах и т.п. Насколько я помню, ничего этого не было»* (belnetmon. Записи в Живом Журнале // 2013); *«Здесь нужен был человек такого же уровня, но не стабилизатор, каким был Канкрин, а реформатор, который бы не приспособливался к системе, а ломал ее»* (Андрей Левандовский. Безупречный министр // «Знание-сила», 2013) [4].

Люк – ‘отверстие в обшивке самолета, закрываемое крышкой или створками’. Термин вошел в русский язык в форме *люйк*, восходит к нидерл. *luik* ‘ставень; люк’, и встречается в «Уставе морском» 1720 г.

Киль – ‘неподвижная часть вертикального оперения самолета, предназначенная для обеспечения устойчивости’. Точный язык-источник неизвестен. Термин был заимствован русским языком (предположительно в 1703 г.) как морской термин либо из нидерландского, либо из немецкого языка от *kiel*.

Гаргрот – ‘съёмный продольный обтекатель на корпусе некоторых самолетов, закрывающий проводку управления’. Используется для размещения коммуникаций и прочих полезных вещей, которые не удалось разместить внутри фюзеляжа. Предположительно, термин происходит от фр. *garde-grotte* ‘защита ниши’.

Консоль – ‘отъёмная часть крыла’. О происхождении термина известно мало. Предположительно, термин был заимствован из английского языка, в который он в свою очередь вошел из французского языка от *console*, далее от *sole*, восходящий к лат. *solea* ‘подошва, туфля’. По другой версии лексема восходит к лат. *consolidare* ‘сделать твердым’.

В современном русском языке термин является многозначным и относится к различным сферам науки: является и техническим термином, и тер-

мином, обозначающим элементы мебели, и авиационным, и компьютерным термином (всего отмечается около 15 значений лексемы).

Подводя итог проведенного нами исследования терминологической группы «Внешняя компоновка летательного аппарата», мы пришли к следующим выводам:

1. рассмотренные нами термины вошли в авиационную терминологию из различных терминологических систем (техническая, морская, архитектурная, психологическая);

2. языком-источником многих терминов является латинский язык;

3. языком-источником были отмечены также французский язык (*эле-рон, гаргерот*), английский (*элефон, фраперон, стрингеры*), нидерландский (*шпангоут, люк, киль* (возможно, непосредственно из немецкого));

4. языком-посредником при образовании большинства терминов служит французский язык (*шасси, фюзеляж, лонжерон, нервюра, консоль, стабилизатор*).

Исследование истории военного термина и его исторического комментирования будет продолжаться. Данная статья является одной из цикла наших статей, посвященных историческому комментарию военного термина [7]. В рамках исследования военных терминов нам предстоит определить, как были сформированы термины, какие способы образования терминов были продуктивными, какие термины являются заимствованными, а какие исконно русскими и содержащие славянские словообразовательные элементы. В перспективе мы проанализируем военные термины по материалам словаря русского языка XVIII в., а также использование метафоры для наименования военной техники.

Список литературы

1. <https://lexicography.online/explanatory/efremova/> – Толковый онлайн-словарь **Ефремовой Т.Ф.**

2. <https://lexicography.online/explanatory/mas/> – Толковый онлайн-словарь **Евгеньевой А.П.**

3. <https://www.etymonline.com>.

4. Национальный корпус русского языка – www.ruscorpora.ru.

5. **Березин П.Ф.** Военно-авиационный словарь. – М.: Воениздат. – 1966. – 472 с.

6. **Ткачева Л.Б.** Происхождение и образование авиационных терминов в английском языке // Автореферат диссертации на соиск. учен. степени канд. филол. наук. – Омск: 1972.

7. **Хизанцян А.** История военного термина: воины в Древней Руси (на «Материалах для словаря древнерусского языка» И.И. Срезневского) //

Традиции И.И. Срезневского в русской лексикологии и лексикографии
XXI века. К 210-летию со дня рождения академика И.И. Срезневского:
сборник статей V Международной научно-практической конференции, 26-28
сентября 2022 г./ отв. ред. Е.П. Осирова; Ряз. гос. ун-т имени С.А. Есенина. –
Рязань, 2022. – с. 121-126.

**ՀԱՅԵՐԵՆԻ ԴԵՐԻ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՐԵՎՈՐ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ**

DOI: 10.57236/1829-0183-2023.2(29)-113

Վերջերս լույս է տեսել բազմալեզու միջավայրում հայերենի դերի և ուսուցման վերաբերյալ կարևոր աշխատություն¹:

Սույն ուսումնասիրության շրջանակներում հեղինակների համատեղ աշխատանքի շրջանակում առաջին անգամ մանրամասն ուսումնասիրվել և գնահատական է տրվել բազմալեզու միջավայրում հայերենի դերին՝ «Լեհաստանի խոշոր քաղաքների և Փարիզի հայկական համայնքների օրինակով», ընդ որում ներկայացվել են հայերենի լեզվավիճակը, նրա զարգացման հիմնական միտումները, ինչպես նաև անդրադարձ է կատարվել հայերենի՝ որպես երկրորդ կամ օտար լեզու դասավանդելու խնդիրներին:

Դիտարկվել է հայոց լեզվի և հասարակության փոխհարաբերությունը հիշատակված վայրերում, վերհանվել է հասարակական, քաղաքական, տնտեսական և մշակութային պայմանների ազդեցությունը հայերենի լեզվավիճակի վրա: Նկատի են առնվել նաև բազմալեզվության և երկլեզվության պայմաններն և առանձնահատկությունները, քննվել բազմալեզու միջավայրում լեզուների ուսուցմանը վերաբերող խնդիրները, լեզվական հանրային հանրալեզվաբանական քննության միջոցով ներկայացվել լեզվակիրների հասարակական առանձնահատկությունները, առաջադրվել են հայերենը որպես երկրորդ կամ օտար լեզու դասավանդելու նոր սկզբունքներ ու չափանիշներ, ըստ միջազգային ընդունված ստանդարտի (A, B, C)՝ մշակվել հայերենի իմացության մակարդակների վերջնարդյունքներ:

Գիրքը հեղինակների կատարած համատեղ աշխատանքի ամփոփումն է, ինչպես նաև գիտական ծրագրի իրականացման շրջանակում

¹Մերի Սարգսյան, Վազգեն Համբարձումյան, Սոնա Միքայելյան, Սեդա Բաղրամյան, Հայերենի դերը և ուսուցման խնդիրները բազմալեզու միջավայրում (Լեհաստանի խոշոր քաղաքների և Փարիզի հայկական համայնքների օրինակով)», Ե. «Արմավ» հրատ., 2023, 160 էջ:

գործուղումների տվյալների ընդգրկումը: Հեղինակները ձեռք բերված նյութը ամենից առաջ ներկայացնում են համապատասխան վերլուծությանը և շարադրանքով, որոնք լրացվում են մանրամասն աղյուսակներով և հարցաթերթիկներով:

Աշխատանքը բաղկացած է հետևյալ չորս գլուխներից՝ «Լեզվի ուսուցման առանձնահատկությունները բազմալեզու միջավայրում (էջ 13-25)» «Հասարակական, քաղաքական, տնտեսական և մշակութային պայմանների ազդեցությունը լեզվավիճակի վրա» (էջ 26-74), «Բազմալեզու միջավայրում լեզվավիճակի քննություն» (էջ 75-108) և «Բազմալեզու միջավայրում հայերեն ուսուցանելու առանձնահատկությունները» (էջ 109):

Առաջին գլխում ընդհանուր գծերով ներկայացվել են բազմալեզվության առանցքային խնդիրները և բազմալեզու միջավայրում օտար լեզուների ուսուցման հայեցակարգային հարցերը: Վերջիններս ունեն ինչպես տեսական նշանակություն, այնպես էլ կիրառական կարևորություն: Այս առումով հեղինակները հանդես են բերել գիտության տվյալ բնագավառի պահանջները բավարարող մոտեցումներ, առաջնորդվել են որոշակի սկզբունքներով:

Երկրորդ գլխում, համապատասխան գրավոր աղբյուրների և ձեռք բերված տեղեկությունների հիման վրա, առանձին-առանձին նկարագրվում են Լեհաստանի խոշոր քաղաքների Փարիզի հայկական համայնքների քաղաքական և տնտեսական վիճակը, գիտամշակութային և հոգևոր-եկեղեցական կյանքը, ինչպես նաև նշված վայրերում հայկական հին և նոր համայնքների հարաբերությունները, հայկական հասարակական կազմակերպությունների գործունեությունը և հայերենի ուսուցման խնդիրները: Ըստ այսմ՝ աշխատությունն ունի հանրալեզվաբանական բնույթ:

Այնուհետև, նույն գլխում ուսումնասիրությունը համապարփակ տեղեկություն է հաղորդում նշված վայրերում հայերի բնակություն հաստատելու տարբեր փուլերի, նրանց մոտավոր թվի, զբաղվածության, բարբառային պատկանելության, հայկական կրթօջախների, կրոնական հետաքրքրությունների և առհասարակ հայերի ու հայության հետ կապված ամեն մի իրողության վերաբերյալ:

Երրորդ գլխում ներկայացվել են հարցումներին մասնակցողների՝ հայերենի իմացության մակարդակի, տարիքային և սեռային պատկանելության առանձնահատկությունների տվյալներ, այլև տեղեկություններ

այն մասին, թե հարցվողներից քանի՞ տոկոսի մայրենի լեզուն է հայերենը, ո՞րն է հայկական ընտանիքներում գործածվող հիմնական լեզուն, ինչպես նաև՝ հեռուստահաղորդումների, ընթերցվող մամուլի և սոցկայքերի լեզուն:

Չորրորդ գլխում անդրադարձ է կատարվել բազմալեզու միջավայրում հայերեն ուսուցանելու առանձնահատկություններին: Ըստ միջազգային չափանիշների՝ նախ առանձնացվել են հայերենի իմացության մակարդակները (A1, A2, B1, B2, C1, C2) և նշվել յուրաքանչյուր մակարդակի վերջնարդյունքները: Այնուհետև դիտարկվել են հայերենի ուսուցման առանձնահատկությունները միջմշակութային հաղորդակցության համատեքստում, կարևորվել հաղորդակցական կարողությունների զարգացման դերը հայերենի ուսուցման մեջ:

Համառոտ գրախոսվող չորս գլուխների մեջ ամփոփված մեր դիտարկումներից հետո նկատենք, որ բերվում են բերվում են անգլերեն և ռուսերեն լեզուներով ամփոփումներ (էջ 130-134 և 1351-39), որոնք ներկայացնում են աշխատանքի հիմնական բովանդակությունը, որոնք նման մի աշխատության (բազմալեզվության հարցերի վերաբերող աշխատության) դեպքում ավելի քան անհրաժեշտ են:

Գիրքն ունի հավելվածներ՝ նախապես կազմված հարցաթերթիկների և հարցազրույցի ձևանմուշների միջոցով համապատասխան խընդրի լուծման նպատակով վիճակագրական ուսումնասիրություն կատարելու համար: Բերվում են նաև տվյալների վիճակագրական ցանկեր և կազմվում են դիագրամներ, աղյուսակներ, որոնք ավելի պարզ են դարձնում քննությունը:

Ունի օգտագործված գրականության ցանկ, որը ներառում է հայերեն, ռուսերեն և օտար լեզուներով աշխատություններ՝ տպագիր և էլեկտրոնային տեսքով: Գրքում դրված են տեսարժան վայրերի գունավոր նկարներ, նույնպիսի գծանկարներ, որը նաև հրատարակչական հոգածության վկայություն է:

Աշխատությունն առաջին հերթին կարող է օգտակար լինել մեր այն հայրենակիցներին, որոնք հայապահպանության և հայերենապահպանության նպատակներով կարևորում են հայերենի դերը և ուսուցումը օտարախոս միջավայրում, ինչպես նաև՝ հայերենի ուսուցմամբ և դասավանդումով հետաքրքրված օտարերկրացիներին: Հետազոտության արդյունքները կարելի է կիրառել թե՛ Հայաստանի օտարալեզու կրթական

հաստատություններում և թե՛ արտերկրի բազմալեզու միջավայրում և հայկական համայնքներում:

Հայերենը որպես երկրորդ կամ օտար լեզու դասավանդելու խընդիրների, միջոցների և եղանակների վերհանումը, անշուշտ, կարող է նպաստել բազմալեզու միջավայրում հայերենի ուսուցումը լավագույնս կազմակերպելուն, այդպիսով և լեզվի, մշակույթի և ազգային արժեքների պահպանմանը, հայրենիք-սփյուռք կապի ամրապնդմանը և մայրենի լեզվի տարածմանը:

Ինչպես և կարելի է ենթադրել, սույն ուսումնասիրությունը հետապնդում է հեռահար նպատակ՝ այն շարունակական դարձնելու և տարածելու հայկական այլ գաղթօջախների վրա ևս: Այսպիսի մանրակրկիտ հետազոտությունները, անշուշտ, մեզ համար խիստ արդիական են և ի նպաստ հայկական համայնքներում հայոց լեզվի ուսուցմանն ու ամրապնդմանը, այդպիսով և՛ հայապահպանությանը:

Բանասիր. գիտ. թեկնածու, դոց. Վ. Մ. Խաչատրյան

**ԳՐՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ. КНИЖНОЕ ОБОЗ
РЕНИЕ.
BOOK REVIEWS**

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՁԵՆՔԲԵՐՈՒՄ

Ժողովրդագիտությունը ամեն մի ժողովրդի, ազգի մասին գիտություն է, որ նաև հասարակական գիտությունների մի ուրույն բնագավառ է՝ իր մոտեցումներով և սկզբունքների կիրառությամբ: Հայաստանի պատմությունը մարդկության կացության ամենահետաքրքիր երևույթներից է ոչ միայն իր անհիշելի ժամանակների մեջ և իր բնօրրանում, այլև իր մշակույթով ու հոգևոր արժեքներով, մի արարող ժողովուրդ, որ հազարամյակներ ի վեր ստեղծում է, ստեղծագործում, միշտ հոգևոր ու յուրօրինակ:

Եվ հիմա էլ դժվարին, այս մաքառումի մեջ ի վիճակ է ի տես հանել իր մտքի գանձերն ու հոգու գոհարները, դրանց մասին երբեմնի լրջմիտ և տեղին ասվածները:

Հայտնի է, որ մեր հոգևոր մշակույթի պատմությանը նվիրվել են տարբեր բնույթի ու ընդգրկման աշխատանքներ, ընդ որում թե՛ հայ և թե՛ այլազգի գիտնականների, բանահավաքների, հրատարակիչների ձեռքով: Ավելին, այդ աշխատանքները վերաբերում են ոչ միայն մեր ժողովրդի ընդհանուր պատմությանն ու մշակույթին, այլև նրա տարբեր շրջանների հոգևոր, ազգագրական ու բանահյուսական իրողությունների հավաքմանն ու ու քննությանը: Հրապարակի վրա են հայ ազգագրության, հայկական հեքիաթների և բանահյուսական նյութերի բազմահատորյակներ, որոնք առանձին-առանձին արժեքներ են: Հայոց դյուցազնական վեպի պատումների համահավաք և մասերով տպագրությունը հայ գիտնականի սեղանի գրքեր են:

Հրապարակի վրա է տքնաջան և ազնիվ աշխատանքի սովոր գիտնական Ա. Յու. Սարգսյանի նախաձեռնությամբ և անմիջական մաս-

նակցությամբ երեք նոր գիրք (հատորներ՝ 10, 11 և 12), որ ընդգրկում են հայոց արցախական աշխարհի առկեցուն բանահյուսությունը¹:

Բազմահատորակի հիշյալ հատորները (նաև հետագա՝ հ. 13), ինչպես նշվում է հ. 10-ի «Երկու խոսք»-ում, «նվիրվում է մայր բուհի (իմա՝ Արցախի համալսարանի) հիմնադրման 50-ամյակին, ընդգրկում է Արցախի ժողովրդագիտության երեք բնագավառներին՝ ազգագրությանը, բանահյուսությանը և բարբառին վերաբերող և առնչվող այն հիմնական ուսումնասիրությունները, ժողովածուները, հոդվածները, գիտական զեկուցումները, ճանապարհորդական նոթերը, հուշագրությունները և այլ նյութերը, որոնք գրառվել ու հրատարակվել են հայ և օտարազգի տարբեր ազգագրագետների, բանագետների ու բանահավաքների, բարբառագետների, այլ բնագավառների գիտնականների, հասարակական ու եկեղեցական գործիչների, ճանապարհորդների, գրողների, Շուշի քաղաքի և որոշ գյուղերի ուսումնական հաստատությունների ուսուցիչների ու տեսուչների կողմից 19-րդ դարի կեսերից առ այսօր» (էջ 3):

Փաստորեն, նման մի գրքի հատոր առ հատոր հրապարակումը այլ բան չէ, քան ամբողջացում մեկ ընդգրկուն թեմայի, որ վերաբերում է հայ իրականության մի ամբողջական մասի հոգևոր արժեքների՝ տարբեր ժամանակներում կատարվածի վերհանմանը, գնահատությանը, այսօր էլ՝ ամբողջացմանը:

Այդ ամբողջացումը տքնաջան աշխատանքի արդյունք է, արժանի ամեն կարգի դրվատանքի ու գովասանքի՝ իսկական բանասիրական-գիտական ներդրում հայ գրավոր մշակույթի այդ անդաստանում, ի սպաս հետագա սերունդների իմացության և ուսումնասիրողների ձեռնարկելիք գործի:

Հիշյալ հատորներում ընդգրկված նյութերը, ըստ գիտությանը հայտնի լինելու հանգամանքի, երկու կարգի են՝ նախկինում, տարբեր ժամանակներում լույս տեսած բանահյուսական աշխատանքներ, և նորերը, իսկ ըստ բովանդակության՝ մշակույթ, բանավոր խոսք ու ասք, իմաստություն ու վարք, առավել ևս՝ բարբառ:

¹ «Արցախի ժողովրդագրությունը», Ստեփանակերտ, 2022, հ. 10 (Բանահյուսություն), Արցախի պետ. համալս. հրատ., 794 էջ: Նույնը՝ 2023, հ. 11 (Բանահյուսություն), Արցախի պետ. համալս. հրատ., 792 էջ: Նույնը՝ 2023, հ. 12 (Բանահյուսություն), Արցախի պետ. համալս. հրատ., 768 էջ:

10-րդ հատորում ընդգրկված են դեռևս 1971 թ. լույս տեսած «Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը»՝ Մ. Գրիգորյանի աշխատասիրությամբ, և Ա. Ղազինյանի «Արցախ» («Հայ ազգագրություն և բանահյուսություն, նյութեր և ուսումնասիրություններ», հ. 15, Ե., 1983) աշխատությունները:

11-րդ հատորը ներառում է բանահավաք Լ. Հարությունյանի «Նըշխարներ Արցախի բանահյուսության»՝ հինգ գրքով (գիրք 1, Ե., 1991, գիրք 2, Ստեփանակերտ, 2004, գիրք 3, Ստեփանակերտ, 2007, գիրք 4, Ստեփանակերտ, 2009, գիրք 5, Ստեփանակերտ, 2011) լույս տեսած աշխատությունը:

12-րդ հատորում «ընդգրկված է Ա. Սարգսյանի «Արցախի բանահյուսությունը» (Երևան, 2015, 784 էջ) ժողովածուն» (տե՛ս սույն հատորի էջ 4): Այն բաժանված է երեք (թեմատիկ՝ բովանդակային) բաժին հանդիսացող բանահյուսության՝ վիպական, քնարական և ասույթաբանական, ընդ սմին՝ վիպական են համարվում ժողովրդական հեքիաթները, ավանդությունները, առակները և զվարճախոսությունները, քնարական են խաղիկները և «չափածո այլ ստեղծագործությունները», ասույթաբանական՝ առած-ասացվածքներն ու անեծքները, օրհնանքներն ու բարեմաղթանքները, շուտասելուկները և այլն: Հեղինակը, ինչպես կարելի է նկատել, հանդես է բերել բանամահյուսական ու ժանրային (տեսակային) յուրօրինակ դասակարգում, որ ավանդականի հետ աչքի է ընկնում նոր մոտեցումով:

Այս գիրքը, ի տարբերություն, տվյալ դեպքում, մյուս երկուսի, որ թեկուզ առանձին լույս տեսածի վերահրատարակում է, ամբողջությամբ նորություն է ոչ միայն հայ բանագիտության, այլև, հարկ ենք համարում ընդգծել, բարբառի տեսանկյունից: Նրանում հեղինակը հանդես է բերել նյութի հանդեպ մեծ հոգածություն, իրազեկություն, նյութի քննության մանրամասնություն և համակողմանիություն, այն շարադրանքի և ներկայացման համար անդուլ աշխատանքի արգասիք է: Նրանում ընթերցողը կգտնի տարածքի հոգևոր մշակույթի («բանահյուսության») վերաբերյալ, ինչպես ասում են՝ ամեն ինչ, ստույգ ու վստահելի ոչ միայն ընթերցողի, այլև թեմատիկ ուսումնասիրողի համար:

Այս գրքերի նյութերում, ինչ խոսք, մեզ առավել գրավողը լեզուն է, բարբառի յուրահատկությունները (բարբառին նվիրված է հ. 14-ը):

Ղարաբաղի բարբառը հայերենի խոշոր բարբառներից է, ունի հատկանիշների զգալի տարբերություններ, որոնք հատկապես տարա-
ժամանակյա կտրվածքում ներկայացնում են որոշակի հետաքրքրություն:
Այդ բարբառը իր ենթաբարբառներով և խոսվածքներով ուսումնասիր-
ված է թե՛ մենագրական աշխատություններում, թե՛ գիտական հոդված-
ների ձևով: Բարբառին տիրապետող և բուն ուսումնասիրողների (Ղա-
րաբաղի բարբառի մասնագետների) կարծիքով լեզվական այդ տար-
բերակի շատ երևույթներ դեռևս մնում են քննելի:

Տարբեր տարիների իմ այս կամ այն աշխատանքի բերումով ես
հարկ եմ ունեցել առնչվելու այս հատորներում տեղ գտած աշխատու-
թյուններին, որոնք այս տեսքով, վերստին ուշադրության առնվելու հա-
մար պետք է սովորական իմաստով, պարզապես շնորհակալ լինել
կազմողին, հրատարակողներին նմանը քիչ ունեցող ու ամբողջական մի
գործի համար:

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄՆԵՐ

Անվանի հայագետ Մանուկ Աբեղյանը ծնվել է 1865 թ. մարտի 17-ին Երբեմնի հայանիստ Նախիջևանի Աստապատ գյուղում, ուսում է առել ոչ միայն Հայաստանում, այլև Գերմանիայում, գիտական լայն գործունեություն է ծավալել իր հայրենի բնօրրան Հայաստանում՝ անցյալ դարի առաջին կեսի հումանիտար գիտությունների ամենաճանաչված հիմնականություններում՝ համալսարան, ակադեմիա: Նա եղել է լայն գիտելիքների տեր մտավորական և անմնացորդ նվիրյալ իր երկրին ու նրա առաջընթացն ապահովող գիտությամբ:

Աբեղյանը նոր էջ է բացել հայ բանահավաքչության և բանագիտության, հայ հին ու նոր գրականության և հայերենի տեսության հարցերի լուծումներում՝ իմացության նոր շնչով և մտածողության յուրովի մղումներով:

Չկա նոր ժամանակների հայերենագիտության որևէ բնագավառ, որտեղ իր՝ աբեղյանական խոսքն ասած չլինի գիտության այդ մեծ մշակը: Նրա գրքերը իր օրերին և հետագայում տպագրվել են առանձին և «Երկեր» վերնագրված հատորներով: Նրա մասին գրել և գնահատության փորձեր են եղել մի շարք առիթներով, շատ հայագետների, լրագրող-հրատարակախոսների, գրողների կողմից: Նրա բանագիտական վաստակին հատուկ մենագրություն է նվիրվել, նրա՝ արդի հայերենի տեսության վերաբերյալ կա արժեքավոր աշխատություն: Մեծ հայագետի գիտական վաստակը բազմիցս, տարբեր առիթներով գնահատվել է:

Եվ ահա հրատարակի վրա նրա իմաստային, ինչ-որ տեղ նեղված կյանքին և վաստակին վերաբերող մի շատ ուշագրավ գիրք՝ «Ուշարձան Մանուկ Աբեղյանին» (Ե., ԵՊՀ հրատ., 2023, 324 էջ), հիրավի մի նոր հիշողություն՝ հնից և նորի համատեղ կազմված (շնորհակալ գործ է կատարել պրոֆ. Ա. Աբաջյանը):

Լավ հրատարակությամբ երևան եկած այս ժողովածուն, բացի առաջաբանից, ներառում է երեք մաս՝ «Աբեղյանը ժամանակակիցների հայացքով» (էջ 21-128), «Մանուկ Աբեղյան գիտնականը» (էջ 129-154), մեծ գիտնականին և նրա գործին առնչվող «Գիտական հոդվածներ» (155-322): Ընդ սմին այդ մասերից, օրինակ, 3-րդը բաժանված է երեքի՝ լեզվաբանություն, գրականագիտություն, մանկավարժություն, որոնցում քննվում են Աբեղյանի ահռելի ժառանգության գնահատության հարցեր:

Իսկ ի՞նչ հողվածներ են, որ նվիրված են հայ մեծանուն հայագետի կյանքին և նրա գիտական ժառանգությանը, ո՞վքեր են դրանց հեղինակները:

Առաջինի պատասխանը պարզ է, ուստի նշելու կարիք չկա, իսկ երկրորդը՝ հետաքրքրիչ է: Ներկայանում են անվանի գրողներ և տարբեր բնագավառների գիտնականներ, ժամանակի գիտական հանդեսների և մամուլի աշխատողներ (հոբեյանական և այլ առիթներով), մեր օրերի բանասերներ՝ գրականագետ կամ լեզվաբան, որպիսով ամբողջանում է մեծն Աբեղյանի դիմապատկերը հայ նոր մշակույթի ֆոնին:

Նման գիրք ունենալը և ընթերցելը, առավել ևս՝ եթե գիտության մարդ ես, քո աշխատանքներում այն նկատի առնելը կարևոր է և նպաստավոր:

ԲԱՐՔԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Գաղտնիք չէ, որ հայ բարբառների գիտական ուսումնասիրությունը միշտ եղել է հայ լեզվաբանության կիզակետում՝ անկախ սերնդափոխությունից, տեսական հայացքներում տեղի ունեցած փոփոխությունից, նոր բարբառներ «հայտնաբերելու» և նկարագրելու, նույնիսկ դասակարգելու մտահոգությունից: Նման առանձնացում և թվարկում կարելի է հարասել: Այս հարցերի շուրջ հայ բարբառների ուսումնասիրությունը, ինչ խոսք, հասել է մեծ նվաճումների:

Սակայն հայ բարբառագիտությունը առավելապես ընթացել է ստատիկ-նկարագրական, քան տեսական-ճանաչողական վերլուծության ճանապարհով: Նույնիսկ այդ դրվածքի հաղթահարմանն ուղղված գիտական փորձերը, այնուամենայնիվ, չեն խախտել, չեն փոխել բուն ուղղվածությունը: Նույնպիսի դրվածքով էլ հայտնի են բուհական մի շարք դասագրքեր, նույնիսկ գործնական աշխատանքների ձեռնարկներ. տասնամյակներ շարունակ բարբառագիտություն է ավնադվել հատկապես Ա. Ղարիբյանի և Ա. Գրիգորյանի, վերջերս նաև՝ Ա. Պողոսյանի բուհական դասագրքերով:

Ուստի հայ բարբառների տեսական, մշակութային հենքով քննությունը շարունակում է մնալ արդիական: Նկատի ունենանք, որ հնդեվրոպական լեզուների նորագույն ուսումնասիրություններում բավականին տեղ է տրվում հայ բարբառների տարբեր կարգի տվյալներին՝ տեսական հարցադրումների մեջ:

Վերջին տարիներին ևս գրվում են ավանդական բարբառագիտական բնույթի աշխատություններ: Այստեղ կա մանրամասնում, մի կողմից՝ վերահրատարակվում կամ տպագրվում են անցյալից մնացած ձեռագիր կամ տպագրված աշխատանքներ, մյուս կողմից՝ քննության են առնվում այս կամ այն բարբառին բնորոշ ավելի մասնավոր հնչյունական, քերականական, իմաստային (թեմատիկ) երևույթների վերաբերյալ հոդվածներ, կարդացվում են նույնպիսի զեկուցումներ: Դրան գումարած այն, որ բարբառագետների ներկայիս սերունդը թեմա է ընտրում ոչ թե այս կամ այն բարբառը, այլ տարածաշրջանային բարբառները, որոնց քննությունը ինչքան էլ մասնավոր, այնուամենայնիվ մնում է խիստ ավանդականի և նկարագրականի սահմաններում:

Եվ այսպես, լույս է տեսել ևս մի նոր, բավականին ծավալուն, ըստ այդմ՝ ուշագրավ աշխատություն հայ բարբառների կոնկրետ մեկ տարածաշրջանի քննության վերաբերյալ¹:

Աշխատանքն ունի մանրամասն բաժիններ՝ «Երկու խոսք» (էջ 6-8), ներածություն (էջ 29), երեք գլուխ՝ հնչյունաբանություն (էջ 30-120), ձևաբանություն (էջ 121-251), բառագիտություն (էջ 252-289), այնուհետև՝ ամփոփում (290-308), ընդարձակ հավելված, որ ներառում է, ինչպես հեղինակն է ձևակերպում, զուգաբանությունների աղյուսակներ (էջ 309-328), հոլովման և խոնարհման հարացույցներ (էջ 329-357), լեզվական նմուշներ (իմա՝ բնագրեր)(էջ 358-409), առած-ասացվածքներ (էջ 410-418), բարբառային բացատրական բառացանկ (էջ 419-555), տեղեկատու բարբառախոսների (էջ 556-559), անգլերեն և ռուսերեն բացատրագրեր («ամփոփումներ») (էջ 560-565), քարտեզներ (էջ 566-574), գրականություն (էջ 577-589): Նման վերնագրերի (ու չբերված ենթավերնագրերի), հայտնի է, կարող ենք հանդիպել հայ բարբառներին նվիրված գրեթե ցանկացած աշխատության մեջ (բացառությամբ՝ բառապաշարի, որ ա յս դեպքում չկա):

Ինչպես նկատում ենք, այս դեպքում նույնպես ուսումնասիրությունը ավանդական է և խստագույնս հետևողական հայ բարբառների նկարագրության քննության մեջ: Ավելանում է այն, որ հիմնական նյութ տրամադրած բարբառները՝ ընդհանուր լեզվի առնչությամբ ժամանակի ընթացքում բավականին փոփոխություն կրած, այս դեպքում ուշադրության առարկա են, այսպես կոչված, տարածքային («տարածաշրջանային») կտրվածքով, որ նույնպես ինքնին գնահատելի է:

Գ. Գ. Մկրտչյանի սույն գիրքը, ինչպես որ այլ, նաև նման ուղղվածությամբ գրված աշխատությունները, իրոք, արժանի են ուշադրության, թերևս, ամենից առաջ հայերենի բարբառների ամբողջական ուսումնասիրության համար:

Վ. Գ. Հ.

¹ Գ. Գ. Մկրտչյան, Քննություն Ապարանի տարածաշրջանի բարբառային և խոսվածքային տարբերակների, Ե., «Արմավ» հրատ., 2023, 612 էջ:

26/06/2023

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնի հերթական նիստը որոշ առումով ուղենշային էր: Վերջին մի քանի տասնամյակների ընթացքում հայերենի բարբառների ուսումնասիրվածության հարցը քննարկման նյութ դարձնելով՝ փորձառու բարբառագետներն առաջարկեցին առանձնացնել բարբառների երեք խումբ՝ ա) բարբառներ, որոնց հետազոտության արդյունքները ներկայացված են մենագրական աշխատանքներում, բ) բարբառներ, որոնց ուսումնասիրությունները ներկայացված են հոդվածներով ու զեկուցումներով, գ) բարբառներ, որոնց վերաբերյալ հետազոտական աշխատանքներ չեն հրատարակվել: Նշվեց, որ կան բարբառային միավորներ, որոնք ոչ միայն ուսումնասիրված չեն, այլ նաև դրանց վերաբերյալ չկան անհրաժեշտ նյութեր, նմուշներ, և, ցավոք, արդեն չկան նաև բարբառակիր-բարբառախոսներ:

Դիտարկվեց նաև բարբառային բառապաշարի իմաստային խմբերի ուսումնասիրության հարցը: Նկատվեց, որ նման շատ

խմբեր դեռևս սպասում են իրենց ուսումնասիրողներին:

Անդրադարձ եղավ բարբառների դասակարգման խնդրին, նշվեց, որ ժամանակն է այդ հարցում կատարելու որոշ ճշգրտումներ: Այլ խոսքով՝ մեր ձեռքի տակ եղած բարբառային մեծաքանակ նյութերի դասդասման և ուսումնասիրության աշխատանքներին զուգահեռ պիտի շարունակվի նաև խոսվածքային նոր միավորների փնտրությունը:

26/06/2023-10/08/2023

Ա. թ. հուլիսի 26-ից օգոստոսի 10-ը ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատող Մերի Սարգսյանը գործուղվել է Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն՝ Պեկինի չինարեն լեզվի միջազգային քոլեջ, որտեղ որպես ՀՀ ներկայացուցիչ մասնակցել է «Չինարեն լեզու և մշակույթ» խորագրով զարգացող երկրների ներկայացուցիչների համար կազմակերպված սեմինար-վերապատրաստմանը:

Սեմինար-վերապատրաստման թեմատիկան բավականին ընդգրկուն և լայն է եղել՝ Չինաստանի

ընդհանուր դրությունը, չինարենի գործնական դասեր, «Գոտի և ճանապարհ» նախաձեռնություն. չինական քաղաքականություն, Չինաստանի կառավարման համակարգը, չինական վուշույի արվեստը, Պեկինի քաղաքային մշակույթը, չինական փառատոների մշակույթը, Չինաստանի տուրիզմի մշակույթը, չինական մեդիա և հասարակություն և այլն:

Երկշաբաթյա գործուղման ընթացքում այցելություններ և պաշտոնական հանդիպումներ են եղել Պեկին և Գուանչժոու քաղաքներում, մասնավորապես՝ Պեկինի չինարեն լեզվի միջազգային քոլեջ, Պեկինի Ճյումեն Հոնյի մշակույթի տուն, Հուոսիան գյուղ, Մայձըոյան մշակութային միություն, Պեկինի տեխնոլոգիական համալսարան, Գուանչժոուի թանգարան, GAC գիտության և տեխնիկայի թանգարան, Չինական Մեծ պատ:

Հանդիպումները բավականին արդյունավետ էին և երկարաժամկետ, կարևոր համագործակցության սկիզբ են դարձել: Քննարկվել են նաև համագործակցության հնարավորությունները և խնդիրները: Մերի Սարգսյանը սեմինար-վերապատրաստմանը մասնակցելու համար ստացել է երկու հավաստագիր՝ շնորհված Չինաս-

տանի Ժողովրդական Հանրապետության առևտրի նախարարության, ինչպես նաև Պեկինի չինարեն լեզվի միջազգային քոլեջի կողմից:

29/06/2023

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի կիրառական լեզվաբանության բաժնի նորաբաց լաբորատորիայում ս.թ. հունիսի 29-ին տեղի ունեցավ հերթական սեմինարը, որը նվիրված էր հումանիտար ոլորտում առկա գիտաչափական խնդիրներին: Սեմինարի մասնակիցները ծանոթացան բարձր վարկանիշային պարբերականներում հոդված հրատարակելու նախապատրաստական աշխատանքների նեղ ոլորտային նրբություններին, արտասահմանյան գործընկերների հետ մասնագիտական կապեր հաստատելու ուղիներին ու եղանակներին, լսեցին հայկական և արևմտյան գիտական «սովորույթների» տարբերությունների և ընդհանրությունների մասին: Սեմինարը վարում էր բաժնի գիտաշխատող, ք.գ.թ. Ս. Հովհաննիսյանը

04/07/2023

Լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնի հերթական նիստերից յուրաքանչյուրն ա-

ռանձնանում է հայ բարբառների ուսումնասիրությանն ուղղորդված մի նոր ու հետաքրքիր նախաձեռնությամբ:

Նկատի ունենալով վերջին տասնամյակի ընթացքում սիրիահայության մեծ հոսքը Հայաստանի Հանրապետություն՝ բաժնի աշխատակիցները արդիական խնդիր են համարում իրենց մայրենի բարբառի պահպանությանը նախանձախնդիր ներգաղթյալներից նրանց մայրենի խոսվածքների գրառումը՝ համեմատելու համար տասնամյակներ առաջ ըստ հատուկ ծրագրի Սիրիայի Քեսաբ քաղաքում գրառված և լեզվի ինստիտուտի արխիվում պահվող նյութերի հետ: Հայ բարբառների համապատկերն ունենալու հարցում դա, անկասկած, ունի կարեվոր նշանակություն:

18/08/2023

Հայերենի բարբառների արդի վիճակի ուսումնասիրության պետական ծրագիրը ՀՀ Շիրակի մարզում իրականացնելու ընթացքում բարբառագիտության բաժնի գիտաաշխատակիցներն արդեն իսկ այցելել են մարզի 75 բնակավայրեր՝ կատարելով գրառումներ, ձայնագրություններ և տեսագրություններ՝ հետագայում դրանք դասդասելու և համապատասխան եզրահանգումներ անելու համար,

այսինքն՝ հավաքչական աշխատանքների եռուն շրջան է մեզ համար՝ դժվարին, բայց շատ հետաքրքիր ու արդյունավետ:

22/09/2023

Լեզվի ինստիտուտը և Գավառի պետական համալսարանը վերսկսում են լեզվական հարցերին նվիրված ամենամյա առցանց քննարկումները, որոնց սիրով մասնակցում են ոչ միայն մասնագետ լեզվաբանները, այլև ուսուցիչները, ուսանողները, բարձր դասարանների աշակերտները և բոլոր նրանք, ովքեր հետաքրքրվում են հայոց լեզվի հարցերով:

Նոր ուսումնական տարվա առաջին առցանց քննարկումը տեղի ունեցավ սեպտեմբերի 16-ին, որին մասնակցում էին լեզվի ինստիտուտի և ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի աշխատակիցները, ուսանողներ, ինչպես նաև Արմեն Միքայելյանը Ֆրանսիայից:

Քննարկման սկզբում լեզվի ինստիտուտի տնօրեն բ. գ. դ. Վ. Կատվայանը, անդրադառնալով նախորդ տարվա հանդիպում քննարկումների նկատմամբ դրսևվորված հետաքրքրությանը և բարձր գնահատելով դրանց արդյունավետությունը, անհրաժեշտություն համարեց այսուհետև

և ապահովել դրանց շարունակականությունը:

Քննարկվող հարցերի շրջանակը բավականին լայն էր: Պարզաբանվեցին պետական, պաշտոնական, գրական լեզուների, բարբառների սահմանազատման և կիրառության հետ կապված արդիական հարցեր, ներկայացվեցին հայերենի, մասնավորապես՝ արևելահայերենի և արևմտահայերենի հնչյունական համակարգերի համեմատական բնութագրերը, շոշափվեցին բուհական և հանրակրթության ոլորտներում լեզվի ուսուցման հետ կապված հարցեր, մտահոգություններ արտահայտվեցին, որ հայոց լեզվի դպրոցական ծրագրերում գրաբարը, բարբառները, արևմտահայերենն ըստ էության ընդգրկված չեն, չնայած առանձին հեղինակներին ուսումնասիրելու համար խիստ անհրաժեշտություն է զգացվում որոշակի գիտելիքներ ունենալ հայերենի դրսևորումների հնչյունական, բառապաշարային և քերականական առանձնահատկությունների մասին:

Քննարկմանը մասնակցեցին Ա. Միքայելյանը, Վ. Ներսիսյանը, Թ. Ասոյանը, ԳՊՀ ուսանողներ Ա. Պողոսյանը, Լ. Սեյրանյանը և ուրիշներ: Քննարկումը վարեց և ամփոփեց Վ.Կատվայանը: Քըն-

նարկումն անցավ ակտիվ բանավիճային մթնոլորտում:

17/11/2023

2023թ. նոյեմբերի 2-3-ը ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում կայացավ «Հայոց լեզվի պատմության հիմնախնդիրներ» խորագրով միջազգային գիտաժողով, որ նախաձեռնել էր հայոց լեզվի պատմության բաժինը: Գիտաժողովին մասնակցում էին Հայաստանի ուսումնագիտական տարբեր հաստատությունների գիտնականներ (ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտ, ԵՊՀ, «Տաթև» գիտակրթական համալիր, Մ. Մաշտոցի անվան Մատենադարան), ինչպես նաև հետազոտողներ ԱՄՆ-ից, Ֆրանսիայից և Չինաստանից: Գիտաժողովի աշխատանքներն ընթացան առկա և առցանց ձևով:

Իր բացման խոսքում ինստիտուտի տնօրեն Վ. Կատվայանը կարևորեց հայոց լեզվի պատմական զարգացմանն առնչվող ուսումնասիրությունների դերը գիտության առաջընթացի և գիտական ձեռքբերումների լուսաբանման տեսանկյունից:

Գիտաժողովում եղած զեկու-

ցումներն աչքի ընկան թեմատիկ բազմազանությամբ՝ ընդգրկելով հայոց լեզվի պատմության տարբեր փուլերի և խնդիրների առնչվող հարցեր:

Ձեկուցումների մեծ մասը վերաբերում էր հայոց լեզվի կառուցվածքի բոլոր մակարդակների՝ հնյունաբանության, բառագիտության, ձևաբանության, իմաստաբանության պատմական քննությանը:

Պատմական հնյունաբանությանն էին առնչվում «Հայերենի ը ձայնավորի մասին» (Վ. Կատվալյան), «Ու երկագիր տառի ոսկեդարեան արտասանության խընդրի շուրջ» (Ա.Միքայելյան. Ֆրանսիա), «Անվանական հիմքը և անշեշտ դիրքում ձայնավորների սըղումը ուրարտերենում» (Ս.Այվազյան) զեկուցումները:

Ձեկուցումների մի ամբողջ շարք նվիրված էր գրավոր հուշարձանների լեզվական և բանասիրական քննությանը: Ուշագրավ էին նորակազմ բառերը XII-XIII դդ. ձեռագիր բառարաններում (Ն. Հովհաննիսյան), անձնական դերանունների որոշ առանձնահատկությունների բացահայտումը (Մ. Ֆելեքյան), XII-XIII դդ. երկերում օտար բառերի գործածության դեպքերի քննությունը (Վ.Խաչատրյան), խոսքիմասային ան-

ցումների դրսևորումները միջնադարյան բժշկարաններում (Հ.Թադևոսյան), իրավագիտական և կրոնական տերմինների հետազոտությունը Դավիթ Վարդապետի «Կանոնական արէնսդրութիւն» երկում (Ն. Դիլբարյան), Գ.Տաթևվացու գրական ժառանգության մի շարք իրավական հասկացությունների առկայությունը հայերենի բարբառներում (Ս. Գրիգորյան), Ա. Սանահնեցու «Մեկնութիւն Մատթէի Աւետարանի» երկի գրաբարյան դարձվածային միավորների ուսումնասիրությունը:

Ելույթ ունեցողները բնագրագիտական հետազոտությամբ պարզաբանում էին գրավոր աղբյուրների ստեղծման ժամանակաշրջանի, կառուցվածքի, նախօրինակների և լեզվական առանձնահատկություններին առնչվող խնդիրներ:

Հայոց լեզվի պատմության նախորդ փուլերի բառապաշարի և քերականական որոշ իրողությունների ուսումնասիրության տեսանկյունից առանձնանում էին գոյականի սեռի քերականական կարգին առնչվող դիտարկումը հայերենում (Գ. Մխիթարյան), միջին հայերենի պարբերափուլերի գիտական ըմբռնումներին (Գ. Մկրտչյան) վերաբերող զեկուցումները:

Պատմական բարբառագիտության հարցեր էին արծարծվում Լ. Հովհաննիսյանի զեկուցումներում՝ նվիրված՝ Ղարաբաղի (Արցախի) բարբառի գործիական հոլովի դրսևորման առանձնահատկություններին և ցուցական դերանունների կիրառությանը:

Քննարկվեցին պատմական տարբեր ժամանակաշրջաններում հայերենի և այլ լեզուների շփումների և փոխհարաբերությունների հարցեր: Այդ տեսանկյունից առանձնացան Ոսկան Երևանցու քերականության սահմանումների լատինական նախօրինակներին վերաբերող (Տ.Սիրունյան), խեթերենից հայերենին անցած որոշ փոխառությունների (Հ. Հմայակյան) և մուսուլմանական ծագման հայկական անձնանուններին վերաբերող զեկուցումները (Տ. Միքայելյան):

Ուշագրավ էին բառաքննությանը և ստուգաբանությանն առընչվող դիտարկումները: Հետաքրքիր էր Հ. Զաքարյանի՝ «փոքրավոր» և «ծագ» իմաստներով մի քանի բառերի ստուգաբանությունը: Հայերենի բարբառներում ժողովրդական ստուգաբանությամբ հնչյունափոխված անձնանունների մասին ինքնատիպ զեկուցում ներկայացրեց Ա. Վարդանյանը:

Առանձնանում էին նաև արև-

մտահայերենի քերականությանը՝ մասնավորապես խնդրառության հարցեր (Ա.Ֆիշենկ-ճեան, Ս.Տիոյան), ինչպես նաև հայերենի գրական երկու տարբերակների բառապաշարի ընդհանրություններին և տարբերություններին վերաբերող հետաքրքիր նկատառումներ (Ս. Տիոյան, Զ. Խալիկեան):

Զեկուցումների շուրջ ծավալվեցին գիտական քննարկումներ, արծարծվեցին տարբեր կարծիքներ և տեսակետներ:

Գիտաժողովն ամփոփեց լեզվի ինստիտուտի տնօրեն Վ.Կատվայանը: Նա նշեց, որ այս գիտաժողովը ևս մեկ անգամ համախմբեց Հայաստանի գիտության ոլորտի մասնագետներին՝ ստեղծելով մասնագիտական զրույցների ու քննարկումների, մտքերի և փորձերի փոխանակման բարենդպաստ միջավայր:

Հնչած զեկուցումները հազեցած էին փաստական հարուստ նյութով, գիտական վերլուծությունները մեծ մասամբ համոզիչ էին: Որոշ հարցեր ստացան նոր լուծումներ, և ըստ այդմ՝ նորովի անդրադառնալով հայոց լեզվի պատմության արդի հիմնախնդիրներին: Հատկանշական է նաև այն, որ վաստակաշատ լեզվաբանների կողքին իրենց խրախու-

սելի քայլերն են անում երիտասարդ մասնագետները, որոնց զեկուցումները գնահատելի էին նյութի բավարար իմացության և գիտական ճիշտ վերլուծության տեսանկյունից:

23/11/2023

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կիրառական լեզվաբանության բաժնում տեղի ունեցավ էլեկտրոնային պաշտոնական հաղորդակցման յուրահատկություններին և ժամանակակից տեխնոլոգիաներից օգտվելու եղանակներին նվիրված սեմինարների շարքի 3-րդ սեմինարը: Այն նվիրված էր էլեկտրոնային բառարաններից օգտվելու հմտություններին: Սեմինարը բացվեց բաժնի վարիչ, ք. գ. թ. Գ. Գրիգորյանի խոսքով: Նա մանրակրկիտ և բազմաբնույթ դիտարկումներ ներկայացրեց բառարանագրության մեջ թվայնացման վերաբերյալ: Լեզվի ինստիտուտի բառարանագրության բաժնի կրտսեր գիտաշխատող Վ. Բաղդամյանը ներկայացրեց էլեկտրոնային բառարանների ստեղծման նպատակները, սկզբունքները և խնդիրները:

Սեմինարի 3-րդ բանախոսի՝ լեզվի ինստիտուտի արևմտահայերենի բաժնի կրտսեր գիտաշ-

խատող Հ. Մարաշյանի ելույթը «Թվայնացման դարաշրջան. դրականն ու բացասականը» խորագրի շրջանակում էր:

Կիրառական լեզվաբանության բաժնի գիտաշխատող, ք. գ. թ. Ս. Հովհաննիսյանը ամփոփեց սեմինարը՝ ներկայացնելով բառարանների առաջացման և զարգացման պատմությունը հնագույն ժամանակներից մինչև մեր օրեր:

Հիմնական ելույթներին հաջորդեց ընդհանուր քննարկումը, որի ընթացքում ներկայացվեց և վերլուծվեց ժամանակակից բարձրագույն տեխնոլոգիաների ընդհանուր ազդեցությունը մարդկային մտածողության, մտավոր աշխատանքի որակի և արագության վրա:

Սեմինարին ներկա էին ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի տարբեր բաժինների գիտաշխատողներ, ասպիրանտներ, ինչպես նաև ՀՊՄՀ-ի հենակետային վարժարանի սաները:

24/11/2023

Կայացավ «Շիրակը հայոց բառ ու բանի գանձարան» խորագրով միջազգային գիտաժողովը, որ կազմակերպել էր ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտը՝ գործակցությամբ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի, Շիրա-

կի հայագիտական հետազոտությունների կենտրոնի և Շիրակի պետական համալսարանի՝ նպատակ ունենալով նպաստելու Շիրակի տարածաշրջանի բարբառային ու բանահյուսական հարուստ նյութերի համակողմանի հետազոտության գործին՝ պատմական և համաժամանակյա դիտակետերով:

18/12/2023

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կիրառական լեզվաբանության բաժնում տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ գիտությունների ազգային ակադեմիայի հիմնադրման 80-ամյակի առթիվ նախատեսված սեմինարներից վերջինը: Այն նվիրված էր էլեկտրոնային որոնման համակարգերում մասնագիտական գրականություն փնտրելու սկզբունքներին և էլեկտրոնային ձևաթղթերում մեծ ծավալի տեղեկատվության ավտոմատ մշակմանը:

Սեմինարի բանախոսներն էին ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի կիրառական լեզվաբանության բաժնի վարիչ Գ. Գրիգորյանը և բաժնի գիտաշխատող Ս. Հովհաննիսյանը:

Գ. Գրիգորյանը ներկայացրեց վիճակագրական լեզվաբանության գլխավոր սկզբունքների և հետազոտության արդյունքում ձևավորված տեղեկատվության մշակման հիմունքները: Ս. Հովհաննիսյանը ներկայացրեց գիտական գրականության որոնման և զըտման աշխատանքի հմտությունները էլեկտրոնային շտեմարաններում և որոնման հիմնական համակարգերում: Սեմինարն ավարտվեց կիրառական բնույթի հավելյալ հարցերի քննարկումով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|-----|
| Խ մ ք ա գ ռ ա կ ա ն. Հանդեսի լույս ընծայման 20-ամյակի առթիվ..... | 3 |
| Մատենագիտություն «Լեզու և լեզվաբանություն» հանդեսի (2003-2023 թթ.)..... | 7 |
| ՀՈԴՎԱԾՆԵՐ | |
| Համբարձումյան Վ. Գ. Հայերեն ստուգաբանություններ..... | 26 |
| Ֆելեքյան Մ. Հ., Հայերենի ածանցների համանունության մասին..... | 45 |
| ԲԱՆԱՎԵՃ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ | |
| Բարսեղյան Ա. Գ. Շարահյուսական կապակցման եղանակների դրսևորումը արդի գեղարվեստական արձակում..... | 53 |
| Գալստյան Ա. Վ. Աշտարակ տեղանվան նկարագրության լեզվական հիմքերը գեղարվեստական խոսքում..... | 64 |
| Մեսրոպյան Հ. Հ., «Հոգի» և «հոգեհաց» հասկացությունների անվանումների բարբառային համարժեքները..... | 75 |
| ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ | |
| Գրիգորյան Ս. Մ. Գրիգոր Տաթևացու նորակազմ բառերի իմաստային քննություն..... | 92 |
| Խիզանցյան Ա. Մ., Ռազմական ավիացիայի տերմինաբանությունը (պատմական քննություն) | 104 |
| ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ | |
| Խաչատրյան Վ. Մ., Հայերենի դերի և ուսուցման վերաբերյալ կարևոր ուսումնասիրություն | 113 |
| ԳՐՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ..... | 117 |
| ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ | 125 |

СОДЕРЖАНИЕ

Редакционнав: К 20-летию публикации журнала–3. Библиография журнала «Язык и языкознание» (2003-2023 г.г.)- 7. **Статьи:** Амбарцумян В. Г., Армянские этимологии 26. Фелекян М. А., Об омонимии суффиксов (сколько суффиксов -ng (-оц) в армянском языке?)-45. **Дискуссии и обсуждения:** Барсегян А. Г., Применение видов синтаксических сочетаний в современной художественной прозе-53. Галстян А. В., Лингвистические основы описания топонима Аштарак в художественной

речи- 64. *Месропян А. А.*, Диалектные эквиваленты понятий душа и поминки-75. **С о о б щ е н и я:** *Григорян С. М.* Семантическое исследование новых слов Григора Татеваци-92. *Хизанцян А. М.*, Военная авиационная терминология: исторический комментарий (на материале заимствованных терминов) -104. **Р е ц е н з и я:** -113. **К н и ж н о е о б о з р е н и е** -117. **Н а у ч н а я ж и з н ь** - 125.

C O N T E N T S

Editorial: On the 20th anniversary of the journal's publication -3. Bibliography of the "Language and Linguistics" journal (2003-2023) -7. **A r t i c l e s:** *Hambardzumyan V. G.*, Armenian Etymologies -26. *Feleqyan M. H.*, About the Homonymy of Suffixes (Or how many Suffixes -ng (-ots) are there in the Armenian Language?) -45. **D i s c u s s i o n:** *Barseghyan A. G.*, Manifestations of Types of Syntactic Connections in Modern Fiction -53. *Galstyan As. V.*, Linguistic Bases of Description of Ashtarak Location Name in Artistic Speech-64. *Mesropyan H. H.*, Dialect Equivalents of the Concepts of Soul and Funeral -75. **R e p o r t s:** *Grigoryan S. M.*, Meaning examination of Grigor Tatevatsi's newly words-92. *Khizantsyan A.M.*, Military Aviation Terminology: Historical Commentary (Based on Borrowed Terms)-104. **R e v i e w:** -113. **B o o k r e v i e w s:** -117. **S c i e n c e N e w s:** -125.

Ի Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը հրատարակում է «Լեզու և լեզվաբանություն» հանդեսը, որի առաջին համարը լույս է տեսել 2003 թ.:

Մեր հասցեն՝ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ

ՀՀ, 3750015, Երևան, Լուսավորչի 15

Հեռ.՝ (+374 10) 565 337

Կայքէջ՝ www.language.sci.am

Էլ.փոստ՝ lezu.lezvabanutyun@gmail.com

К С В Е Д Е Н И Ю

НАН РА институт языка имени Р. Ачаряна издает журнал “Языкязыкознание”, первый номер которого был издан в 2003г.

Наш адрес: НАН институт языка имени Р. Ачаряна

РА, Ереван, Лусаворича 15

Тел.: (+374 10) 565 337

Веб. сайт: www.language.sci.am

Эл.-почта: lezu.lezvabanutyun@gmail.com

A C K N O W L E D G E M E N T

NAS RA language institute named after H. Acharyan is publishing afresh «Language and linguistics» magazine, the first number of which was published in 2003.

Our address: NAS language institute named after H. Acharyan

RA, Yeravan, Lusavorich 15

Phone: (+374 10) 565 337

Web page: www.language.sci.am

E-mail: lezu.lezvabanutyun@gmail.com

ԼԵՂՈՒ ԵՎ ԼԵՂՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ЯЗЫК И ЯЗЫКОЗНАНИЕ
LANGUAGE AND LINGUISTICS

2(29)

2023

Համարի հրատարակության պատասխանատու՝ Ս. Ե. Բաղրամյան

Ձևավորումը և էջադրումը՝
Մ. Հ. Խառատյանի

Կազմը՝ Ս. Ս. Արևշատյանի

Հրատ. պատվեր № 1061
Ստորագրված է տպագրության՝
Չափսը՝ 60x84¹/₁₆ տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 100 օրինակ:
Գինը՝ պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան,
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24: